



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.....	2
«ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ»Ի ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	2
ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ՈՅԺԸ.....	2
ՀԱՐՅԱԶՐՈՅՑ.....	5
«ԱԶԳԱՅԻՆ ԼԷԳԷՈՆ»Ի ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԻՊԱՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ	5
ԿԻՊՐԱՀԱՅ	10
ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.....	10
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	11
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՒԱՆԱԳԷՏ ԼԵՍԼԻ ՏԷՅՎԻՍ	11
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԿԱՅՈՂ.....	11
ՀԱԼԷՊ ԵՒ...Ո՞Վ ՊԻՏԻ ՈՐՈՇԷ	14
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ	17
ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԻՒՆԱԼԻ ՈՏԱՀԵՏՔԵՐԸ.....	17
ՀԵՌԱԿԱՅ ՍՐՏԲԱՅ ԶՐՈՅՑ.....	21
ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆԻՆ ՀԵՏ	21
ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ	26
ՏԵՍԱԿԷՏ	28
ԻՆՉՈ՞Ւ «ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ»	28
5. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ:.....	28
ՍՓԻՒՌՔ «ԱՆՏԵՍԵԼՈՒ» ՈՒ «ՄԵԿՈՒՍԱՅՆԵԼՈՒ».....	34
ՏԽՐԱՀՈՉԱԿ ՓՈՐՁԵՐ	34
ՍՈՒՏԸ, ՊԱՏԵՐԱԶՄ, ԽՈՅԵԼԻ	38
Խոցելի.....	41
ԷՐՏՈՂԱՆ ԿԸ ՇԱՀԱԳՈՐԾԷ ՈՒՔՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՅԱՌԱՋ ՍՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՐՔԻՈՑ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՄԻՈՒԹԵԱՆ	44
ՈՒՔՐԱՆԻՆ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶՈՀԱՄԵՂԱՆԻՆ	46
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	50
ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ.....	50
ՊՐԻՍՄԱԿԷՍ	55
ԱՐՈՒԵՍ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ.....	55
ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ	56
ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐԸ.....	56



ՄԵՏՐՈՊԵԱՆ ԲԱԳԻՆԻ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՌԱՖԱՅԷԼ ԻՇԽԱՆԵԱՆԻ.....59

ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ.....59

« ՇԷՆ ՄՆԱՔ, ՊԱՅԾԱՌ ՄՆԱՔ...».....62

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 64

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 67

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՍՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ»Ի ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՄԵՐ ՄԻՈՒԹԻՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ՈՅԺԸ



Տարագիր Սփիւռքահայութիւնը ինքնանպատակ գոյութիւն չէ: Այդ իսկ պատճառով, ան ինքնանպատակ չի կրնար գոյատեւել, եւ ոչ ալ այն ինքնախարեութեամբ՝ որ ինք կ'ապրի Հայաստանի Գ. Հանրապետութիւնը «մատակարարելու»:

Տարագիր Սփիւռքահայութեան գոյատեւումը պայմանաւորուած է իր յաւիտենապէս արդար, անժամանցելի Դատով եւ Արեւմտահայաստանի բռնագրաւուած հողերուն վերատիրանալու տեսլականով: Հայապահպանումը պայմանաւորուած է ու կ'իրականանայ այս երազով:

Դոկտ. Փրոֆ. ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ

Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընթացիկ տարին հռչակեց «ՍՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ» յատուկ Կոնդակով մը, ուր կան հետեւեալ դիպուկ տողերը.- «Կ'ուզենք կարեւորութեամբ ընդգծել, թէ այլևս չենք կրնար հիւժած կառոյցներով, գմռուած մտածողութեամբ, կաղապարուած մօտեցումներով, հնամաշ օրակարգերով Սփիւռքը վերակազմակերպել ու վերակենսաւորել: Սփիւռքը իր կառոյցներով ու օրակարգով, իր կանոնադրութիւններով ու գործելակերպերով պէտք է դառնայ համահունչ նոր ժամանակներուն ու մարտահրաւերներուն»:

Արդարեւ, Սփիւռքի կառոյցները միշտ ալ մնացին ինքնակեդրոն մտածելակերպով առաջնորդուող կառոյցներ: Անոնք չունեցան հաւաքական գիտակցութիւն, հաւաքական ամբողջութեան պատկանելիութիւն եւ տակաւ դարձան ինքնանպատակ կառոյցներ...: Տակաւին, մեր կուսակցապետերը, մեր կառոյցներու պատասխանատուները նոյնիսկ թափանցիկ չաշխատեցան եւ չեն աշխատիր, համարատու չեն զգար հայ հանրութեան: Ցաւ է նմանապէս յայտնել որ անոնք, մեծաւ մասամբ, կը նշանակուին հետեւեալ հիւանդագին



մտայնութեամբ.-«Կո՛յր ըլլայ, կա՛ղ ըլլայ, մեզմե՛ ըլլայ», դրսեւորելով այլամերժ հատուածականութեան ոգի: Եւ հայ կեանքը կը կաղայ, հայկականութիւնը կը խամրի, երիտասարդ տարրը կը հեռանայ հայ կեանքէն կամ անտարբեր է անոր նկատմամբ: Եւ սփիւռքը կը հալի օրէ ցօր:

Ա՛լ շատոնց ժամանակն է մեր մատը դնելու թարախակալած վերքին, վերքերուն վրայ եւ ճիշդ ախտանշումէ մը ետք, փորձել դարմանել զանոնք, յստակացնելով թէ ո՞ր ենք այսօր որպէս Սփիւռք եւ ո՞ր կ'երթանք...

Արդարեւ, Յեղասպանութենէն աւելի քան 100 տարիներ ետք, կարելի է հարց տալ, թէ արդեօ՞ք կրցած ենք ստեղծել՝ Սփիւռքի մէջ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՈՂՆՈՒԹԻՒՆ մեր հիմնահարցերուն շուրջ, ունի՞նք համահայկական մտահոգութիւններով առաջնորդող գիտակից եւ հեղինակաւոր ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ, եւ այդ կարծիքը բարձրաձայնող ԱԶԱՏ ՄԱՄՈՒԼ, որ ըլլայ ՎԵՐԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ եւ դառնայ ազդու հակակշիռ, տեսակ մը «Չորրորդ Իշխանութիւն»՝ ազգային կեանքին մէջ էական դերակատարութիւն ստանձնած աշխարհիկ թէ հոգեւոր իշխանութեանց գործունէութեան: Պատասխանը ժխտական է դժբախտաբար, որովհետեւ ազգային կեանքի ղեկավարութիւնը ստանձնած անձանց մեծամասնութեան մօտ՝ տակաւին կը յամենան նեղ-հատուածական, նեղ-խմբակային կամ նեղ-անձնական մտածելակերպն ու գործելակերպը, համահայկական լայնախոհ մտածողութեան փոխարէն:

Այսպէս, էական հարցադրումները կը շարունակեն մնալ եւ կը սպասեն բաղձալի լուծումներու: Հայագաղութներուն մէջ, պիտի շարունակե՞նք մատղաշ սերունդը դաստիարակել այնպէս, որ անոր ունեցած հաւատարմութիւնը՝ ակումբի մը, կամ կուսակցութեան մը թէ կազմակերպութեան մը, գերազանցէ այն հաւատարմութիւնը, զոր պարտի ան ունենալ համահայկական տեսլականին, զոր ցարդ չենք կրցած յստակօրէն տարազել, զայն անով սնուցանելու եւ դաստիարակելու համար...: Այլ խօսքով՝ թերացած ենք մեր նոր սերունդին մօտ կազմաւորել համահայկական ինքնութիւն եւ անկէ բխող համահայկական մտածողութիւն եւ գիտակցութիւն: Եւ ասիկա՝ դպրոցներէն ու ընտանիքներէն սկսեալ...:

Հատուածական այս նեղ մտածելակերպին հետ զուգընթաց, ներկայիս համաշխարհայնացման եւ օտարամոլութեան ահեղ հոսանքներուն անձնատուր, օրէցօր կը խամրին ու կ'աղճատուին հայեցի դիմագիծն ու նկարագիրը, կը նահանջէ մեր լեզուն, հայ Բառն ու Բանը...: Օտարը այսօր մեր լեզուին մէջ է, մեր բարոյական-աւանդական արժեհամակարգին մէջ, մեր վարք ու բարքին մէջ...: Մէկ խօսքով՝ մեր ինքնութեան եւ էութեան մէջ: Եւ հարց կը ծագի, թէ արդեօ՞ք, ի վերջոյ, մենք պիտի վերածուինք, Վազգէն Շուշանեանի դիպուկ բառերով, «անազգ փերեզակներու» անդիմագիծ, ուղեկորոյս եւ ապաքաղաքականացած զանգուածի:



Ա՛լ ժամանակը չէ՞ արդեօք, հաւաքական շահի գիտակցութեամբ, վերակազմակերպուելու քաղաքականօրէն, ձեւաւորելով՝ ընտրովի կայացած ՀԱՄԱՍՓԻՌՔԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԼԻԱԶՕՐ ՄԱՐՄԻՆ, որ կարենայ ներդաշնակել եւ ուղղորդել մեր ցարուցրիւ ճիգերը՝ հայապահպանման եւ Հայ Դատի Պահանջատիրութեան ուղղուած:

Նման Մարմնի մը գոյառումը էապէս պիտի նպաստէր Սփիւռքի տարագիր հայութեան մօտ ՏԱՐԱԳԻՐԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ գիտակցութեան, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՂՈՒԹԵԱՆ մը ձեւաւորումին, նոր որակ ու մակարդակ պիտի տար մեր ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ պայքարին, Հայոց Ցեղասպանութեան բարոյական ճանաչումի ա՛լ քարացած եւ ոչինչ խոստացող կարծրատիպէն անցնելով՝ էապէս հողային հատուցման պայքարի պատրաստութեան, որովհետեւ մեր բուն ՊԱՀԱՆՋԱԾԸ՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումներէն անդին ու գերիվեր, թուրքին կողմէ բռնախլուած՝ հայուն հայրենական հողերու վերադարձն է իր տիրոջ:

Ա՛լ յստակացնելու չէ՞նք, որ հողի՛ն համար էր որ գործադրուեցաւ Ցեղասպանութիւնը - ա՛յն հողին, որ կը կոչուէր Արեւմտահայաստան եւ ուր հազարամեակներ շարունակ կ'ապրէր արեւմտահայութիւնը՝ իր լեզուով, մշակոյթով, ասանդութիւններով ու արժէքներով, տունուտեղերով, կալուածներով ու հաստատութիւններով...համախումբ ազգային կեանքի բաղադրիչ բոլոր տարրերով:

Եւ վերջապէս, նման ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԼԻԱԶՕՐ ՄԱՐՄԻՆ մը գոյառումը՝ ճակատագրականօրէն պիտի նպաստէր ՍՓԻՐՌՔԻ ՀԶՕՐԱՅՄԱՆ, ինչ որ այնքան կարեւոր է Հայաստանի ալ հզօրացման համար եւ՝ փոխադարձաբար, որովհետեւ, ըստ իս, միայն լաւապէս կազմակերպուած, համակարգուած ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ, ԼԻԱԶՕՐ ՄԱՐՄԻՆ ՄԸ ներքոյ խտացած սփիւռքը կրնայ հայօրէն տեսելու յոյսը փայփայել եւ Արեւմտահայաստանի ազատագրութեան Դատ հետապնդել արդիւնաւետ կերպով՝ մէկտեղելով իր բոլոր լծակներն ու հնարաւորութիւնները եւ խօսիլ իր անունով միջազգային հարթակներու վրայ մասնաւորաբար:

Եւ ոչ միայն: Նման ԻՐԱԻԱԿԱՆ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ունեցող ՄԱՐՄԻՆԸ կամ ԿԱՌՈՅՑԸ կրնայ կարեւոր լծակ ալ դառնալ Հայաստանի Հանրապետութեան, երբ ան երկխօսութիւն կը վարէ Թուրքիոյ հետ, ինչպէս այս օրերուն, քանզի անիկա պիտի դիւրացնէր մատնանշելու այն ԿԱՐՄԻՐ ԳԻԾԵՐԸ, զորս կարելի չէ երբէ՛ք անցնիլ, որքան ալ իբրեւ թէ «առանց նախապայմաններու» յառաջ տարուին երկխօսութիւնները կամ բանակցութիւնները...

1971-ին հրատարակուած «ՍՓԻՐՌՔ» շաբաթաթերթին մէջ (խմբագիր Սիմոն Սիմոնեան) կան հետեւեալ դիպուկ տողերը.-« Երբ մենք միացանք, Սադարապատ կերտեցինք...: Երբ մենք միացանք, Յիսնամեակ տօնեցինք: Չկայ հիմա մարմին մը, որ Սփիւռքի Հայութեան հաւաքական ամբողջութիւնը ներկայացնէ: Ունինք կուսակցութիւններ, որոնք անջատ-անջատ կը գործեն, փոխանակ ազգային հողին վրայ զինակցաբար գործելու եւ մէկ մարդու պէս համազգային արտը վարելու, հերկելու, մշակելու»:



Սփիւռքի ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ մեծագոյն ախտն է որ ներքին ցեցի պէս կ'ուտէ, կը ջլատէ մեր հաւաքական մարմինը, կը հեռացնէ մեր մատղաշ սերունդը ազգային կեանքէն, տակաւ անտարբեր կը դարձնէ հայ մարդը իր ազգային օրակարգի հրատապ խնդիրներուն, քանզի ԱՆՏԻՐՈՒԹԻՒՆ է, բառիս ամբողջական իմաստով:

Պիտի կարենա՞նք վերջապէս վեր ելլել ամէն տեսակի հատուածական, կուսակցական եւ այլ պատկանելիութիւններէն, մտածել ու գործել ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻՈՎ եւ կեանքի կոչել վերջապէս տարագիր հայութեան ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ, որ կարենայ ոչ միայն ունենալ ԻՐԱԻԱԿԱՆ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ հայ հողային Դատի հետապնդման աշխատանքներուն գծով, այլ կարենայ դառնալ իսկապէս կեդրոնաձիգ, ներքնապէս ուժեղ Ազգային Խորհուրդ մը, որ կարենայ համախմբել սփիւռքահայ կեանքի կարելիութիւններն ու ներոյժը յանուն մեր ազգային-քաղաքական-կրթական եւ այլ նպատակներուն կենսագործման:

Նման ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ, ԼԻԱԶՕՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ո՛չ միայն Սփիւռքի Հայութեան, այլ նաեւ Հայաստանի կառավարութեան համար պիտի ծառայէր որպէս «աղբիւր յոյսի եւ զօրութեան» բոլոր առումներով...:

Միայն ՀԶՕՐ Սփիւռքը կրնայ լիարժէք աջակցութիւն տալ Հայաստանին եւ նպաստել անոր ՀԶՕՐԱՑՄԱՆ: Իսկ ՀԶՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԶՕՐ ՍՓԻՒԹԷԸ լաւագոյն պատասխանն են ցեղասպան թուրքին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ԱԶԳԱՅԻՆ ԼԷԳԷՈՆ»Ի ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԻՊԱՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ

ԳԵՂԱՐԴ 25 Մարտ 2022



Հանրութեան կը ներկայացնենք յոյժ կարեւոր, իրատեսական եւ գործնական հայրենասիրութեան տիպար նախաձեռնութիւն մը: Ծանօթացէք հայրենիքի պաշտպանութեան նուիրուած «Ազգային Լեգէոն»ին: Մեր հարցազրոյցին կը պատասխանէ խմբագրութեանս Հայաստանեան կազմի անդամ, պատմաբան Գէորգ Եազրճեան: «Գեղարդ»

Ա.- Որո՞նք են զլիաւոր դրդապատճառները «Ազգային Լեգէոն»ի նախաձեռնութեան:



-Ազգային Լեզունը (այսուհետ՝ Լեզուն) ծնաւ, աւելի ճիշդ՝ վերածնաւ անհրաժեշտութենէն մղուած: Լեզունը 1990-ականներու սկիզբին եղած է այն կամաւորական խումբերէն, որոնք մարտնչեցան Արցախեան ճակատներուն վրայ ու կերտեցին մեր յաղթանակը: Հրադադարէն ետք, անոր մարտիկներէն ոմանք ընդգրկուեցան ՀՀ-ի բանակին մէջ, ուրիշներ անցան ուրիշ կենսագործունէութեան: Երբ 2020-ի Սեպտեմբերի վերջին վերստին բռնկեցաւ հայ-թրքական պատերազմը, Լեզունի նախկին մարտիկներէն քանի մը հոգի, իրենց շուրջ հաւաքելով 18-25 տարեկան երիտասարդներ, հիմնականին մէջ երեւանամերձ Մասիս քաղաքէն, հրամանատար, ՀՀ-ի բանակի պահեստի փոխգնդապետ Լեւոն Գեորգեանի գլխաւորութեամբ, կազմակերպեցին կամաւորականներու նոր խումբ, որ տեղակայուեցաւ Քարվաճառի ճակատին վրայ: Խումբին կը մասնակցէին նաեւ երկու սփիւոքահայեր, թէեւ մօտ 60 տարեկան, մէկը՝ շատոնց հայրենադարձած, միւսը՝ Գանատայէն եկած:

Պատերազմի անյաջող ելքի համազգային ցնցահարուածը համակեց նաեւ Լեզունի մարտիկները: 2020-ի Դեկտեմբերին, հոգեցնցումը յաղթահարելով, Քարվաճառի կամաւորականներուն մեծ մասը ճիշդ գտաւ աջ ու ձախ մեղաւորներ գտնելու եւ դատարկաբանութեամբ զբաղելու փոխարէն՝ զբաղիլ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՈՒՎ, քանզի համոզուած էին, որ հայ-թրքական պատերազմի յաջորդ փուլերը անխուսափելի են: Հետեւաբար, անհրաժեշտ էր, առանց ժամանակ վատնելու, կազմակերպուիլ ու պատրաստ ըլլալ ինքնապաշտպանական ու ազատագրական այդ փուլերուն: Ահա այս անհրաժեշտութեան գիտակցումէն վերածնաւ Ազգային Լեզունը:

Բ.- Որո՞նք են մասնակիցները:

-Ազգային Լեզունի մասնակիցները կարելի է դասակարգել

- ըստ բնակութեան վայրի՝ հայաստանաբնակներ եւ սփիւոքահայեր,
- ըստ մասնակցութեան «սթաժ»ի՝ Արցախեան առաջին պատերազմի մասնակիցներ, Արցախեան երկրորդ պատերազմի մասնակիցներ, նոր անդամներ
- ըստ տարիքի՝ պատանիներ եւ պարմանուիկներ՝ 14-18 տարեկան, երիտասարդներ ու երիտասարդուիկներ՝ 18-40 տարեկան, տարիքաւորներ՝ 40-62 տարեկան:

Այսօրուայ դրութեամբ, Լեզունի գործունէութեան գրեթէ մշտապէս մասնակցողներուն թիւը մօտեցած է 250 հոգիի, որոնց շուրջ 50 տոկոսը առաջին խումբին, 40 տոկոսը երկրորդ խումբին եւ միայն 10 տոկոսը երրորդ խումբին կը պատկանին:

Լեզունի անդամները զանազան զբաղումներու տէր են՝ աշակերտ-աշակերտուիկներ, համալսարանական ուսանող-ուսանողուիկներ, բանուորներ, արհեստաւորներ, գիւղատնտեսութեամբ զբաղողներ, գրասենեակային աշխատողներ, մշակոյթի եւ գիտութեան գործիչներ, մանր գործարարներ, տանտիկիներ...

Գ. Իզական սեռի մասնակիցներ ալ կա՞ն, իսկ եթէ չկան՝ ապագայի համար նկատի առնուա՞ծ է հայ կանանց մասնակցութիւնը:



-Իգական սեռը Ազգային Լեզեռնի կազմին գրեթէ մէկ երրորդը կը կազմէ: Ունինք բազմափորձ դիպուկահար հրահանգիչ կին, նաեւ երիտասարդուհիներ ու դպրոցական աղջիկներ, որոնք մեծ խանդավառութեամբ կը մասնակցին Լեզեռնի զանազան աշխատանքներուն: Իգական սեռի մասնակցութեան ոչ մէկ սահմանափակում կամ խտրականութիւն կայ: Ընդհակառակը, Լեզեռնի պատասխանատուները միշտ կը քաջալերեն, որ հայ իգական սեռը յաւելեալ մասնակցութիւն ունենայ աշխատանքներուն, նկատի ունենալով, որ փոքրաքանակ

ժողովուրդը ըլլալով, մեր իգական սեռը եւս պէտք է ունենայ ռազմական նուազագոյն գիտելիքներ շայրենիքը ինք եւս ի հարկին պաշտպանելու համար: Բացի այդ, իգական սեռին ներկայութիւնը արու մասնակցներուն քով կը մեծցնէ պատասխանատուութեան եւ արժանապատուութեան գիտակցումը, հետեւաբար նաեւ՝ մարզումներուն արդիւնաւէտութիւնը:

Դ.- Ի՞նչ գլխաւոր կամ կեդրոնական նպատակներ կը հետապնդէ ԱԼ-ը:

-Ազգային Լեզեռնի հիմնական նպատակը ՀԱՅՐԵՆԱՏԷՐ ՍԵՐՈՒՆԴԻ պատրաստումն է: Այդ նպատակին հասնելու համար՝ մասնակիցներուն կը տրուի համակողմանի դաստիարակութիւն՝ զինուորական տարաբնոյթ հմտութիւններ, բժշկական տարրական գիտելիքներ, գաղափարական եւ հոգեբանական պատրաստութիւն: Զուտ ռազմական տեսակէտէ, նպատակն է այնքան վարժ տիրապետել ռազմական գործին, որպէսզի 120 կրակոցէ առնուազն 100-ը հասնի թիրախներուն:

Ե.- Ինչպիսի՞ համագործակցութիւն կայ ԱԼ-ի եւ Ազգային բանակի միջեւ:



-Ներկայ պահի դրութեամբ, առանձնակի համագործակցութիւն չկայ Ազգային Լեզեռնին եւ ՀՀ-ի բանակին ու ՀՀ-ի պաշտպանութեան նախարարութեան միջեւ: Այդուհանդերձ, կան կապեր Լեզեռնին եւ պետական այս եւ ուրիշ կառոյցներու միջեւ, որոնց մասին նախընտրելի է ներկայիս աւելի չմանրամասնել: Շատ ջերմ, գործակցային յարաբերութիւններ հաստատուած են դպրոցներու տնօրէնութիւններու եւ տեղական ինքնակառավարման քանի մը կառոյցներու հետ (գիւղապետարաններ, քաղաքապետարաններ եւ

մարզպետարաններ):

Զ. օրեայ պատերազմի փորձը բացայայտեց «գաղտնի սպասարկողներու» բազմաթիւ դէպքեր, եւ յայտնաբերեց սպայական ու հրամանատարական կազմի մէջ ապիկար, անպատրաստ եւ ՌԴ բանակի հետ վնասակար գործարքներու մէջ մտած զինուորականներ: Ինչպէ՞ս ապա հովուած է ԱԼ-ը այս ուղղութեամբ:



-Ազգային Լեզունը քաղաքական-կուսակցական որեւէ երանգաւորում չունի. աւելին՝ անոր շարքերուն մէջ բացարձակապէս արգիլուած են կուսակցական համակրանքները կամ հակակրանքները Ազգային Լեզունի գործունէութեան մէջ խցկելու փորձերը: Լեզունին մաս կը կազմեն տարբեր, նոյնիսկ իրարու հակադրուած կուսակցութիւններու անդամներ ու համակիրներ, որոնց կը միատրեն միացեալ եւ բոլորի համար ընդհանրական Հայրենիքի ու անկախ պետականութեան գաղափարները: Ով կը փորձէ որեւէ շեղում մտցնել այդ վեհ գաղափարներուն մէջ կամ կը փորձէ ձաղկել զանոնք, տեղնուտեղը տուն կը ճամբուի անվերադարձ: Նոյնը կը կատարուի եթէ երիտասարդներ շիլ հաշիւներով մօտենան կամ վերաբերին Լեզունի անդամ աղջիկներուն եւ կիներուն: Իրաքանչիւր անդամ նախքան մարզումներուն մասնակցիլը կը տեղեկացուի այս երկու անթոյլատրելի վարքերուն մասին: Զգուշացումը պարբերաբար կը կրկնուի քանի մը շաբաթը մէկ, որպէսզի ան ականջի օղ դառնայ բոլորին համար: Բարեբախտաբար, առ այսօր լուրջ շեղումներ եւ արտաքսումներ չեն պատահած:

Ազգային Լեզունի ղեկավարութիւնը օտար որեւէ պետութեան շահերու պաշտպանութեան ամէն ձգտում կամ քարոզչութիւն կը նկատէ անարգանք հայկական անկախ պետականութեան նկատմամբ, եւ աչալրջօրէն կը հսկէ, որ այդպիսի տարրեր չներթափանցեն Լեզունի շարքերը: Նկատուած է, որ օտարներու շահերուն ծառայողներ փորձած են զանազան տեսակի օգնութիւն տրամադրելու քողի տակ ազդեցութիւն ձեռք բերել Լեզունին մէջ: Այդպիսի փորձերը կանխուած են՝ մերժելով այդպիսի օգնութիւնները:

Լեզունին անդամակցիլ ուզող չափահասներու պարագային, ղեկավարութիւնը տարբեր խողովակներով ձեռք կը ձգէ տեղեկութիւններ թեկնածուի վարքի, բարքի եւ հնարաւոր կասկածելի կապերուն մասին: Պատահած է, որ երբ թեկնածուին այս որակները չեն համապատասխանած Լեզունի անդամակցութեան նուազագոյն չափորոշիչներուն, նրբանկատօրէն մերժուած է թեկնածուն: Վերջինիս խորհուրդ տրուած է ռազմական մարզումներ ստանալ ուրիշ կազմակերպութիւններու մէջ:

Է.-

Ի՞նչ էլեկտրոնային օդային «զէնքերու» պէտք ունիք: Կը հաւատա՞ք թէ ՀՀ ներկայ իշխանութիւնները, յատկապէս Ռազմական եւ Ազգային Ապահովութեան նախարարութիւնները մրցակից մը չեն տեսնելու ԱԼ-ի մէջ:

-Լեզունին անդամները կը ստանան անօդաչու թռչող սարքեր ղեկավարելու տարրական գիտելիքներ: Ունինք ուսումնական նպատակներու ծառայող ԱԹՍ մը՝ նուէր ստացուած Լեզունի համահիմնադիր, քանատահայ Վիգէն Տարագճեանէն: Նպատակը անդամները վարժեցնելն է ԱԹՍ-ի գաղտնիքներուն, մանաւանդ զգուշանալը ԱԹՍ-ի հարուածներէն:

Չենք կարծեր, թէ ՀՀ-ի պետական կառոյցները մրցակից կը նկատեն կամ կրնան նկատել Ազգային Լեզունը: Նման բանի որեւէ հիմք չկայ: Ազգային Լեզունը կամաւորներու աշխարհագոր է եւ իրեն կը համարէ ԼՐԱՑՆՈՂ մը, ՕԳՆԱԿԱՆ մը մեր պետական բանակին՝ պատրաստ անվերապահօրէն ենթարկուելու ՀՀ-ի զինուած ոյժերու հրամանատարութեան՝ ի պաշտպանութիւն հայրենեաց: 44-օրեայ պատերազմի օրերուն,



Ազգային Լեզունը իր հրամանները կը ստանար ՀՀ-ի բանակի Քարվաճառի զօրամասի հրամանատարութենէն: Ի դէպ, արտասահմանէն ստացուած կարգ մը զինական կազմաձևեր, այդ թիւին՝ ԱԹՍ մը, Ազգային Լեզունը պատերազմի օրերուն նուիրեց այդ զօրամասին:

Ը.- Ինչպէ՞ս կը վերաբերի հանրութիւնը ԱԼ-ի հանդէպ:

-Հանրութեան վերաբերմունքը Ազգային Լեզունի գործունէութեան նկատմամբ յոյժ դրական է: Անդամ երեխաներու ծնողներ երբեմն ներկայ կ'ըլլան տարաբնոյթ մարզումներուն եւ անձամբ կը համոզուին Լեզունի գործունէութեան օգտակար բնոյթին՝ իրենց երեխաներու մարմնական, մտային, հոգեկան եւ գաղափարական կազմաւորման մէջ: Անոնք եւ ուրիշներ իրենց բարեացակամ վերաբերմունքը կ'արտայայտեն զանազան ձեւերով՝ գումարներ, կազմաձևեր եւ այլ իրեղէն նուիրելով, իրենց շրջանակներուն մէջ հանգանակութիւններ կազմակերպելով, ուրիշ ծնողներ համոզելով իրենց պատանի զօրակները յանձնել լեզունական դաստիարակութեան եւ այլն: Կ'արժէ այս առթիւ յայտնել, թէ Լեզունին կ'անդամակցին Հայաստանի ազգային հերոս Մովսէս Գորգիսեանի պարման թոռնուհին ու Երեւանի նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարութեանի պատանի որդին: Գորգիսեանի դուստրը, ներկայ գտնուելով մարզումներէն մէկուն, առաջարկեց, որ Լեզունը մարզումներ կատարէ իր տնօրինած դպրոցի բարձր կարգերու աշակերտ-աշակերտուհիներուն համար: Անշուշտ, առաջարկը սիրով ընդունուեցաւ. մարզումներու ամբողջական ծրագիր մը կազմուած է եւ գործնական աշխատանքներու սկիզբը օրերու հարց է:

Լեզունի հրահանգիչները կ'ընդառաջեն ազգօգուտ ուրիշ խնդրանքներու եւս: Օրինակ, վերջերս, գործակցաբար Արենի խոշորացուած համայնքի համայնքապետարանին, սկսան շրջանի երիտասարդութեան ռազմական պատրաստութեան դասընթացները: Համայնքի գիւղերը գտնուելով անմիջապէս Նախիջեւանի հետ սահմանին, կարիքն ունին ժողովրդային պաշտպանութեան նենգ թշնամիի յարձակումներու պարագային բանակայիններուն կողքին դիմակայելու համար թշնամիին: Եւ ահա՛ այդ գործը եւս իր վրայ վերցուց Ազգային Լեզունը: Եթէ 6 մարտ 2022-ի մարզումներուն ներկայացած էր 32 հոգի, մէկ շաբաթ ետք այդ թիւը բարձրացաւ 162-ի: 2021-ի գարունէն մարզումներ կը կատարուին նաեւ Մասիս քաղաքի եւ կից շրջանի Սօս գիւղի դպրոցներուն մէջ: 2022-ի տարեսկիզբէն կ'ընթանան Լեզունի կազմակերպած ռազմահայրենասիրական դասերը Երեւանի երկու դպրոցներու մէջ՝ 14-17 տարեկան պատանի-պարմանիներու հետ: Կազմուած են աշխարհագրայիններու խումբեր Կիւմրիի, Նոյեմբերեանի, Արովեանի, Սիսիանի եւ Մեղրիի մէջ, որոնց մարզումներու ծրագիրները թէեւ պատրաստ են, սակայն Լեզունի հրահանգիչներու քանակն ու ռազմական անհրաժեշտ հանդերձանքը ներկայիս անբաւարար են բոլորին կարիքներուն հասնելու համար. այս ուղղութեամբ եւս քայլեր կ'առնուին:

ԿԻՊՐԱՀԱՅ

ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս նախատեսուած էր, Կիրակի, 20 Մարտ 2022ին՝ կայացան Կիպրոսի Թեմի Երեսփոխանական Ժողովի ընտրութիւնները՝ Նիկոսիա, Լառնագա եւ Լիմասոլ, հաշտ ու համերաշխ մթնոլորտի մը մէջ եւ յարգելով Կիպրոսի Առողջապահական նախարարութեան կանոնները: Ընտրութիւնները վաւերացուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին կողմէ: Նիկոսիոյ մէջ, ընտրուած թեկնածուներն են.-

Յակոբ Գասպարեան

Մկրտիչ Գույումճեան

Վահան Այնէճեան

Մանուկ Երլտրգեան

Յարութ Տէր-Պետրոսեան

Թանիա Էօճիւրեան

Տոքթ. Անդրանիկ Աշճեան:

Լառնագայի մէջ, ընտրուեցան՝ Ատուր Գարակիւլէեան, Բամգի Մարթին եւ Տոքթ. Միսաք Քէշիշեան:

Լիմասոլի մէջ, ընտրուեցաւ Կարպիս Ֆերահեան:

Իսկ Ֆամակուսթայի մէջ՝ Արամազդ Էսքիճեան:

Կիպրոսի թեմի պատգամաւորական ընտրութիւնները տուն կու տան հետեւեալ մտորումներու.-



-Թեմական ընտրութիւնները պէտք է հեռու ըլլան կուսակցական-հատուածական նեղ հաշիւներէ, կուսակցական մենասիրութենէ եւ աթոռներու առեստուրէ:

-Հայ հանրութիւնը, կիպրահայ համայնքը այս պարագային, իր վստահութեան քուէն տալու է տուեալ պաշտօնին ատակ անձնաւորութեանց, անկախ անոնց կուսակցական պատկանելիութենէն:

-ՀԱՄԵՐԱՇԽԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ լոգունգին տակ, երբ կուսակցութիւն մը բացայայտօրէն կը նկրտի իր ՄԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ հաստատել՝ հայոց եկեղեցոյ պայծառութեան եւ համայնքիս վերելքին ձգտող նպատակներուն իրագործման կոչուած



Պատգամաւորական Ժողովին վրայ, յայնժամ ՀԱՄԵՐԱՇԽԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ հասկացողութիւնը կը դառնայ անբովանդակ եւ անհիմն:

-Ժամանակն է որ տարբեր գործիքակազմեր կամ մեքանիզմներ ստեղծուին կիպրահայ համայնքին գործունէութիւնը վարելու կոչուած Մարմիններ ընտրելու ընթացակարգին մէջ, որպէսզի ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ գործելաձեւը դառնայ շօշափելի ու երեւելի կիպրահայ կեանքի բոլոր բնագաւառներէն ներս: Միայն այս կերպով, կրնան պաշտօնակոչուիլ ԱՆՁԻՆՔ որոնք իսկապէս ԱՏԱԿ են տուեալ ՊԱՇՏՕՆԻՆ, անցած են որոշ ճանապարհ, այլ ոչ թէ ԱՆՁԻՆՔ, որոնք կամակատարը դառնան այս կամ այն հատուածին: Այսինքն, մենք ունենանք ԱՐԺԷՔՆԵՐՈՒՒ վրայ հիմնուած ղեկավարութիւն, որ կրնայ վճռորոշ դերակատարութիւն ունենալ ԱՐԺԷՔԱԻՈՐ հանրութեան մը կազմաւորումին:

-Բարեբախտաբար, ընկերային ցանցերը տակաւ թափանցիկ կը դարձնեն բոլոր դռնփակ նիստերու ետին առնուած որոշումները, ինչպէս նաեւ այդ որոշումներուն մէջ պահուրտած մեքենայութիւնները, մենատիրական նկրտումները եւ այլ անարդարութիւնները:

-Գնահատանքի արժանի է յատկապէս՝ անկախ թեկնածու Տոքթ. Անդրանիկ Աշճեանի նախաձեռնութիւնը՝ առանձին ներկայանալու որպէս թեկնածու վերոնշեալ Ընտրութեանց, ինչ որ կ'ենթադրէ խիզախութիւն եւ յանդգնութիւն՝ բացայայտելու «Համերաշխութեան Համախմբումի»ն իսկական պատկերը, հիմնուած աթոռներու առեւտուրին վրայ եւ կարելոր ՔԱՅԼ մը առնելու արդար ընտրութեանց ձեւաւորումին ուղղութեամբ:

Մրտանց կը շնորհաւորենք նորընտիր Պատգամաւորական ժողովի բոլոր անդամները անուն առ անուն, մաղթելով որ եկեղեցաշէն եւ ազգօգուտ գործունէութեամբ արդարացնեն կիպրահայ հանրութեան իրենց վստահած քուն:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՅՕԴՈՒԱՇՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՒԱՆԱԳԷՏ ԼԵՍԼԻ ՏԷՅՎԻՄ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԿԱՅՈՂ

Յարութիւն Իսկահատեան-Պէրյութ

Հայոց Ցեղասպանութեան մասին ականատեսի վկայութիւնները իրարմէ կը զանազանուին վկայող ենթակային ինքնութեան հիման վրայ: Բոլոր տեսակի ականատես վկաներու տեսածներն ու լսածները անշուշտ փաստացի եւ գիտական բնոյթ ունին, ըստ պատմաբաններու ջախջախիչ մեծամասնութեան: Սակայն եւ այնպէս որոշ տարբերութիւն մը կայ հայու կամ ոչ հայու, պարզ քաղաքացիի կամ դիւանագետի, ազատ մարդու կամ բռնազաղթուածի վկայութեանց միջեւ: Ամերիկացի դիւանագետ Լեսլի Տէյվիսի ականատեսի վկայութիւնները Հայոց Ցեղասպանութեան մասին կրկնակի ոյժ ունին՝ որովհետեւ ենթական օտար մըն է եւ մեծ պետութեան մը դիւանագետը:



Հայաստանութեան մասին իր վկայութիւնները ամերիկացի դիւանագետ Լեսլի Տէյվիս գրի առած է, որ յետագային հրատարակուած է անգլերէն՝ “The Slaughterhouse Province An American Diplomat’s Report on the Armenian Genocide, 1915-1917”, Միւզան Ք. Պլերի խմբագրութեամբ եւ որ ֆրանսերէնի թարգմանուելով լոյս տեսած է Փարիզ, որմէ հայրենի մտաւորական Գրիգոր Զանկիեան հայերէնի թարգմանած է զայն եւ լոյս ընծայած “Սպանդի Նահանգը” վերնագրով, “Դալլ” հրատարակչութիւն, Երեւան, 2001, փոքր չափի 368 էջ:

Լեսլի Տէյվիս ծնած է 1876-ին, Փորթ Ճեֆըրսոն, ԱՄՆ: Ուաշինկթընի Ճորճ Ուաշինկթըն համալսարանի իրաւաբանական բաժանմունքէն շրջանաւարտ ըլլալէ ետք, նոյն ճիւղին մէջ կը մասնագիտանայ Նիւ Եորքի համալսարանը: Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արտաքին Գործոց Նախարարութիւնը զինք Պաթում դիւանագիտական ծառայութեան կը դրկէ: Միջպետական դիւանագիտական յարաբերութիւններու առընթեր, Տէյվիս շրջապտոյտներ կը կատարէ դէպի Միջին Ասիոյ անապատները, ապա Կովկասեան լեռները եւ կը բարձրանայ Մասիսի գագաթը, ի վերջոյ հասնելով Խարբերդ ԱՄՆ-ի հիւպատոսի պաշտօնով:

Լեսլի Տէյվիս հայկական ջարդերուն իբրեւ ականատես վկայ, հայոց բնաջնջումը “համաշխարհային պատմութեան աննախադէպ նախճիրը” կը կոչէ: Խարբերդի նահանգը, Օսմանեան Պետութեան անուանումով Մամիւրէթ-իւլ-Ազիզի վիլայէթը, իբրեւ սպանդի վայր ընտրուած է թուրքերու կողմէ: Ոչ միայն տեղւոյն հայերը, այլ Հայաստանի արեւմտեան հատուած եւ տարբեր նահանգներու հայութիւնը հոն կը քշէին, կը հաւաքէին ու կը սպաննէին: Խարբերդի մէջ գտնուող ամերիկացի դիւանագետ Լեսլի Տէյվիս անտարբեր չի մնար եւ կամովին կը ստանձնէ նահատակուող կամ տառապող հայութեան պաշտպանութիւնը: Ան տեսաբար ծածկագիր հեռագիրներ կը դրկէ Կ. Պոլիս՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաուին, ինչպէս նաեւ Ամերիկայի պետական հաստատութեանց: Իր տեղեկագրութեանց մէջ Տէյվիս թրքական ոճրագործութեանց սահմոկեցուցիչ մանրամասնութիւններ կը նկարագրէ եւ իր պետութեան կառավարութիւնը կը յորդորէ միջամտելու եւ արհաւիրքի տարածման առաջքը առնելու: Ան չէ զլացած նոյնիսկ մէկ հայու կեանքը փրկելու համար դիմելու տեղւոյն թուրք ընդհանուր կառավարիչին: Տէյվիս Խարբերդի ամերիկեան հիւպատոսարանը ապաստարանի կը վերածէ, երկու տարի քանի մը տասնեակ հայեր հոն պատսպարելէ յետոյ, Տերսիմի ճամբով զանոնք Կովկաս կը դրկէ:

Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Օսմանեան Պետութիւնը դիւանագիտական յարաբերութիւնները կը խզեն 1917-ի սկիզբը: Լեսլի Տէյվիս ԱՄՆ կը վերադառնայ եւ իր հիւպատոսական երեք տարիներու գործունէութեանց գրաւոր հաշուետուութիւնը կը ներկայացնէ Արտաքին գործոց նախարարութեան: Անոր գրածները ականատեսի անողոք մեղադրանքներ են Օսմանեան Պետութեան կառավարիչներուն ոճրային գործունէութեան դէմ, անհերքելի փաստերով ու մանրամասնութիւններով լեցուն: Տայվիս կը նկարագրէ Երիտթուրքերու յղացած, նախաձեռնած եւ գործադրած ոճրագործութիւնները: Պետական պաշտօնէաներ երբ կ’ընթերցեն անոր գրածները, խուճապի կը մատնուին եւ զանոնք “գաղտնի” կնիքով կը դրոշմեն: Այս պատճառով այդ զեկուցումները երկար տարիներ անձեռնմխելի եւ անհասանելի կը մնան: Մօտ տաս տարիներ առաջ, հայ ժողովուրդի բարեկամ մը՝ ամերիկացի ուսումնասիրող Տիկին Միւզան Ք. Պլեր, Տէյվիսի այդ



տեղեկագրութենէն օրինակ մը կը պատճենահանէ, կը գաղտնագրէ եւ մանրակրկիտ ուսումնասիրութեան կ'ենթարկէ: Պէր կը յայտնաբերէ նաեւ Տէյվիսի 1915 թուականին Խարբերդի մէջ լուսանկարած պատկերներուն մէկ մասը եւ զանոնք ծանօթագրութիւններով օժտելով գիրքին մէջ կը հրատարակէ: Այս բոլորը անգլերէնէ ֆրանսերէնի թարգմանուելով յոյս կը տեսնեն Փարիզի մէջ, որմէ նաեւ հայերէն հրատարակութիւնը:

Լեւի Տէյվիսի գրած տեղեկատուութեան ամբողջական հրապարակումը՝ հայոց արհաւիրքի պատմութեան յետագայ թրքական եւ այլ աղաւաղման փորձերը կը կանխէ: Խարբերդի նահանգի եւ տեղւոյն Մեզիրէ քաղաքի կոտորածներու մասին Տէյվիսի տեղեկատուութիւնը բացառիկ է, որովհետեւ արխիւներէն հանուած առաջին փաստաթուղթն է որ գրուած է չէզոք երկիր մը՝ ԱՄՆը ներկայացնող եւ արտասահման ապրող ամերիկացի դիւանագետի մը կողմէ: Թղթածրարներուն մէջ կ'երեւան նաեւ դիւանագիտական առաքելութեան ծառայողներուն ակնատեսի նամակներն ու հեռագիրները: Յատկանշական է որ անոր առընթեր Հալէպի մէջ Գերմանիոյ հիւպատոս Ռէսսլերի “Յեղային Բնաջնջում” արտայայտութիւնը եղած է 1915-ի Ապրիլի կէսերուն, որուն մասին գոյութիւն ունեցող փաստաթուղթերը կը պահպանուին Պերլին՝ Գերմանիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան արխիւներուն մէջ: Այս երկու վկայութիւնները զօրաւոր հիմքեր են Հայոց Յեղասպանութեան իրաւական հաստատման գծով:

Լեւի Տէյվիս 30 Դեկտեմբեր 1915-ին զեկոյցով մը Կ. Պոլսոյ ԱՄՆ-ի դեսպան Մորկընթաուի կը յայտնէ հետեւեալը. “Լիովին արդարացաւ “Սպանդի Վիլայէթ” արտայայտութիւնը, ինչպէս կոչած էի Խարբերդի նահանգը, մեկնելով այն ամէն ինչէն, որոնք իմացած եւ տեսած էի: Պարզուեցաւ որ կարաւանին այր մարդիկը, կիներն ու երեխաները, որոնք յիշատակած եմ զեկոյցիս 15-րդ էջին մէջ, այստեղէն ոտքով հինգ ժամ հեռաւորութեան վրայ, թուրքերն ու քիւրտերը կոտորած են: Իրապէս գրեթէ հաստատ է թէ քաղաքէն բռնագաղթուածները վիլայէթի սահմաններէն դուրս չհանած՝ Յոլիսի առաջին օրերուն ջարդած են՝ բացի ջնջին բացառութիւններէ: Բաւական դժուար է ըմբռնել իմաստը այն ծրագրին, որ Տրապիզոնի, Օրտուի, Կիրասոնի, Ջառայի, Կարինի եւ Երզնկայի գաղթականները հոս հասցնելով, այստեղ կոտորած են: Մենք մեզի հարց կու տանք թէ ինչու այս նահանգը ընտրուած է որպէս սպանդանոց”: (Արեւմտահայերէնի վերածուած իմ կողմէ, -Յ.Ի.):

Լեւի Տէյվիս կ'ըսէ թէ Հայոց Յեղասպանութեան արմատները մինչեւ “միլլէթ”ներու՝ այսինքն ոչ-իսլամական համայնքներու ստեղծման ժամանակը կ'երկարին: Արդարեւ, իսլամութիւնը ընդունելէ ետք, թուրքերը իրենց հպատակ քրիստոնէայ ազգերուն եւ հրեաներուն կ'առաջարկէն կամ իսլամանալ եւ կամ մեկուսանալ երկրին հասարակական կեանքէն: Կրօնական փոքրամասնութեանց կարգավիճակ կը ստանան հայերը, յոյներն ու հրեաները:

Տէյվիսի ցնցող տեղեկատուութիւնը կը ներկայացնէ Խարբերդի նահանգին եւ Խարբերդ քաղաքին կեանքը, պատերազմը, տեղի թուրք պաշտօնէութիւնը, բանակը, հայոց հալածանքը, հիւսիսէն քշուած հայ գաղթականներու տառապանքն ու թշուառութիւնը եւ դէպի ստոյգ մահ տարուիլը:

1915-ի ու յաջորդ տարիներու հայոց գրաւոր վկայութիւնները աւելի եւս կը հիմնաւորեն Տէյվիսի ըսածները: Ինչպէս օրինակ հայալեզու թղթակցութեանց բրիտանական գրաքննիչ նշանակուած Պետրոս Տօնապետեան, վերապրողներու նամակները հաւաքելով զանոնք հրատարակած է Փարիզի մէջ՝ “Չայն Տառապելոց” խորագրուած հատորով, ուր Տէյվիսի յիշածները կը շեշտուին:

1917-ին երբ Լեւի Տէյվիս ԱՄՆ կը վերադառնայ, հոն հաստատուած 189 խարբերոցի հայերու հետ կը տեսակցի զանազան քաղաքներու մէջ: Տէյվիս անոնց սիրելիներուն եւ ազգականներուն մասին տեղեկութիւններ կը փոխանցէ: Ոչ միայն հայեր, այլ նաեւ օտարներ բարձր գնահատած են Տէյվիսի Հայաստանութեան իրականութեան բացայայտման ջանքերը: Անոնցմէ է մինչեւ 1917-ը Խարբերոցի մէջ ծառայած միսիոնար Հենրի Ռից, որ ԱՄՆ-ի պետական հիւպատոսական ծառայութեան պետին կը գրէ՝ Տէյվիսի հայոց օգնելու եւ պատասպարելու ուղղութեամբ կատարած աշխատանքներուն մասին: Լեւի Տէյվիսի մօտ՝ Խարբերոցի ԱՄՆ-ի հիւպատոսարանին մէջ մօտաւորապէս յիսուն հայեր ապաստան գտած էին: Ան գանոնք կը պատասպարէր, ինքզինք լուրջ վտանգի ենթարկելով:

Լեւի Տէյվիսի կատարած հայանպաստ հսկայական գործին մասին լաւագոյն գնահատականը կու տայ Մեսրոպ արք. Աշճեան, որ սոյն յուշագիրքը կ'որակէ մարդասիրութեան եւ հայասիրութեան նոր վկայութիւն մը:

ՀԱԼԷՊ ԵՒ...Ո՞Վ ՊԻՏԻ ՈՐՈՇԷ

ՄԱՆՈՒԷԼ ՔԷՇԻՇԵԱՆ

26 Մարտ, 2022



ԿՐԹԱՍԻՐԱՅ-Ս.-ՉԵՄՊԷՐՃԵԱՆ-ՎԱՐՃԱՐԱՆ-Երկրորդական

Լա՞ւ են Հալէպի լուրերը, թե՞ վատ:



Եթէ ֆէյսպուքով դատենք, ապա Հալէպի մէջ ամէն ինչ աւելի քան լաւ է. բոլոր առիթներուն քէֆը եւ ուրախութիւնը անպակաս են:

Ցաւալիօրէն ընդունինք, որ հայերուն գլխուն այնքան փորձանքներ եկան եւ տակաւին կը շարունակեն գալ, որ կարծէք արդէն կարեւոր ալ չեն Հալէպի լուրերը:

Ո՞ր մէկուն մասին մտածեն խեղճ հայերը, Լիբանանի՞, Ուքրանիո՞յ, թէ Հայաստանի ու Արցախի:

Բնականաբար որպէս հող-երկիր-հայրենիք՝ Հայաստանի ու Արցախի մասին պէտք է մտածենք, բայց որպէս ազգ-ժողովուրդ իրաւունք չունինք անտեսելու ամենափոքր գաղութն իսկ. մարդու մը մարմնի որ մասը որ ցաւի, սիրտը հոն է, նոյնն ալ ազգի մը պարագային է:

Մեր ազգի մարմնի բոլոր մասերը կը ցաւին, տեղ մը քիչ մը աւելի, տեղ մը քիչ մը նուազ, բայց մենք կը գալարուինք, անընդհատ կը տապալակուինք մեր բաց վերքերուն պատճառած ցաւերէն: Ուքրանիոյ մէջ, արդէն հինգսոց տուեալներով, 20 գոն ունինք: Մենք վիճակագրութիւն չունինք, հետեւաբար չենք գիտեր, թէ քանի ուքրանահայ բռնած է գաղթի ճամբան: Ուքրանիայէն Հայաստան ապաստանած բուն ուքրանացիներուն թիւը աւելի մեծ է քան հայրենիք եկող ուքրանահայերունը. այնտեղի հայերը կը նախընտրեն Եւրոպա ապաստանիլ, ինչպէս պիտի ընէին նաեւ այլ վայրերէ գաղթածները՝ եթէ հնարաւորութիւն ունենային:

-Այս ըսածներդ բոլորս ալ գիտենք, դուն Հալէպի մասին պատմէ,- ըսողներ պիտի ըլլան:

Հալէպահայը միշտ ալ իր սրտին ու մտքին մօտիկ զգացած է ամբողջ հայութիւնը, այդ պատճառաւ ալ չեմ կրնար Հալէպը առանձնացնել, բայց եւ այնպէս պիտի փորձեմ բացատրել հալէպահայուն այսօրուան վիճակը:

Հալէպահայերը լաւ մը պաղեցան այս ձմեռ, վերջին շրջանի արցախցիներուն նման:

-Ամէն տեղ պաղ էր եւ է տակաւին:

-Այո՛, ամէն տեղ պաղ էր, բայց ամէն տեղ ալ տաքնալու միջոց կար: Հալէպցիները ո՛չ տաքնալու միջոց ունէին, ո՛չ ալ տաքնալու միջոց ունենալու համար վճարելիք դրամ:

-Չդիմացա՞ն պաղին, սառցակալեցա՞ն:

-Ո՛չ, որովհետեւ հալէպահայերը իրապէս ինքզինքնին տաքցնելու, կամ պաղին դիմանալու ընդհանրական հոգի ունին, որ կը մարմնաւորուի միութենական հաւաքական աշխատանքով: Ամբողջ ձմրան մեր մարզական խումբերը մարզուեցան եւ մրցումներու մասնակցեցան: Մեր տղոցմէ եւ աղջիկներէն շատեր կրնային մեծ գումարներու փոխարէն մաս կազմել տեղական հարուստ ակումբներու, սակայն անոնց մեծամասնութիւնը գերադասեց հայկական ակումբի մէջ մնալ:

Քանի՞ գաղութ նկարչական դպրոց ունի: Մեր նկարչական դպրոցները, մանաւանդ «Մարեան ակադեմիա»ն եւ «Արշիլ Կորգի»ն զծել սորվեցուցին հարիւրաւոր աշակերտներու, որոնց մէջ նաեւ մեծ թիւով քրիստոնեայ եւ իսլամ արարներ:

Քանի՞ գաղութ երաժշտական դպրոց, երգչախումբ, դասական երաժշտութեան նուագախումբ ունի... : Հալէպը այս ամէնէն քանի մը հատ ունի:



Թատերախումբերը չեն ըսեր, 100, 90, 60 տարեկան հալէպահայ թատերախումբերը տակաւին բեմի վրայ են. մեր թատերախումբերը անցեալին թեւ ու թիկունք եղած են հայ դպրոցին՝ նիւթապէս եւ բարոյապէս:

Ունինք թատերասրահներ, համերգասրահներ:

Այո՛, մսեցան հալէպահայերը, խորոված եւ հարիսա աւելի քիչ կերան, նոր զգեստներ քիչ գնեցին, բայց իրենց եկեղեցիները կանգուն պահեցին:

Դպրոցները ո՛չ միայն բաց պահեցին, այլեւ պահպանեցին անոնց ուսման բարձր մակարդակը: Դպրոցը տաքուկ անկիւն մնաց մեր աշակերտներուն համար, ո՛չ միայն որպէս գիտութեան դարբնոց, այլ նաեւ ֆիզիքական իմաստով, մեր դպրոցները ի գին ամէն զոհողութեան յաջողեցան վառելանիւթ ճարել եւ մեր դպրոցները տաք պահել:

-Պռաւօ՛ հայերուն,- կ'ըսէին արաբ ուսուցիչները, պետական դպրոցները տաքութիւն ի՞նչ ըսել է չեն գիտեր...

Հալէպը ունի հինգ երկրորդական, երկու միջնակարգ, մէկ միացեալ նախակրթարան վարժարաններ: Ո՛ր գաղութը ունի այսքան գործող դպրոց:

Մեր դպրոցները նիւթապէս կ'ապահովուին իրենց հովանաւոր կուսակցութիւններու, եկեղեցւոյ, կամ բարեսիրական միութիւններու կողմէ, բոլորդ գիտէք.- Ո՛չ մէկ հայ աշակերտ դպրոցէն դուրս կը մնայ նիւթական պատճառով: Աւելցնեմ.- Մեր դպրոցական դասարանները օրինակելի են եւ ամէն մէկ բաժին ունի 15-20, ամենաշատը 25 աշակերտ: Այս պարագան նիւթական մեծ ծախս չի՞ պահանջեր:

Հալէպահայութեան երեք համայնքները ունին 13 եկեղեցի, ուր պատարագ կը մատուցուի եւ պաշտամունք կը կատարուի եւ ուրկէ մեր աղօթքն ու բողոքը կը բարձրանան երկինք: Եկեղեցիները դպրոց կը հովանաւորեն, բարեգործութիւն կ'ընեն, Հայ աւետարանականները արդիական դարմանատուն ունին, գործնական դասընթացքներ կը կազմակերպեն: Վերջերս հարիւրաւոր երիտասարդ կիներ եւ տղամարդիկ վկայուեցան որպէս զանազան արհեստներու տէրեր: Համայնքապետ Դոկտոր վերապատուելին կը հաւաստիացնէ, որ անոնցմէ 95 արժանիներուն բաւարար դրամ պիտի տրամադրուի՝ սկիզբ դնելու սեփական գործի մը, այսինքն մարդոց ձուկ տալով մուրացկանութեան վարժեցնելու, ձկնորսութիւն կը սորվեցնեն եւ ուռկանն ալ անհատոյց կը տրամադրեն: Խոհեմ, իմաստուն եւ օգտաշատ քայլ մը որ շատոնց ըրած պէտք է ըլլայինք, անշուշտ եթէ կ'ուզենք գաղութը պահել արժանավայել կերպով պահել:

Հալէպի մէջ, ունինք բարեսիրական երկու հսկայ կազմակերպութիւններ՝ Հ.Բ.Ը. Միութիւնն ու Սուրիոյ Օգնութեան Խաչը, որոնք կը գործեն կրթական, առողջապահական, մարդասիրական բոլոր բնագաւառներու մէջ, ասոնց կողքին կայ նաեւ Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկը, որուն վերջերս միացաւ նաեւ Գարակէօզեան հիմնարկը:

Տակաւին կան նաեւ Հայրենակցական միութիւնները, որոնցմէ մեծ մասը մօտաւորապէս դար մը օգտաշատ գործունէութենէ ետք դադրեցուց իր գործունէութիւնը տեղը զիջելով մեր միւս միութիւններուն, սակայն տակաւին կայ իր գործունէայ Մարաշի Հայրենակցական Միութիւնը իր մշակութային «Գերմանիկ-Վասպուրական»ով:

Կան մեր երեք աւանդական կուսակցութիւնները, մշակութային միութիւնները:



Ունինք «Գանձասար» շաբաթաթերթը, «Հայեացք» պարբերաթերթը, տպարաններ, հրատարակչատուներ, ունինք գրողներ. Անցեալ շաբաթ կայացած «Արեւմտահայերէն բանաստեղծութիւններու փառատօն»ին մասնակցած 34 բանաստեղծներու կէսէն աւելին հալէպահայեր կամ նախկին հալէպահայեր չէին: Ունինք նաեւ 25 տարեկան Հայագիտական հիմնարկը, ուկէ կը վկայուին հայերէնի ուսուցիչներ, որոնցմէ շատերը այսօր զանազան գաղութներու մէջ մայրենի լեզու եւ գրականութիւն կը սորվեցնեն մեր մանուկներուն:

Պէտք է հպարտութեամբ արձանագրենք, որ Հալէպահայ գաղութը հակառակ իր նօսրացած թուաքանակին կենդանի է եւ կենսունակ:

Պէտք է ցաւով արձանագրենք, որ Հալէպահայ գաղութը կորսուելու վտանգի մէջ է, որովհետեւ անոր բաղկացուցիչ բոլոր տարրերը՝ ընտանիքները, անհատները նիւթապէս շատ ծանր վիճակի մէջ կ'ապրին.

-Համատարած անգործութիւն է, ծայրայեղ սղութիւն,- Ասիկա բողոք չէ, ասիկա անդիմանալի իրականութիւն է:

Հալէպահայերը ունին ընկերային անլուծելի հարցեր, ինչպիսին է օրինակ գաղթի պատճառաւ յառաջացած իզական սեռի եւ արական սեռի թիւերուն միջեւ հսկայ տարբերութիւնը, պարագայ մը, որուն ո՛չ մէկը կ'ուզէ անդրադառնալ կամ քննարկել գաղթ:

Պէ՛տք է մնայ հալէպահայ գաղութը: Հալէպահայութեան շատ կարեւոր դէմքերէն մէկուն խօսքը լաւ կը յիշեմ:

-Մենք տազնապներու սպասելու եւ խուճապի մատնուելու փոխարէն կամաց-կամաց, ծրագրուած, պէտք է գաղթէինք, երթայինք Հայաստան, այլ վայրերու մէջ միշտ ալ ամէն գէշ բան կրնայ պատահիլ: Ճի՛շդ է, Հայաստանի մէջ ալ կրնայ վտանգուիլ մեր ապահովութիւնը, բայց հոն մեր հայրենիքն է. մեր հայրենիքին համար կը կռուինք, կը զոհուինք, կ'ապրինք, կը ստեղագործենք... ուրիշ ելք չունինք...

Ո՞վ պիտի որոշէ գաղութի մը մնալը կամ չմնալը, ի՞նչ պատճառներու վրայ յենելով: Ո՞վ պիտի արժեւորէ գաղութի մը պահպանման անհրաժեշտութեան չափը:

Դո՛ւք ըսէք, մենք՝ պարզ, սովորական հայերս իրաւունք չունինք մեր պատասխանատուներուն այս հարցումները ուղղելու:

Մանուէլ Քէշիշեան

Երեւան 26 Մարտ 2022

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԻՒՆԱԼԻ ՈՏՆԱՇԵՏՔԵՐԸ...

Երբ 24 Փետրուարին Ռուսիա սկսաւ իր զինուորական գործողութիւնը Ուքրանիոյ դէմ, քիչեր գիտէին այդ յարձակումին իսկական պատճառները: Դժբախտաբար փոքրաթիւ մարդիկ գիտեն իրականութիւնը, փոքրաթիւ մարդիկ կը փորձեն գիտնալ իրականութիւնը, մեծամասնութիւնը կը հետեւի լրատու աղբիւրներուն եւ անոնց մեծ մասը կը հաւատայ բոլոր լուրերուն: Դժբախտաբար, վերջին տարիներուն ծրագրուած ձեւով լրատուական



միջոցներ նոյն սուտը կը կրկնեն, մինչեւ որ իրենք ալ կը հաւատան իրենց սուտին: Մարդու «գոմպիացման» կամ չնտածող էակի մը վերածումի հոլովոյթ մը կը գործէ լուրերու եւ վերլուծումի բաժինին մէջ: Լուրը կը պատրաստուի այնպիսի ձեւով մը որ մարդիկ հաւատան, նոյնիսկ եթէ ծանր կամ անհաւատալի ըլլայ ան: Օրինակի համար 2015 թուականէն ի վեր տեւող Եմէնի պատերազմը կը ներկայացուի որպէս աննշան պատերազմ մը, թէւ հարիւր հազարաւոր մարդու կեանք խլած է եւ անոնց մեծ մասը երեխաներ: Ինչո՞ւ այս պատերազմը որ կը սանձագերծուի Մեուտական Արաբիոյ կողմէ ուրիշ արաբ ժողովուրդի մը դէմ կը ներկայացուի աննշան ձեւով, իսկ Ուքրանիոյ պատերազմը իր վրայ կեդրոնացուց բոլոր լրատուական միջոցներու ուշադրութիւնը: Կ'երեւի որովհետեւ ուքրանացիներ կապոյտ աչք ունին եւ սպիտակամորթ են, իսկ եմէնցիները թխամորթ են: Այս կողմնակալ լրատուութիւնը կը քանդէ հիմերը արժանապատիւ լրագրութեան եւ զայն կը դարձնէ յաճախորդ ամենաշատ դրամ տուողին:



Ուքրանիոյ տագնապի պատճառները եւ հետեւանքները սերտելէ առաջ հարկ է վերաքաղ մը կատարել արդի քաղաքական հոլովոյթին, թէ ո՞ւր կ'երթանք այս անդէկ նաւուն մէջ, որ կը կոչուի մարդկային քաղաքակրթութիւն: Դանիացի մեծ քաղաքական փիլիսոփայ Կեորկ Սեօրընսըն իր վերջին գիրքին «Վերաքաղ Համաշխարհային Նոր Համակարգի Մասին»ի մէջ կը գրէ հետեւեալը. «Պետութեան մը հզօրութիւնը իր ֆիզիքական կարողութիւններով չէ միայն, այլ իր ներկայացուցած բարոյական սկզբունքներով»: Այս հաստատումը որքան խոր է եւ որքան ճիշդ: Երթանք ետ դէպի գաղութատիրութեան կամ իմփերիալիզմի շրջան: Ինչո՞ւ գաղութատիրը չկրցաւ դիմանալ

անկախութեան ձգտող ժողովուրդներու ճնշումին: Որովհետեւ թէւ ունէր ֆիզիքական հսկայ ուժ, սակայն կորսնցուցած էր բարոյական ուժը: Գրաւեալ ժողովուրդները այլեւս գաղութատիրի սուտ խոստումներուն չէին հաւատար: Արթնցած էին: Նոյնն է պարագան հիմա: Միաբեւեռ աշխարհի վարպետները ԱՄՆ-ի առաջնորդութեամբ ունէին ֆիզիքական մեծ ուժ, սակայն ունէին բարոյականը: Այս է մեծ հարցումը: Աֆղանիստանի, Իրաքի, Սերպիոյ, Լիպիոյ, Սուրիոյ եւ Եմէնի պատերազմները ու Պաղեստինի ժողովուրդին տառապանքը նմոյշ մըն են այն բարոյական անկումին որու հասան մեծամեծ պետութիւններ: Բարոյական ուժի տկարացումն է, ըստ մասնագետներու, որ հիւժեց եւ տկարացուց միաբեւեռ համակարգը, որ հաստատուած էր Խորհրդային Միութեան փլուզումէն ետք: Խորհրդային Միութեան գոյութիւնը Արեւմուտքին կը պարտադրէր ձեւով մը ըլլալ բարոյական ուժ սիրաշահելու համար ժողովուրդները:

Այո, ի՞նչ կ'արժէ եթէ ունիս ֆիզիքական ուժ, սակայն կորսնցուցիր քաղաքացիներուդ կամ այլ ժողովուրդներու վստահութիւնը: Վստահութիւնը ամենամեծ արժէքն է պետութիւններու միջեւ յարաբերութեան: Այդ արժէքը կորսուած է այսօր: Նոյնիսկ դաշնակից պետութիւններ անվստահութիւն ունին իրարու հանդէպ: Ռուսիա չի վստահիր Արեւմուտքին եւ փոխադարձաբար: Այս է հիմնական պատճառը Ուքրանիոյ տագնապին: Չկայ վստահութիւն:

Սերտելու համար Ուքրանիոյ պատերազմին պատճառները, կրնանք սկսիլ հետեւեալ հաստատումով: Կարդալով Ռուսիոյ Դաշնութեան զինուորական հայեցակարգը, ես



նկատեցի ա՛յն որ ռուսական պետութեան տարածքէն բացի՝ Ռուսիոյ համար կարելոր էն հետեւեալ չորս շրջանները. Պելառուսիա, Ուքրանիա, Հայաստան-Վրաստան եւ Ղազախստան: Ինչո՞ւ: Պատճառը յստակ է: Որեւէ օտար ներթափանցում այս շրջաններուն մէջ պիտի վտանգէ Ռուսիոյ սահմանները եւ այդ շրջաններու օգտագործումով կրնայ վնասակար եւ վտանգաւոր գործունէութիւն սկսիլ ռուսական հողերու նկատմամբ: Ռուսիան ըլլալով դաշտային երկիր, միշտ վախ ունեցած է իր արեւմտեան եւ արեւելեան դրացիներէն: Պատմութիւնը ամենամեծ վկան է այս հաստատումին: Ֆրանսացի Նափոլէոն Պոնափարթ 1812-ին եւ գերմանացի Հիթլեր 1941-ին շաբաթներու ընթացքին հասան Մոսկուա: Այս է պատճառը, որ Ռուսիա ինքզինք ուզած է շրջապատել բարեկամ, չէզոք կամ դաշնակից պետութիւններով: Այս է պատճառը, որ երբ Խորհրդային Միութիւնը յօժարեցաւ Վարշավիոյ ուխտէն հրաժարիլ, փոխարէնը պահանջեց խոստում, թէ Արեւմուտքը պիտի չթափանցէ Ուխտի անդամ արեւելեան Եւրոպայի երկիրներ՝ Չեխիա, Սլովակիա, Հունգարիա, Լեհաստան, Պուլկարիա, Ռումանիա, նաեւ պիտի չթափանցէ Խորհրդային Միութեան նախկին անդամ երկիրներ՝ Մոլտովա, Ուքրանիա, Վրաստան, Հայաստան, Ատրպէյճան, Էսթոնիա, Լատվիա, Լիթուանիա եւ Պելառուսիա: Մակայն 1997-ին սկսաւ Հիւսիսային Ատլանտեան Ուխտի թափանցումը դէպի Վարշավիոյ Ուխտի նախկին երկիրներ, որոնք մէկ առ մէկ միացան ՆԱԹՕ-ին: ԱՄՆ-ի նախկին նախագահ Պիլ Բիլնթըն սկսաւ այս հոլովոյթը, ոտնակոխելով այն խոստումը, որ նախկին նախագահ Ռոնալտ Ռեյկըն տուած էր Խորհրդային Միութեան վերջին նախագահ Միխայիլ Կորպաչեւին: Արեւմուտքը այլեւս Ռուսիոյ հաշիւը չէր ընէր: ՆԱԹՕ-ին միացան նաեւ նախկին Եուկոսլաւիոյ անդամներէն Սլովենիան, Խորուաթիան, Հիւսիսային Մակեդոնիան եւ Մոնթենեկրօն: Ալպանիան ալ միացաւ ՆԱԹՕ-ին 2009 թուականին: Այսինքն Եւրոպայի մէջ մնացին քանի մը երկիրներ, որոնք չմիացան ՆԱԹՕ-ին: Ֆինլանտա, Աւստրիա, Զուիցերիա, Շուէտ, Պոսնիա-Հերցեկովինա եւ Սերպիա այդ երկիրներն են:

2003-ին Իրաք կատարուած ԱՄՆ-ի ներխուժումէն ետք, առանց ստանալու ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի քուէն, Ռուսիա զգաց վտանգը այս քայլին եւ այդ օրերուն նախագահ Փութին իր մօտ հրաւիրեց զենքերու արտադրութեան պատասխանատու Ռոկոզինը, տրամադրեց բաւական մեծ ամաւարկ կամ պիտճէ եւ իրմէ պահանջեց արագօրէն արդիականացնել ռուսական բանակը: Այդ հոլովոյթը իր աւարտին հասաւ 2010 թուականի շուրջ: Նախագահ Փութինն է որ սկսաւ վերականգնել Ռուսիան ազգայնական եւ կրօնական հիմերու վրայ: Հին օրերէն, ցարերու ժամանակէն, Ռուս Ուղղափառ եկեղեցին եւ ազգային արժէքները կազմած էին հիմերը Ռուսիոյ հզօրութեան: Պատմութիւնը վկայ: Փութին գիտցաւ օգտագործել այս երկու գործօնները իր քաղաքականութեան օգտին: ՆԱԹՕ-ի դեկավարութեամբ ԱՄՆ շարունակեց իր թափանցումը դէպի արեւելք: Այս անգամ մօտեցան Ռուսիոյ պետութեան ռազմավարական շրջաններէն համարուող Ուքրանիային: Հոն մտան ոչ-կառավարական բարեսիրական միութիւններու (Non Governmental Organization) քօղին տակ: 2014-ին հոն կազմակերպեցին պետական հարուած, ռուսամէտ նախագահ Եանուքովիչը հեռացնելով իշխանութենէն: Իշխանութեան հասած դեկավարութեան մէջ մեծ էր կշիռը ֆաշիստական թեքում ունեցող ուժերու, որոնց կնքահայրն էր Նացի Գերմանիոյ գործակալ եւ ոճրագործ Պանտերան: Այս խումբը սկսաւ մշակել լուրջ քաղաքականութիւն երկիրը Արեւմուտքի մականին տակ առնելու համար: Մակայն այս մարդիկ եւ Արեւմուտքի քաղաքականութիւնը մշակողները մոռցան մէկ կարելոր հարց, թէ բնութեան մէջ ամէն շարժում ունի հակաշարժում եւ երբ մեծ պետութիւններ կը զգան իրենց դէմ վտանգ ու կը նկատեն զիրենք շրջափակելու քայլ, կը դիմեն ուժի, դիւանագիտութեան ձախողութենէն ետք: Այս է որ կատարեց Ռուսիան, երբ նկատեց Ուքրանիոյ մէջ տեղի ունեցող թափանցումը, կատարեց երկու քայլ: Առաջինը հանրաքուէի միջոցով Խրիմ թերակղզիի վերակցումն էր Ռուսիոյ: Այս թերակղզիին տիրողը



մեծ հակակշիռ կ'ունենայ Մեւ Ծովուն վրայ եւ հոն կը գտնուին ռուսական նաւատարմիղին հարաւային թեւի պաշտպանութեան օղակները: Պատմութեան մէջ նաեւ Քիւր կը հանդիսանար առաջին ռուսական պետութեան մայրաքաղաքար 890 թուականէն սկսեալ: Ռուս ժողովուրդի ազգային արժէքներուն մէջ Ուքրանիա մեծ դեր ունի: Յաջորդ քայլն էր Ուքրանիոյ երկու ռուսախօս նահանգներու՝ Տոնեցքի եւ Լուկանսքի ըմբոստութիւնը Քիւրի կառավարութեան դէմ: Այս շարժումը օգտագործուեցաւ որպէս լծակ Ռուսիոյ կողմէ զսպելու համար Ուքրանիոյ քայլերը:

Այս քայլերու դիմաց, փոխանակ երթալու երկխօսութեան, Քիւրի իշխանութիւնները եւ Արեւմուտքը զացին ծայրայեղութեան:

Իր գիրքին մէջ, դանիացի քաղաքական փիլիսոփայ Սեօրընսըն կը յայտարարէ, թէ Արեւմուտքի մէջ տեսիլք ունեցող ղեկավարներու թիւը նուազած է եւ այս մէկը փաստուեցաւ այս պարագային: Կանուխէն քայլեր չառին լուծելու համար Ուքրանիոյ տագնապը, այլ հակառակը զինեցին Քիւրը եւ զայն մղեցին Տոնեցքի եւ Լուկանսքի դէմ սկսելու մաքրագործումի արշաւ մը: Հազարաւոր քաղաքացիներ կորսնցուցին իրենց կեանքը: Ուքրանիա շարունակեց իր արշաւը ինքզինք օտարացնելու համար իր սլաւական արժէքներէն, մանաւանդ Ռուսիայէն, դեմոկրատացումի քօղին տակ: Երկխօսութեան բացակայութեան, Ռուսիա հաստատեց իր պայմանները ընդունելու համար Ուքրանիոյ ներկայ իշխանութիւններու օրինականութիւնը: Ամենակարեւոր պայմանն էր ընդունիլ երկրին չեզոքութիւնը Ֆինլանտայի նման: Այսինքն Ուքրանիա մաս պիտի չկազմէր ՆԱԹՕ-ին, որ Ռուսիոյ կողմէ դասուած է «ոչ բարեկամ կամակերպութիւն»: Շատեր պիտի հարցնեն, թէ ո՞վ իրաւունք տուաւ Ռուսիոյ իր պայմանները պարտադրելու: Ռուսիոյ հետագօտական շրջանակներ շատ լաւ գիտեն Արեւմուտքի հին ծրագիր մը, որու նպատակն է շրջապատել Ռուսիան եւ մէջէն փլուզում յառաջացնել, ձեռք դնելու համար այդ երկրի անձայրածիր բնական հարստութեան: Նափուլէն եւ Հիթլեր այդ ծրագրի գործադրողներ էին: 1990-ական թուականներուն, Չեչենիոյ պատերազմի նպատակներէն մէկն ալ այս էր: Բնականաբար Ռուսիոյ պայմանները չընդունուեցան Արեւմուտքի ուժերուն կողմէ: Պատասխանը եղաւ զօրաշարժ եւ մուտք Ուքրանիա Տոնպասի ռուսախօս շրջանէն ու նաւահանգիստներէն: Երբ մեծ կշիռ ունեցող պետութիւններ զգան վտանգ մը, սկիզբը կ'ազդարարեն դիմացի կողմը եւ երբ ստանան ժխտական պատասխան, այն ատեն կը դիմեն կտրուկ քայլերու: Այս է որ կատարեց Ռուսիան: Դժբախտաբար անվստահութեան մթնոլորտը եւ ժխտական կեցուածքները յառաջացուցին այսօրուան վիճակը:

Նոր համակարգի նշանները կ'երեւին, սակայն ան ցարդ չընդունուիւր ԱՄՆ-ի կողմէ: Միաբեւեռ աշխարհը սկսած է տկարութեան նշաններ ցոյց տալ: Բարոյական արժէքներու վրայ հիմնուած համաշխարհային համակարգի մը հաստատումը կարելի՞ է Ուքրանիոյ պատերազմէն ետք: Արեւմուտքը, ԱՄՆ-ի ղեկավարութեամբ, պիտի ընդունի՞ իր որոշումները կիսել նոր ուժերու հետ: Դժբախտաբար ինչ որ կ'երեւի ցարդ այդ ուղղութեամբ յոյս չի ներշնչեր: Նոր համակարգը պիտի հաստատուի, սակայն ի՞նչ գիտով, այդ է հիմնական հարցումը:

Վ.Թոսունեան

«Պայքար» շաբաթաթերթ, 4 Ապրիլ 2022

ՀԵՌԱԿԱՅ ՄՐՏԲԱՅ ԶՐՈՅՑ

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆԻՆ ՀԵՏ



4 Օգոստոս 2020ը, մարդկային սպանողով, աներեւակայելի քանդումներով - բնակարան, գործատեղի, վաճառատուն, ընկերություն, եւայլն, փողոցային, թաղային ու շրջանային կործանումներով, ժողովրդային խուճապներով ու հոգեբանական ցնցումներով, ոչ միայն ահաւոր ու սարսափազդու, այլեւ՝ համաշխարհային առումով ու միջազգային ձեւաչափերով, աննախընթաց եւ աննկարագրելի, անբացատրելի եւ անկրկնելի

էին, երբ Պէյրութի նաւահանգիստը յօդս ցնդեցաւ, ահաւոր աւերնար ու զոհեր սփռելով աջ ու ահեակ:

Ճիշդ է, պատմութեան ընթացքին արձանագրուած են դէպքեր ու պատահարներ, մեծ թէ փոքր տարողութիւններով, սակայն, այն ինչ որ տեղի ունեցաւ Պէյրութի նաւահանգիստին մէջ, իրօք, ոչ մէկ այլ նմանութիւններու կամ համեմատութիւններու հետ կարելի է չափանշել, որովհետեւ, մինչեւ օրս, տակաւին չպարզուեցաւ կամ չբացայայտուեցաւ, թէ այդ ահացունց պայթիւնավտանգութիւնը ինչու տեղի ունեցաւ, ո՞վ էր օգտուողը անկէ, ա՞յս ոճով կարելի էր «հաշուեյարդար»ներ տեսնել, թէկուզ (ու մի գուցէ) ան ըլլար պատահական եւ կամ՝ ոչ կազմակերպուած կամ դաւադրուած:

Այս «մուտք»ը, առանց խորանալու ահաբեկչական թղթածրարին մէջ, կը միտի մեր հայեացքը ուղղել կամ կեդրոնացնել բոլորովին այլ հարթակի մը վրայ, որ առընչուած ըլլալով հանդերձ այս ԱՂԷՏԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ հետ, կը ձգտի ակնարկ մը նետել, թէ՛ այսօրուան դրութեամբ, երբ զոհերու ու վիրաւորներու հսկայ «բանակ» մը կայ, աջ ու ձախ, հոս ու հոն, պահ մը մտածուած էր (է) ինչպէ՞ս պէտք է վերաբերուիլ այս աղէտին եւ անոր պատճառած զոհերուն ու հետեւանքներուն հետ, հակառակ բոլոր ձեւի շնորհակալ օժանդակութիւններուն ու խնամատարութեանց:

Որքան ալ ըլլան կամ ներկայացուին բացատրութիւններ, պաշտօնական թէ այլապէս, տակաւին ոչ մէկ համոզկերութեամբ կարելի եղաւ հասնիլ ընդունելի ու տրամաբանական եզրակացութիւններու:

«Արդարութիւն», «ճշմարտութիւն», ո՞ր կարելի է փնտռել կամ գտնել զանոնք, երբ պատմութիւնը ցոյց տուած է, որ անոնք չկան, չեն կրնար գոյութիւն ունենալ, ինչ ալ պահանջներն ու հետապնդումները, ովքեր ալ ըլլան անոնց պատասխանատուները եւ յանցաւորները:

Լիբանանահայեր եւս տուժեցին այս աղէտէն, ոմանք իրենց կեանքով, ուրիշներ՝ այլ վերքերով, սակայն, բոլորն ալ, հարուածուեցան համատարած ցաւով ու վիշտով, մանաւանդ երբ անոնց մէջ կային այնպիսի դէմքեր եւ անձնաւորութիւններ, որոնք հայկական կեանքին մէջ կը գրաւէին ու կը գրաւէն ԱԶԴԵՅԻԿ ու ՀԵՂԻՆԱԿԱԻՈՐ դիրքեր:

Այս առընչութեամբ, մեր առաջին մտածումը կ'երթայ, շատ յարգելի ու երեւելի ազգային Պրն. ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆԻՆ, որ Սփիւռքի ու Հայաստանի իրականութեանց մէջ, հանրածանօթ մտաւորական մըն է, իբրեւ մատենագէտ, գրքագէտ, հայագէտ, դասախօս,



խմբագիր, հեղինակ, հասարակական գործիչ, եռուն վաստակով եւ արդիւնաւետ ներդրումներով:

Ժիրայրը եւս վիրաւորուեցաւ՝ ձախ աչքը կորսնցնելով այդ չարաբաստիկ աղետէն, իր բնակարանը եւս ենթարկուելով ծանր վնասներու, գտնուելով նաւահանգիստի հանդիպակաց կողմը:

Ժիրայրին, ընտանիքին եւ առ հասարակ զինք ճանչցողներուն համար, այս «դառն ճակատագիր»ը ինչպէս տխուր էր, որովհետեւ, իր ամբողջ կեանքի ընթացքին, իր աչքը իր ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՅՄՆ էր, իր արտադրած ու խմբագրած, գրառած ու հեղինակած բազմաթիւ հրատարակութիւններով, ուսումնասիրութիւններով, մենագրութիւններով ու հետազոտութիւններով:

Այսօր, Ժիրայրը կը գտնուի իր աղջկան տունը, Պոսթոն (Ամերիկա), հետեւելով բուժումներու, մասնագէտ ակնաբուժներու հոգատարութեան տակ, սակայն, սիրտն ու հոգին Պէյրութ են, իր ընկերային լայն շրջանակներուն մօտ, իր հայագիտական ու խմբագրական բնագաւառներուն մէջ, սպասելով այն երջանիկ պահուն, երբ կը վերադառնայ տուն եւ կը շարունակէ նուիրուիլ իր հարազատ աշխարհին:

Անձամբ, աւելի քան յաճախակի հեռախօսազրոյցներով, հաղորդակից կը դառնայինք եւ կ'անդրադառնայինք ազգային, լիբանանեան ու հայրենական տազնապնդներուն ու հրատապութիւններուն, ուր Ժիրայրը միշտ արթուն էր, սթափ ու մտացի, իր տեսակէտներուն ու գաղափարներուն հաւատարմութեամբ:

Ասկէ՝ մտքովս անցաւ, ԱՆՁՆԱԿԱՆ եւ ԱՆԱԿՆԿԱԼ նախաձեռնութեամբ, անոր հետ ունենալ մտերմիկ, անկեղծ ու թափանցիկ հեռազրոյց մը, յիշեցնելով որ՝ իր «բացակայութիւն»ը, նաեւ պայծառ ներկայութիւն մըն է, որուն, անհրաժեշտութեան կարօտ կը զգան զինք սիրող եւ յարգող բազմաթիւ գրչակիցներ, մտաւորականներ, բարեկամներ, ընկերներ եւ աշակերտ-ուսանողներ:

Ահաւասիկ այդ հարց ու պատասխանի արձանագրութեան մէկ կենդանի պատկերը, կ'ուզեմ սեփականութիւնը դարձնել բոլորին:

Հարցում 1: Միրելի Ժիրայր, պիտի չխօսիմ այն տխրութեան մասին, որուն ցաւալիօրէն եւ անտեղիօրէն ենթարկուեցար, բայց, քու մտածումներդ ի՞նչ էին այդ խառնաշփոթութեան մէջ եւ, յետագային, ինչպէ՞ս դիմակայեցիր այդ իրավիճակը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի (Անթիլիաս) գրասենեակէս տուն դարձիս, ճաշելէ, թեթեւ մը մրափէ մը ետք, տակաւին ինքզինքս չգտած, դորդագին ցնցումներ եւ ահռելի օղի հոսանք մը զիս շարտեցին անկողին, ուսկից քանի մը երկվայրկեան առաջ ելած էի: Անկողնին զսպանակները մարմինս բարձրացուցին օղը: Կրկին ոտքի էի: Կուրծքիս, գլխուս, մարմինիս բոլոր կողմերը ստացած էին ջարդուած փեղկերու, ապակիներու եւ զանազան իրերու մասեր: Ոչ մէկ ցաւ՝ այդ պահուն: Բնագոյաբար մատներս տարի աչքերուս: Աջ ափի մատներէս մէկ-երկուքը մտան խոռոչի մը մէջ: Ձգացի դուրս հոսող թանձր հեղուկի մը ներկայութիւնը: Չախ ափիս մատները կանգ առին կոպիճիս շուրջ: Չախ արմուկէս կը հոսէր անդադրում արիւն: Չորս կողմս մթնցած էր: Թէեւ դուրսը տակաւին ամառնային արեւը կը շարունակէր յամենալ: Ձգացի, որ տեսողութիւնս կորսնցուցած էի, առանց գիտակցելու անոր տարողութիւնը: Ջուարթը, խոհանոցէն ձայն տալով եւ խարխափելով հասաւ ննջասենեակ եւ զիս դժուարութեամբ զանազան արգելակներ հրելով-հրմշտկելով զիս առաջնորդեց միջանցք, տան գլխաւոր մուտքին մօտ: Շուրջ կէս ժամ առաւ թաքսի մը գտնելը: Թաքսիի գրասենեակ մը կար մեր շէնքին տակը: Կիսաքանդ միակ թաքսի մը մեզ փորձեց հիւանդանոց մը տեղափոխել: Մեր տան կողքի նորաշէն հոյակապ հիւանդանոցն ալ քանդումի ենթարկուած էր: Կարգ մը հիւանդանոցներ, տեղի չգոյութեան պատճառով չընդունեցին: Կամ իրենք ալ մասնակի քանդումի ենթարկուած էին եւ կամ ալ ազատ տեղ



չունէին: Վերջապէս երկար չարչարանքէ յետոյ հասանք Նաքքաշի "Eye and Ear" հիւանդանոցը, ուր տասնեակներով իրենց աչքերէն վնասուած, վիրաւորուած կանխած էին մեզ: Հերթաբար ամբողջ գիշերը վիրահատումներ կ'ըլլային: Իմ հերթս հասաւ յաջորդ առաւօտուն: Արդիւնք՝ աջ աչքս, որ լրիւ առողջ էր, կորսնցուցած էի, իսկ հիւանդոս ձախ աչքս, վիրաւոր, 20 առ հարիւր տեսողութիւնը կը պահէր:

Գիտեմ, սիրելի Պարոյր, պատասխանս երկարեցի: Սակայն պէտք էր արձանագրուէր, եզրակացութենէն առաջ: Այս ամբողջ ընթացքին, եւ նաեւ յաջորդող օրերուն, շաբաթներուն եւ մէկ-երկու ամիսներուն, սթոյնիքեան անտարբերութիւն մը պատած էր ամբողջ էութիւնս: Ամբողջական պարապութիւն մը կ'լանած էր զիս: Ինձմէ կը վանէի ամէն մտածողութիւն: Կ'ապրէի պարապի մէջ: Պատահածին ահաւորութիւնը աւելի ուշ կամաց-կամաց բոյն դրաւ մէջս: Սկսայ անդրադառնալ պատահածին ահաւորութեան, երբ անդրադարձայ կիսատ մնացած բանասիրական աշխատանքներու... Առանց աչքի լոյսի՝ ինչ բանասէր, մատենագէտ... Մնաք բարով արեւ եւ...:

Հարցում 2: Նոր պայմաններուն ու տարբեր միջավայրի մէջ, ընթացիկ կեանքդ ինչպէ՞ս կը նկարագրես եւ ո՞ր կը գտնես ատոնց յարմարուելու կարելիութիւնները:

Դժոխային արկածէն յետոյ, ինչպէս առաջին պատասխանիս մէջ նկարագրեցի, ապաստանած էինք աղջկանս՝ Արփիին բնակարանը: Պոսթոնաբնակ մեծ աղջիկս, մեզմով մտահոգ, մանաւանդ իմ աչքերուս վիճակով, Պոսթոնի լաւագոյն ակնաբուժարաններու նշանաւոր ակնաբոյժներու հետ ժամադրութիւններ առած էր: Արկածէն շուրջ երկու ամիս անց փոխադրուեցանք Պոսթոն: Համոզուած էի, որ 2-3 ամիս դարմանուելէ ետք պիտի վերադառնայինք Պէլրուօ: Դարմանումները երկարեցան: 4-5 ամիս անց վիրաբուժական միջամտութեան ենթարկուեցաւ ձախ աչքս: Առաջին լաւատեսութեան յաջորդեց յուսախաբութիւն մը. միջամտութիւնը ձախողած էր: Եւ դարմանումը մինչեւ օրս կը շարունակուի:

Պոսթոնին ծանօթ էինք: Մարալին ամուսինն ու զոյգ մանչերը, ինամիները հոն էին: Զուարթը ամէն ամառ կ'այցելէր զիրենք: Ես ալ՝ ստեպ-ստեպ: Ծանօթութիւններ ունէինք: Երեց սերունդի մտաւորականներ՝ Գրիգոր Քէօսէանը, Հ. Գրիգոր Վրդ. Մազուտեանը, Արայ Գալայճեանը, Վաչէ Ղազարեանը եւ ուրիշներ հոս էին: Խումբը այժմ նօսրացած է: Փեսայիս՝ Վաչէին եւ Մարալին բարեկամները եւ ընկերները դարձան նաեւ մերը:

Ուրեմն, երբ --ի Սեպտեմբերի վերջերուն ժամանեցինք Պոսթոն, շրջապատուեցանք ընտանեկան հարազատներով եւ հին ու նոր բարեկամներով: Եղանակը հիանալի էր: Ուշացած աշունը՝ շատ հաճելի: Առաջին ձիւնը՝ առատ, բլուր կազմեց ճիշդ մեր տան շրջապատը: Սպիտակի անծայրածիր տիրապետութիւնը:

Գինովութիւնը կամաց-կամաց փարատեցաւ: Գիշերները, մթութեան անձնատուր, սկսան երկարիլ, երկարիլ... Յիշատակներ, մեծ ու փոքր, յուշեր, ծուէն-ծուէն, սկսան այցի գալ ու խոովել քունս: Ետին մնացած դէպքեր ու դէմքեր, ութսունամեայ կեանք մը ամբողջ, տակաւին երէկ, ներկայ էին, սկսան անցեալ դառնալ, երբեմն ձգելով խոր սպիներ, երբեմն ալ նոյնքան եւ աւելի ցաւ պատճառող, ինչպէս իսկական, ֆիզիքական վերքերը: Կարօտաբաղձութիւն մը, որ կ'ընկերանայ անձիդ, մանաւանդ երբ առանձնութեան մէջ կը տուայտիս:

Բարեբախտաբար շուրջդ են կինդ, աղջիկներդ, մեծ ու փոքր թոռներդ, փեսայդ, իրենց հարազատներով ու բարեկամներով: Ցաւը կը մեղմանայ, բայց չանհետանար: Ութսունամեայ արմատներով անցեալ մը յաճախ այցի կու գայ՝ քնացած թէ արթուն:

Տակաւի՛ն...:

Հազիւ ոտք կոխած նոր աշխարհ, յաջորդ օրն իսկ բռնկած արցախեան 44օրեայ պատերազմը, նոր յուսախաբութիւններով, նոր խոցերով ու աղէտներով: Ուրիշ բան



կ'ականկալէինք, սակայն դեմ յանդիման գտնուեցանք տխուր ճշմարտութեան մը... Դարաւոր անմիաբանութիւնը կրկին ցցեց իր կոտորուածները, մոռացութեան մատնելով ազգ ու ազգային շահ, գերադասելին ու անգերադասելին: Հայրենիքը անմիաբան, Սփիւռքը բաժան-բաժան...: Օրնիրուն, լոյսէ զրկուած աչքերով, ականջս հեռուստացոյցի կայաններուն եւ հեռաձայնի լուսափողներուն, ականջալուր կը փորձէի դառնալ լիբանանեան հայրենիքի անէութեան, իսկ մայր հայրենիքի անշքացման...:

Այս բոլորին մէջ՝ լոյսի նշոյլ մը անձնական գետնի վրայ: Նախ՝ բարեկամներ, սիրելի ու սրտամօտ, կը յիշեն ութսունամեայ իրենց բարեկամը, որ ես եմ: Այդ ե՛րբ դարձա՛յ ութսունամեայ... երիտասարդ: Երկրորդ, գրեթէ աւարտին հասած զիրքի մը ձեռագիրը, մտաւորական ընկերոջ մը օժանդակութեամբ եւ խմբագրութեամբ, լոյսին կու գար Մեծի Տանն Կիլիկիոյ Գեորգ Մելիտիսեցի գրական ֆոնտին (ԳՄԳՄ) հրատարակութեամբ:

Ուրիշ մըն ալ:

Մասնագէտ ակնաբոյժներու շնորհիւ, տեսողութիւնս քիչ մը եւս կը բարելաւուի կարճատեսութեան ակնոցով մը, որ զիրքի մը էջերը գրեթէ քթիս փակցուցած բառ առ բառ կ'ընթերցեմ քանի մը ամիսներու ընթացքին, օրական 4-5 ժամ տքնելով, աւելի ճիշդ՝ չարչարուելով: Այդ զիրքին հեղինակն է, իմ մտերիմ բարեկամս, հայրենի գրող Եւրի Տէր Խաչատրեան (Երուանդ Տէր Խաչատրեան). զիրքին անունը՝ «Խաղաղ Տաղեր», Երեւան, 2021, 567 էջ:

Այս բոլորէն անկախ, հետաքրքրութիւններու յագուրդ տալու համար, ամէն օր կը հետեւիմ Հ1ի BBCի, CNNի եւ այլ հեռատեսիլներու լուրերուն եւ մեկնաբանութիւններուն ու կը ստանամ տեղեկութիւններ: Հեռաձայնային կապերով կը հետեւիմ յատկապէս Հայաստանի եւ Լիբանանի քաղաքական զարգացումներուն, Պոսթօնի (Ռոտ Այլենտ) մեր քառակի խօսակցութիւններուն, ինչպէս նաեւ տարբեր երկիրներ ցրուած ընկերներու եւ բարեկամներու հետ հեռաձայնային խօսակցութիւններով:

Վստահաբար կը պատկերացնես, թէ այս բոլորը կատարելու համար որքա՛ն ժամանակ կը սպասեմ եւ ջանք կը գործադրեմ: Անշուշտ որ բացասական լուրեր եւ յուսախաբութիւններ հոգեկան ու նաեւ ֆիզիքական ահռելի տանջանք կը պատճառեն:

Հարցում 3: Գիտենք, ամէն ինչի հետեւող ես եւ արձագանգող, ի՞նչ միջոցներու կը դիմես քու հետաքրքրութիւններդ (որոնք բազմաթիւ ու բազմատեսակ են), գոհացնելու եւ քու համոզումներդ ամրացնելու:

Գուշակութիւններու հաւատացող չեմ եւ չեմ եղած:

Լաւատես եղած եմ, երբեմն ընկրկումներով: Յոռեգոյն կացութիւններու մէջ շուրջիներուս լաւատեսութիւն թելադրած եմ:

Լիբանանը, որպէս ծննդավայր-հայրենիք, յաճախ դիմագրաւած է արտաքին եւ ներքին ցնցումներ, որոնցմէ մեծապէս տուժած է նաեւ լիբանանահայութիւնը: Արտագաղթած են, միւս համայնքներու կողքին, նաեւ հայերը: Հակառակ բոլոր ելեւէջներուն փոքրամասնութիւն մը պիտի շարունակէ մնալ հոն: Լիբանանը տարբեր կառոյցով պիտի շարունակէ գոյատեւել... Այս կացութիւնը որքան ալ երկարի, օր մը պիտի լուծումի մը յանգի:

Հայաստանի, մայր հայրենիքի, պարագան բոլորովին տարբեր է: Ժամանակաւոր ցնցումներ, պարտութիւններ կրնան մեծապէս ժխտական անդրադարձ ունենալ ժողովուրդին վրայ: Արտագաղթը կրնայ աւերներ գործել: Սակայն պէտք չէ մոռնալ, որ հոն կայ հողը, հայրենի հողը, որմէ զրկուեցաւ ատենին արեւմտահայութիւնը, երբ արմատախիլ բեկորներու վերածուած՝ շարտուեցաւ աշխարհի ծագերուն: Ոտքին տակ հող ունենալը այլ բան է: Կը մնայ որ հայ ժողովուրդը առաջնորդող մարդիկ գիտնան ուղիղ ըմբռնել այս իրողութիւնը եւ ներկայացած առիթները օգտագործեն հաւաքական նպատակներու համար:



Հարցում 4: Հետաքրքրական է, այս երկար ժամանակամիջոցին, արդեօք քեզմով եւ առողջութեամբ մտահոգուողներ եղան՝ Սփիւռքէն թէ Հայաստանէն (անհատ, պաշտօնակից թէ կազմակերպութիւն), որոնցմէ կ'ակնկալէիր, եւ անտարակոյս, արձանագրուած ըլլալու են նման պարագաներ, բայց, նաեւ ցաւ զգացիր, որ ուրիշներէ խոր հիասթափութիւն ապրեցար...:

Արամ Ա. Կաթողիկոսը առաջին օրէն հետաքրքրուեցաւ ինձմով: Կաթողիկոսարանի հետ կապը մինչեւ օրս կը շարունակուի դիւանապետին եւ միաբանութեան տարբեր աստիճանի կղերականներուն հետ: Ուրիշներէ ակնկալութիւն չեմ ունեցած ու չունիմ:

Անհատական նախաձեռնութեամբ կապ հաստատողներ շատուշատ են. ե՛ւ հայրենիքի ե՛ւ Սփիւռքի տարբեր շրջաններէ. Երոպա (Փարիզ, Լոնտոն), ԱՄՆ եւ Գանատա, Ուրուկուէյ: Լիբանանէն՝ սերտ բարեկամներ, նախկին պաշտօնակիցներ մնայուն կապի մէջ են հետս: Գոհար մօրաքոյրս եւ զուակները, առաջին տեղը կը գրաւեն, ինչպէս Բագին եղբայրս՝ Լոնտոնէն: 80ամեակիս առիթով անհամար շնորհատրութիւններ եւ բարեմաղթանքներ՝ հայրենիքի եւ Սփիւռքի զանազան կողմերէն: Անշուշտ, այս բոլորը կը գօտեպնդեն զիս:

Այս հարցումին կը փափաքիմ միայն դրական պատասխան տալ...:

Հարցում 5: Արագ խորհրդածութեան կարգով, ի՞նչ ունիս ըսելիք՝ քու անհատական կեանքիդ եւ ընդհանրապէս սրտի խօսք՝ քու սիրեցեալներուդ ու մեր ժողովուրդին, այդ դժուարին օրերուն առիթով, որոնք, իրօք, ճգնաժամային են:

Ընդհանրապէս նման առիթներով կատարուած հարցազրոյցներուն վերջինը կ'ըլլայ՝ «Ի՞նչ ունիս ըսելիք...»: Բարեբախտաբար կրօնապետ, քաղաքական եւ այլ կազմակերպութիւններու ղեկավար չեմ: Այլապէս ինձմէ պիտի ուզուէր պատգամ մը...:

Պէյրութը հարուածող Օգոստոս 4ի (2020) աղէտը պատճառ դարձաւ շուրջ 2 ամիս անց հեռանալու Լիբանանէն դարմանումի հետամուտ, որ ցարդ կը շարունակուի: Եթէ չպատահէր այդ աղէտը, ես ալ ձեր շարքին պիտի շարունակէի մնալ ձեզի հետ եւ ենթաարկուիլ Լիբանանին պարտադրուած անտանելի վիճակին: Հաւատացէ՛ք ամէն՝ վայրկեան կիսապիմ հոն մնացածներուդ հետ... Մաղթանքս պիտի ըլլար, որ մեզի եւ ամբողջ Լիբանանին պարտադրուած այս անել կացութիւնը դիմագրաւէինք միացեալ ճիգերով, փոխան բաժան-բաժան կեցուածքներով, մինչեւ որ հեռաւոր հորիզոնին վրայ սկսի պլպլալ յոյսի նշոյլ մը...:

Շնորհակալութիւն այս ջերմ գրոյցին համար, սիրելի Ժիրայր, որ, անկասկած, կենդանի հաղորդակցութեան մը մէկ համեստ պատկերն է, որուն ընդմէջէն խօսեցար ու... խօսեցուցիր:

Մեր անկեղծ մաղթանքն է, որ քեզ դարձեալ կը տեսնենք պատնէշի վրայ, շրջապատուած ընտանիքովդ ու հարազատներովդ, ինչպէս նաեւ մտաւորական լայն շրջանակներովդ:

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Պայքար 22 Փետրուար

(Պէյրութ)

ՍՓԻՒՌԻ ՏԱՐԻ

Մարտ 2 Երամեան



«Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական աթոռոյ գահակալ Նորին Սուրբ Օծուօին Տէր Տէր Արամ Ա. կաթողիկոսը իւրաքանչիւր տարի նշանաբանով մը դրոշմելու քառորդ դարու վրայ հաստատած իր ասանդութիւնը նոր օղակով մը հարստացուց, 2022-ը հռչակելով «Սփիւռքի Տարի»», կը կարդանք Անթիլիասի մամլոյ գրասենեակին յայտարարութիւնը:

2003 թուականէն սկսեալ Վեհափառ Հայրապետը իւրաքանչիւր տարի հռչակած է մեր ժողովուրդի կեանքին հետ աղերս ունեցող կարեւոր դէպքի մը, ամեակի մը կամ երեւոյթի մը նուիրուած տարի:

Այսպէս ունեցած ենք Հայ Դպրոցի Տարի, Հայ Կնոջ Տարի, Արցախի Տարի եւ այլն:

Մամուլը գիրով անդրադարձած է տարուան երեւոյթին, յօդուածներով, գեղարուեստական գրութիւններով եւ գիտաժողովներով:

Թերեւս ճիշդ ատենն է տարին նուիրելու Սփիւռքին, որ այնքան կարիքներ ունի, բայց մէկ յստակ գաղափար կայ, որ բնաւ պէտք չէ մտահան ընել՝ այնքան ժամանակ, որ տակաւին չենք կրնար բոլորս, ազգով-տեղով փոխադրուիլ Հայաստան եւ հոն կայք հաստատել, ուրեմն Սփիւռքը պիտի մնայ, եւ եթէ պիտի մնայ, ուրեմն լաւ կ'ըլլայ որ մնայ որպէս զօրաւոր հաւաքականութիւն:

Այս տարի, երբ հայ իրականութիւնը աննախադէպ ճգնաժամի մէջ է Հայաստան-Արցախէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր անկիւնները, կը կարծենք որ գրութիւններն ու մանաւանդ գիտաժողովները բաւարար պիտի չըլլան, որովհետեւ եթէ նախկին տարիներուն գիտաժողովները լոյսին կը բերէին տուեալ երեւոյթին պատմականը, ապա կը համադրէին եւ կ'ամփոփէին ըսուածները, Սփիւռքի տարին աւելի գործնական միջոցներ կը պահանջէ, նախ սեղանի վրայ դնելու համար ԲՈԼՈՐ հարցերը, ապա զանոնք լուծելու կամ գոնէ անոնց մասին մտածելու գործիքներ տրամադրէ:

Դիւրին չէ ասիկա, որովհետեւ այնքան բազմաթիւ եւ բազմազան են մեր մտահոգութիւններն ու մեզ անքուն պահող խնդիրները՝ Արցախի իր հարցերը ունի, կամ մէկ գլխաւոր հարց ունի՝ վերադարձնել առնուած տարածքներն ու մանաւանդ Շուշին. Հայաստան կը շարունակէ տառապիլ արտագաղթի ճիրաններուն մէջ, որուն պատճառները շատ են, գլխաւորը ըլլալով աշխատանքի անբաւարարութիւն. Սփիւռքի մէջ որպէս ընդհանրական հարց՝ խիստ ճգնաժամ կ'ապրին լեզուն եւ մշակոյթը, իսկ իւրաքանչիւր գաղութ ունի իր հարցերը:

Կարծէք հայութիւնը կը դիմագրաւէ եօթ գլխանի հրէշ մը, որ երկար ատեն քնացած մնալէ ետք, ահա որ արթնցած, իր ամէնօրեայ զոհը կը պահանջէ:

9 Յունուարին յայտարարուած որոշումը՝ 2022-ը որպէս Սփիւռքի տարի, արդէն իր արձագանգը գտած է մամուլին եւ լրատուամիջոցներուն մէջ, տարբեր գրիչներով եւ տարբեր ձայներով:



Օրինակ Օբսֆորտէն (Անգլիա) դոկտոր Հրաչ Չիլինկիրեան կ'ըսէ՝ «Սփիւռքը սփիւռքի հարցերով զբաղող կառոյցներու կարիքը ունի»:

ԱՄՆ-էն Գեորգ Պետիկեան կը գրէ՝ «Որովհետեւ (Վեհափառին) հրամցուցածը ազնիւ ցանկութիւն է» եւ կը շարունակէ՝ «եւ պատասխանատու մօտեցում կ'ենթադրէ ու կը պահանջէ»:

Կարդալով նման գրութիւններ յանկարծ կ'անդրադառնանք, որ արեւմտեան կողմն աշխարհի ապրող մեր եղբայրներուն եւ քոյրերուն համար այնքան տարբեր են իրականութիւնն ու առօրեան Արեւելքի գաղութներէն: Ճիշդ է, որ իւրաքանչիւր հեղինակ ի՛ր մտածումներն է որ կ'արտայայտէ, միաժամանակ սակայն կը փորձէ դառնալ ընդհանուրին ձայնը: Հետեւաբար եթէ արեւելեան գաղութներէն դուրս եւ անկէ շատ հեռու ապրողներուն համար «Սփիւռքը ցուրտ եւ խաբուսիկ է», այդպէս չէ Արեւելքի գաղութներուն մէջ ապրողներուն համար, որոնք մինչեւ այսօր կրցած են, գոնէ որոշ չափով պահել իրենց հայութեամբ տրոփուն առօրեան:

Արդեօ՞ք 2022-ը «Սփիւռքի Տարի» յայտարարող այս հոշակագիրը նպատակ ունի «հոգեկան իրականութիւն մը» ներշնչել, թէ՞ կա՛ն, մտածուած են գործնական քայլեր, արդիւնաւէտ դարձնելու համար այս տարին, որպէս Սփիւռքի տարի:

Եթէ յայտարարութեան հետ նաեւ ծրագիր մը ներկայացուէր մեզի, թերեւս աւելի յստակ կ'իմանայինք թէ ճիշդ ի՛նչ պէտք է ըլլայ մեր դէրը, որպէս ժողովուրդ, այս տարուան ընթացքին:

Վեհափառ Հայրապետը Իր խօսքին մէջ, ներկայացնելով Սփիւռքի տարին կ'ըսէ.

«Անորոշութիւններով ու տագնապներով լեցուն Սփիւռքի ներկայ իրավիճակը, մեր դեկավար մարմիններն ու մտաւորականները պէտք է մղէ իրապաշտ ոգիով ու պատասխանատու մօտեցումով տագնապելու, մտածելու, քննելու, խորհրդակցելու, Սփիւռքի ներկան վերակազմակերպելու եւ ապագան հունաւորող ճամբաներ ու միջոցներ որոնելու»:

Տագնապիլ, մտածել, քննել, խորհրդակցիլ, վերակազմակերպել, միջոցներ որոնել ...

Ահա՛ ամբողջական ծրագրի մը ուրուագիծը: Լաւ կ'ըլլայ զայն գործնականացնելու միջոցներ գտնել անյապաղ կերպով եւ զանոնք իրագործել:

Երանի, հագար երանի, որ այս գեղեցիկ գաղափարը ծնած ըլլար քառորդ դար առաջ, երբ Հայաստանի անկախութեան գինովութեան մէջ մոռցած էինք Սփիւռքին դէրը, որ յետոյ, տասնամեակները փաստեցին, այնքան կենսական էր Հայաստանի համար: Մեր խանդավառութեան մէջ, փոխանակ Սփիւռքի միջոցները ծառայեցնէինք աշխարհին մեզ, մեր երկիրը եւ Ցեղասպանութիւնը ոչ միայն ծանօթացնելու, այլ այդ աշխարհին համոզելու, որ մեր երկիրը իրաւօ՛ւնք ունի խաղաղ ապրելու ... Սփիւռքէն կտրեցինք կարգ մը միջոցներ, զանոնք Հայաստան ուղղելու համար:

Օրինակ ունէինք ԱՄՆ-ի կարեւոր համալսարաններէն մէկուն հրատարակութեամբ եւ անգլերէն լեզուով լոյս տեսնող տարեգիրք մը, որ ամբողջութեամբ նուիրուած էր հայ գրականութեան եւ գրաքննադատութեան, Սփիւռքի ժամանակակից լաւագոյն մտաւորականներէն մէկուն խմբագրութեամբ:

Դադրեցուցաւ տարեգիրքը, որովհետեւ զայն հոգացող մեծ միութիւնը իր ամբողջ ներուժը որոշէր էր Հայաստան տեղափոխել եւ չէր կրնար տարին մէկ անգամ լոյս տեսնող հրատարակութեան մը ծախքը հոգալ:

Նման այլ դէպքեր եւս պատահեցան, որոնք մէկ կողմէ Սփիւռքը խեղճացուցին, միւս կողմէ ժողովուրդին հոգեկանը ջլատեցին:

Այսօր սակայն այլ, մեծ աշխատանք մը կը սպասէ մեր բոլորին: Մեծ, իրապէ՛ս հսկայ աշխատանք Սփիւռքի մը մէջ, որուն զլխաւոր յատկանիշը իր խճանկարային վիճակն է:

Պիտի կարենա՞նք Սփիւռքի տարին արժանապատիւ կերպով դիմագրաւել եւ արդիւնաւէտ կերպով զայն աւարտի բերել:

Այլընտրանք չունինք, արդէն շատ ուշ ենք, պարտաւոր ենք ոչ միայն մենք զմեզ, այլ եւ մեր հայրենիքը պահել:

ՏԵՍԱԿԷՏ

ԻՆՉՈ՞Ւ «ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ»

5. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ:



Կա՞յ մեր մէջ անձ մը որ կրնայ յայտարարել թէ ինք հողային պահանջ չունի, ի՛նչ կուսակցութեան եւ կամ յարանուանութեան ալ պատկանի ան, որովհետեւ թշնամին խտրութիւն չդրաւ իր ահաբեկումին, կողոպուտին, բռնաբարութեանց եւ անողոք ջարդին մէջ: Հետեւաբար, մենք ալ իրաւունք չունինք բաժանուելու մեր կողոպտուած արդար իրաւունքին յաջողութեան հասնելու ճիգին մէջ:

Բայց ի՞նչպէս մեր ոյժերը ի մի հաւաքել ու կազմակերպել, զանոնք արդիւնագործել եւ ցեղին ի նպաստ ծառայեցնել,–ահա այս է էականն ու հրամայական հարցը, որ պէտք է խորհրդածութեան առարկան դառնայ իւրաքանչիւր

ողջմիտ հայուն: Պատասխանատուութեան խոշոր բաժինը կը ծանրանայ այն հաստատութեանց վրայ, որոնք եկեղեցական, բարեգործական ու քաղաքական (Հայ Դատ) գործերը անկեղծօրէն առաջնորդելու կոչուած են, որոնց ոյժն ու աղբիւրը նոյն ինքն Հայ Ժողովուրդն է: Եւ այս բոլորը՝ հեռու հատուածական, անհատական եւ շահադիտական բոլոր ախորժակներէ:

Ժամանակն է որ այսուհետեւ անյիշաչարութեամբ մոռնանք մեր բոլոր անցեալի տարակարծութիւններն ու վէճերը եւ լծուինք համագային լուրջ աշխատանքի, որովհետեւ բոլորս ալ նոյն հայրենագրկութեան հետեւանքներէն կը տառապինք: Ցեղասպանութեան 100ամեակը հրամայական պարտականութիւն թողուց մեր բոլորին վրայ, մտածելու ապագայի մասին եւ պատրաստելու յստակ, մեկին, եւ անբեկանելի ծրագիրներ:

Մէկ ու կէս միլիոն մեր նահատակները, որոնց առաջինները եղան մեր ազգային դեկավարներն ու մտաւորականները, անժամանցելի արիւնաթաթախ կտակ մը թողուցին մեզի՝ համագային մեր իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր, որ ուրիշ բան չէ եթէ ոչ մեր հայկական դատը, որ կրնայ իր լրումին հասնիլ միայն կեդրոնական ներկայացուցչական մարմնի մը կողմէ, զոր կարելի է կոչել Արտասահմանեան Ազգային Ժողով, որ պիտի արտայայտէ հաւաքական կամք եւ կորով:



Անշուշտ թէ իւրաքանչիւր սփիւռքեան գաղութ ունի իր «առաջնորդարանը» երբեմն ալ «առաջնորդարանները», իրենց յարակից մարմիններով—հոգաբարձութիւն, տիկնանց միութիւն, բարեսիրական, կրթասիրաց միութիւններ, հայրենակցական միութիւններ, որոնք տեղական բնոյթ եւ հանգամանք ունին եւ չեն զբաղիր ու պէտք չէ զբաղին քաղաքական գործունէութեամբ, որովհետեւ, տեղական հանգամանք ունենալով, չեն կրնար ազգը ներկայացնել, նկատի ունենալով նաեւ այլ յարանուանութիւններու պատկանող մեր եղբայրներն ու քոյրերը:

Հետեւաբար՝ համազգային քաղաքականութեամբ զբաղելու կեդրոնական մարմնի մը կարիքը անժամանցելի է, որ պիտի կարողանայ ներկայացնել՝ մասնաւորաբար Սփիւռքի հայութեան մեծամասնութիւնը, գիտակից պատրաստուած ղեկավարութեամբ, օժտուած նիւթական եւ բարոյական բոլոր կարողութիւններով, պահանջատիրութեան մեր դատը յառաջ տանելու համար քաղաքական բոլոր ճակատներու վրայ. դատական-իրաւաբանական, բանասիրական, եւ այլն:

Այս յայտարարութեամբ չենք փափաքիր երբեք անտեսել Սփիւռքի անհրաժեշտ գործակցութիւնը Հայաստանի պետութեան ղեկավարութեան հետ, ներկայիս ինչ որ ալ ըլլայ անոր արտասահմանեան քաղաքականութիւնը: Ի վերջոյ, որպէս մէկ անդամը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, անիկա ենթակայ է միջազգային օրէնքի, եւ ատոր համաձայն որոշ պարտաւորութիւններ ունի որպէս պետութիւն, նամանաւանդ՝ խոր գիտակցութիւն ունինք որ կախեալ է ան, Ռուսաստանի դարաւոր կովկասեան քաղաքականութեան հաշիւներէն:

Գիտակցելով հանդերձ վերեւ յիշատակուած իրողութեան, Սփիւռքը իր ձայնը ունի ու պէտք է ունենայ, եւ ո՛չ մէկ կազմակերպութիւն կամ անհատ իրաւունք ունի իւրովի եւ առանձին ներկայացուցչական բերանը ըլլալու սփիւռքահայութեան: Կազմակերպութիւններ եւ սրտցաւ ազգայիններ, պարկեշտ հայեր իրենց ուրոյն գնահատելի տեղը ունին մեր հասարակական-ընկերային կեանքին մէջ, եւ երբեք պիտի չփափաքէինք ստորագնահատել եւ անտեսել անոնց աշխատանքը, սակայն երբ հարցը կը վերաբերի համազգային պահանջատիրութեան, լրջօրէն պէտք է մտածել հաւաքական աշխատանքի եւ մտածողութեան մասին, որ կրնայ յաջողիլ միայն ներկայացուցչական մէկ ձայնով:

Ցեղասպանութիւնը Հայ ժողովուրդին համար քաղաքական խորք ունի, որովհետեւ մագնիսի պէս կրնայ համախմբել նոյնիսկ իր արմատները մոռցած հայութիւնը: Գերազանց է անոր ոյժը՝ համախմբելու Հայ ժողովուրդի բոլոր խաւերն ու հոսանքները: Ցեղասպանութիւնը կարեւոր դեր խաղացած է նաեւ սնուցանելու ազգայնական ոգի, որուն մարմնաւորումը տեսանք Ղարաբաղեան Շարժման մէջ:

Անվիճելի իրականութիւն է այն իրողութիւնը, որ Հայկական Ցեղասպանութեան հարցը միջազգային իրաւունքի հարց է այսօր, եւ անհիմն են բոլոր այն պնդումները թէ



Թուրք կառավարութեան գործած անմարդկային ոճրագործ արարքները բացառապէս Թուրքիայի ներքին գործն են: Գերպետութիւններ, ինչպէս անցեալին, նոյնպէս եւ այսօր մեկնելով իրենց քաղաքական շահերէն, կը խուսափին պատասխանատուութիւն ստանձնելէ, մոռնալով մարդկային բարոյականութեան բոլոր սկզբունքները, եթէ անշուշտ մնացած է մարդկային բարոյականութիւն այս նիւթականացած աշխարհին մէջ: Վերջին օրինակն ալ տեսանք 44 օրեայ Արցախեան պատերազմին:

Մինչեւ այսօր սփիւռքեան մեր բոլոր ջանքերը կ'իրականանան առանձին կազմակերպութիւններու միջոցաւ, որովհետեւ սփիւռքը չունի պետական կառոյց եւ ճիշդ ստոր համար սփիւռքեան դիւանագիտութիւնը ո'չ միայն այլազան ու բազմատեսակ է, այլ եւ յաճախ հակասական եւ իրերամերժ: Ահաւասիկ հոս է որ կարիքը կը զգացուի կեդրոնացեալ մարմնի մը, որ կարենայ համադրել բոլոր աշխատանքները, համագործակցութեամբ Հայաստանի դեկավարութեան, եւ ներկայանալ որպէս մէկ ճակատ, աւելի զինուած ու զօրաւոր՝ միջազգային դիւանագիտական հարթակին վրայ:

Նկատի ունենալով որ միջազգային դիւանագիտութիւնը բազմաճիւղ եւ բազմերես է, հարկ է մշակել կարելոր յստակ ծրագիրներ: Օրինակի համար, հնարաւոր բոլոր միջոցներով աշխարհին ներկայացնել Հայկական Հարցի եւ Ցեղասպանութեան ամբողջական էութիւնը, կանխարգիլելու համար նորերը եւ ապահովել համախոհներ եւ համագործակիցներ: Եւ այս բոլորէն վեր ստեղծել այնպիսի դիւանագիտական աշխատանք, որ կարենանք չեզոքացնել թուրքական հակահայ քարոզչութիւնը որ կ'աղաւաղէ հայուն դիմագիծն ու պատմութիւնը, եւ ապահովենք թուրք գիտակից անձնաւորութիւններ որոնք ճշմարտութիւնը տեսնելով՝ ունին քաջութիւնը դատապարտելու թուրքական պետութեան ազգային քաղաքականութիւնը:

Երկու կարելոր այլ ազդակներ կարիքը ունին նաեւ այս համազգային կեդրոնական մարմնին: Առաջին, նկատի ունենալով «Ճերմակ ջարդը» որ լրջօրէն կը սպառնայ Հայ սփիւռքին, անհրաժեշտ է կազմակերպել գոյատեւումի զօրաւոր կռուաններ, որոնք պիտի կարենան դանդաղեցնել չարիքը: Երկրորդ, այս միութեան աշխատանքը պիտի ըլլայ արդար եւ համոզիչ քարոզչութիւն, որպէսզի համասփիւռ հայեր ներգաղթեն Հայաստան եւ Արցախ, իրողութիւն մը որ մինչեւ այսօր ձախողած է: Սփիւռքեան ներկայ վիճակը, ինքնին բաւական է որ լրջօրէն մտածենք միասնական աշխատանքի մասին, որովհետեւ՝ **ՄԷՎ Է հասարակաց թշնամին, ՄԷՎ Է մեր պայքարը, եւ՝ ՄԷՎ պէտք է ըլլայ մեր ձայնը:**

6. ՍՓԻԻՌՔ-ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Երեւան մայրաքաղաքի մէջ, տարիներ առաջ, տեղի ունեցաւ «**Վոխադարձ վստահութիւն, միասնականութիւն եւ պատասխանատուութիւն**» խորագրով Հայաստան-Սփիւռք հերթական վեցերորդ համահայկական համաժողովը: Երբեք պիտի չուզէինք յայտարարել որ անմիջական շտապ գործնական լուծումներ կ'ակնկալէինք այս համաժողովէն, ընդհակառակը՝ նման ակնկալութիւն մը մեզ ահաւառ յուսախաբութեան պիտի մատնէր: Սակայն եւ այնպէս՝ մխիթարական է ընդհանուր երեւոյթը որովհետեւ նման



համաժողովներ կ'ըլլան պատեհ առիթներ փոխադարձ «ճանաչողութեան» եւ անկասկած «քարոզչական» նկարահանումներու:

Նման համաժողովի գլխաւոր նպատակներէն գերագոյնը պէտք է ըլլայ համադրել եւ համախմբել հայրենիքի եւ սփիւռքի ներդրը, հայութեան գոյատեւման եւ պահպանման ի խնդիր: Մեր խօսքը ֆիզիքական մերձեցումի մասին չէ, այլ **անհրաժեշտ է ստեղծել մարդկային բարոյական արժէքներու եւ սկզբունքներու ներդաշնակութիւն եւ համակարգում:** Հայաստան թէ՛ սփիւռք կը ղեկավարուին նոր ժամանակներու «օլիկարխներով» եւ ամիրաներով, որոնք կը կարծեն մենաշնորհեալները ըլլալ հայ ժողովուրդին: Ո՛չ Հայրենի պետութիւնը եւ ո՛չ ալ սփիւռքի ղեկավարութիւնը քաջութիւնը ունին երթալու դէպի ժողովուրդ եւ խօսելու անոր հետ ազգային վեհ ընթրումներու եւ սկզբունքներու մասին եւ զիրենք մասնակից դարձնելու հայապահպանման ծրագիրներու մշակման եւ գործադրութեան:

Երբեք ժխտական պէտք չէ նկատել յանդգնող շինիչ մեր քննադատութիւնը, որ ապահովաբար **անհանգստացուցիչ է:** Ո՛չ բամբասանք է եւ ո՛չ ալ ցեխարձակում, ընդհակառակը՝ **քննադատելու կարողութիւնը առաքինութիւն է մեր կարծիքով:** Կը քննադատենք որովհետեւ մտահոգ ենք մեր ազգի ապագայով, որովհետեւ քաջատեղեակ ենք մեր ազգային նաւաբեկեալ կեանքի մակընթացութիւններուն եւ հետեւաբար համատարած անտարբերութիւնն ու յուսալքումը կ'անհանգստացնէ մեզ մղելով առողջ քննադատութեան, որովհետեւ կարելի չէ սառնարիւն դիտել այս բոլորը երբ բարելաման եւ բարօրութեան, նամանաւանդ մարդկային տարրական իրաւունքներու վերականգնումի եւ փոխ-յարգանքի կարիք կայ, որովհետեւ անոնց բացակայութիւնը դարձած է ընկերային չարիք մեր ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ:

Ինչպէ՞ս չքննադատել երբ որպէս անհատ եւ ազգ ենթարկուած ենք ինքնութեան կորուստի: Չենք կրնար անտարբեր մնալ հաշտուելով այն տկարամիտներուն հետ որոնք վարժ են յայտարարելու թէ *«ելք չկայ. այսպէս եկած է եւ այսպէս պիտի շարունակուի»:* Ընդհակառակը պէտք է քննադատել առանց վախնալու, որովհետեւ կան թերացումներ մեր ազգային կեանքին մէջ, կայ պաշտօններու եւ դիրքերու չարաշահում, կայ մարդկային բարոյական արժէքներու հանդէպ արհամարհանք, որովհետեւ տիրած են ամէնուրեք փառասիրութիւնը, ընչաքաղցութիւնը, եսասիրութիւնը, անպատասխանատուութիւնը եւ անբարոյութիւնը՝ իր ամբողջական իմաստով:

Համասփիւռ հայութիւնը շատ լուրջ խնդիրներ ունի, զորս կարելի չէ լուծել համաժողովներով, տօնախմբութիւններով, շնորհահանդէսներով եւ շքանշաններու տեղի-անտեղի «առատ» բաշխումով: Ամենահրատապ առաջին խնդիրը պէտք է նկատել ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ, որովհետեւ հայաթափումը կը շարունակուի անհազանգային համեմատութեամբ, որ ուրիշ բան չէ եթէ ոչ ինքնասպանութիւն, եւ ժամանակն է որ լրջօրէն մտածենք հայրենասեանման ոճիրին սրբազրութեան մասին:

Յաճախ կը լսենք՝ որ հայրենի կառավարութեան համար առաջնահերթ խնդիր է ներգաղթ իրականացնելը, որ մինչեւ այսօր կը մնայ լոգունգի եւ բաղձանքի սահմաններուն մէջ: Սփիւռքահայերուս համար ալ տակաւին յստակ չեղաւ թէ ներգաղթ կազմակերպելու ցանկութիւնը արդէօք հրապարակ նետուած է արտագաղթողներուն տեղը լեցնելու՝ համար, թէ՞ իսկապէս խոր հաւատքով եւ համոզումով ազգահաւաքման մեծ աշխատանք կը տարուի հայրենիքը նոր աւիւնով եւ նոր ոյժերով զօրացնելու համար:

Հայրենադարձութիւնը միայն քարոզախօսութեամբ չի՛ կրնար իրականանալ, յայտարարելով թէ Հայաստանն է ապրելու յարմարագոյն եւ ճիշդ վայրը, հեռու այլասերման



վտանգէն: Ինչպէս յաճախ յայտարարած ենք այլ առիթներով, թէ «Արի Տուն» յայտարարողը՝ նաեւ տուն-տէ դ կը պատրաստէ: Անհրաժեշտ է նախ ստեղծել խոր համոզում եւ ի գործ դնել լիակատար աջակցութիւն, գաղթող հայրենակիցներուն համար պատրաստելով նպաստաւոր պայմաններ եւ կեանքի ու գործի ապահովութիւն՝ զերծ ամէն տեսակի խտրականութենէ: Դժբախտաբար անցեալին՝ հայրենի պետութիւնը իր աւագանիով, զբաղած էր տարբեր խնդիրներով, որոնցմէ կարելորագոյններն էին՝ իշխանութեան պահպանումը եւ անոր ժառանգականութեան ապահովումը, ինչպէս նաեւ քաղաքական եւ տնտեսական շահերու սեփականացումը:

Մէկդի թողունք մեր ճառերը, քարոզախօսութիւնները եւ խորհրդածողովները, որոնք լոգունգի սահմաններէն անդին չեն անցնիր: Այս ճգնաժամային անմխիթար վիճակէն դուրս գալու համար ձեռնարկենք ու ապահովենք այնպիսի տնտեսական առինքնող պայմաններ, որպէսզի մեր երիտասարդութիւնը, մեր աշխատող չեռանայ երկրէն եւ սատարէ երկրի բարգաւաճման եւ բարօրութեան: Որքան ալ մտահոգ ենք այսօր մեր արտաքին քաղաքական մարտահրաւերներով – շրջափակում եւ արցախեան հակամարտութիւն - մեր ապագան մեր երիտասարդներն են, այրեր՝ որոնք պիտի ըլլան հայրենիքի պաշտպան զինուորները եւ մեր քոյրերը պիտի ըլլան այդ զինուորները ծնող մայրերը:

Դժբախտաբար մեր ցաւը մեր տան մէջ է, այսինքն մեր միակ յոյս եւ ապաւէն՝ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԵՐՄ Է: Երկիրը մօտ է արդէն ժողովրդագրական աղետալի վիճակի: Հայաստանի ներկայ եւ անցեալի իշխանութեանց տեսակէտը այն է, որ արտագաղթը համաշխարհային խնդիր է եւ մենք ալ անմասն չենք կրնար մնալ այս ընդհանուր երեւոյթէն: Ճիշտ է որ մարդիկ միշտ ալ ցանկութիւն ունին տեղաշարժուելու, բայց ի՞նչ են անոր հետեւանքները մեր նորանկախ հայրենիքին համար՝ ահաւասիկ ա՛յդ է մեր մտահոգութիւնը, ա՛յդ է մեզ հիւժողն ու տառապեցնողը: Որովհետեւ՝ բոլոր անոնք որոնք Հայաստանէն կը մեկնին Ռուսաստան, ընդհանրապէս վերադառնալու ցանկութեամբ կը մեկնին – թէեւ մեծ մասամբ չեն վերադառնար զանազան պատճառներով -, սակայն բոլոր անոնք որոնք եւրոպական երկիրներ կը մեկնին, անկասկած որ մշտական բնակութիւն հաստատելու երազանքով կ'երթան: Փաստ՝ մեր նորահաստատ գաղութները Եւրոպայի մէջ:

Զարմանալին ա՛յն է, որ այդ տարիներուն ո՛չ Հայրենիքէն ներս եւ ո՛չ ալ Սփիւռքի տարածքին՝ մեր Նուիրապետական Աթոռները, հասարակական կազմակերպութիւններն ու կուսակցութիւնները ահագանգ հնչեցուցին, առաջքը առնելու համար այս ահաւոր աղէտին: Հետեւաբար հարց կուտանք.....Հիմա՛ արթնցաւ Արամ Ա. Կաթողիկոս որ հայրենիքը կը պարպուի...

Որքան ալ ըսենք որ արտագաղթը բնական երեւոյթ մըն է ժողովուրդներու մօտ, մեր պարագային՝ ան մահացու հարուած է մեր դատին եւ մեր գոյութենական պայքարին, որովհետեւ մեր մտահոգութեան կորիզն է՝ գիտական, կրթական եւ մշակութային մեր ներուժի արտահոսքը դէպի հիւրընկալ երկիրներ: Երիտասարդ ոյժերու հեռացումով՝ կը ստեղծենք ծանր պայմաններ մեր ազգային գոյութեան եւ անվտանգութեան ծիրէն ներս: Ո՞վ պիտի պաշտպանէ մեր հայրենիքի սահմանները: Մեր դարաւոր թշնամիները գիտակցելով այս իրողութեան, ամենայն լռութեամբ կը սպասեն հայաթափումի այս ահաւոր եղեռնագործութեան լրումին...:

Հետեւաբար ի՞նչն է որ մեզ կրնայ փրկել այս ազգային գահավիժումէն: Կրկնենք անգամ մը եւս բոլոր անոնց համար որ փակած են իրենց աչքերն ու ականջները:



Ահաւասիկ մեր առաջարկները.-

- 1.- **Արդարութիւն.** Վարձատրել բոլորը հաւասարապէս իրենց արժանիքներու համաձայն, եւ վե՛րջ խնամիական, ազգականական եւ բարեկամական առաջնահերթութիւններու, որոնք կը խորտակեն ժողովուրդի հաւատքը հանդէպ հայրենի կառավարութեան:
- 2.- **Կրթութիւն.** Կարելի չափով ձրի եւ որակաւոր դարձնել բոլոր վարժարանները նամանաւանդ՝ առանց կաշառքի:
- 3.- **Առողջապահութիւն.** Չմերժել բոլոր անոնք որոնք կարիքը ունին բժշկութեան եւ չեն կրնար ապահովագրութիւն գնել, դարձեալ առանց կողմնակի վճարումներու:
- 4.- **Օրինականութիւն.** Ո՛չ մէկ քաղաքացի, հաստատութիւն, կամ կազմակերպութիւն կրնայ նկատուիլ օրէնքէ վեր: Օրինականութեան բացակայութիւնը կը տանի մեզ անիշխանութեան եւ հեռու կը պահէ սփիւռքահայը որ կ'ուզէ ներդրում կատարել հայրենիքէն ներս:
- 5.- **Ապահովութիւն.** Քաղաքացին պէտք է իմանայ թէ որպէս երկրին հարազատ զաւակը՝ ապահով է իր կեանքը, եւ ո՛չ ոք կրնայ խլել այդ իրաւունքը իրմէ: Յաճախակիօրէն պատահող սպանութիւնները, որոնց մասին կը կարդանք մամուլին մէջ, կը սարսափեցնեն մեզ...:
- 6.- **Սեփականութիւն.** Աշխուժացնել գործօններ, որպէսզի իւրաքանչիւր քաղաքացի իր արժանավայել բնակարանը ունենայ: Ժողովուրդը պէտք չէ պահել տնագուրկ մուրացկանի հոգեվիճակին մէջ:
- 7.- **Գիւղատնտեսութիւն.** Զարգացնել եւ երաշխաւորել գիւղացիի հարազատ քրտնաթոր աշխատանքը: Գիւղն է որ կը պահէ քաղաքը:

Վերեւ յիշատակուած առաջարկները հայրենի պետութեան ընկերային պարտաւորութիւնը ըլլալէն զատ՝ խորապէս ե՛ն նաեւ Եկեղեցոյ կոչումէն բխող՝ կրօնաբարոյական, մարդասիրական ծառայութեան պարտաւորութիւն մը: Միայն այս գաղափարականով կարելի պիտի ըլլայ դիմագրաւել մեր դարաշրջանի բոլոր մարտահրաւերները, ինչ ալ ըլլան մեր դրացի երկիրներու ներգաղթի քաղաքականութիւնը, հայրենիքի շրջափակումը եւ այլ քաղաքական եւ ընկերային ազդակներ:

Հայրենի պետական այրերուն եւ անոնց շուրջ թաւալող արբանեակային շրջանակներուն՝ մեղմ ասած՝ անկուշտ ընչաքաղցութիւնն ու անտարբերութիւնը արտագաղթի օրէ օր խորացող վտանգին հանդէպ՝ դատապարտելի է ըստ ամենայնի: Նոյնքան դատապարտելի են նաեւ «պատասխանատու» երկու կաթողիկոսներուն --որոնց վստահուած է հայ ժողովուրդի հոգեւոր առաջնորդութիւնը,-- կողմէ՝ գործուող ահաւոր չարիքին հանդէպ ցուցաբերուած լօզունգային բարձրաձայն կոչերը... վա՛յ մեզ, վա՛յ մեզ:

Ժամը հասած է ու չենք կրնար, եւ իրաւունք ալ չունինք, իրականութիւնը դիտել մեր մատներու արանքէն: Կրնա՞յ ըլլալ որ կորսնցուցած ենք տոկալու եւ պայքարելու բնագործ: Պէտք է ցոյց տալ հաւաքական ներդաշնակ աշխատանք, կամք եւ համոզուած վճռականութիւն հայրենիքը փրկելու համար: Անգամ մը եւս կ'արժէ այստեղ յիշեցնել մեր ընթերցողներուն՝ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի սրտամորմոք խօսքերը. **«Արտագաղթը հայրենիքից 1915 թուի ցեղասպանութիւնից յետոյ, ամենամեծ ոչ բնական աղէտն է... Նա մեր հողի կամաւոր զիջումն է Թուրքիայի»:**

Խոր ցաւով կ'աճանագրենք, թէ հայրենաբնակ ժողովուրդը կորսնցուցած է իր հաւատքը հայրենիքի դեկավարութեան նկատմամբ: Այդ պատճառով ալ պանդխտութեան



Ճամբան բռնողներուն թիւը հետզհետէ կը բազմանայ այսօր, հայրենիքը թողլով մեր արիւնսարբու թշնամիին ճիրաններուն գոհ: Ամէն բանէ առաջ պէտք է հաւատք ներշնչել ժողովուրդին, տալով անոր տնտեսական եւ ընկերային ապահովութիւն՝ որպէսզի տէր կանգնի իր հայրենիքին:

Ժամանակն է վերաբժեւորելու մեր սկզբունքներն ու մարդկային արժանապատուութիւնը: Անսասան հաւատքով ու կորովով պարտաւոր ենք հետամուտ ըլլալու որ բարոյական արժէքները վերականգնուին հայրենիքէն ներս:

Եկէք պահ մը ազգովին լրջօրէն մտածենք առանց զգացական մօտեցումներու, թէ ի՞նչ պիտի ըլլայ մեր հայրենիքին վիճակը: Ականատեսներու վկայութեամբ, Հայաստանի գիւղերը դատարկուած են երիտասարդ բնակիչներէ, իսկ մնացող ծերունիները, անկարող են հողը մշակելու: Հողին կապուած քիչ թիւով ընտանիքներ եթէ մնացին՝ գիւղը պահպանելու նուիրական տրամադրութեամբ՝ անոնց ալ չտրամադրուեցաւ հարկ եղած պետական օժանդակութիւնը: Լեռնային եւ դաշտային շրջաններու մէջ գիւղական կեանքը մնացած է անհրապոյր եւ տխուր: Ինքնասպանութիւնը կը շարունակուի եւ Հայաստան կը դատարկուի իր բնիկ ժողովուրդէն, ժողովուրդն ալ, դժբախտաբար, օրապահիկ մը ապահովելու արժանապատիւ միջոցներու չգոյութեան հետեւանքով մոռացութեան տուած է իր հայրենասիրութիւնը...ինչպէ՞ս մեղադրել:

Սպառած են արդէն արդարացման բոլոր փորձերը՝ յատկապէս սփիւռքահայութեան կողմէ այս կենսական եւ սկզբունքային բարոյական հարցին նկատմամբ: Պէտք է տեսնել եւ բացայայտել ամէն ճշմարտութիւն, եթէ բան մը կ'ուզենք փոխել եւ շտկել մեր հաւաքական մտածողութեան մէջ: Անգամ մը արդէն դառնապէս պարտադրաբար վճարեցինք մէկուկէս միլիոն հայերու ոչնչացումին-հեռացումին գինը. **պատմութիւնը չկրկնէ՛նք այս անգամ՝ մե՛ր իսկ ինքնասպանութեամբ:**

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

31 Մարտ 2022

ՍՓԻԻՌՔԸ «ԱՆՏԵՍԵԼՈՒ» ՈՒ «ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼՈՒ»

ՏԽՐԱՀՈՉԱԿ ՓՈՐՁԵՐ

Պարոյր Յ. Աղպաշեան



Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները միշտ ալ գտնուած են կիզակէտային դիրքի վրայ, զանոնք պահելն ու զարգացնելը, ամրապնդելն ու բարգաւաճիլը նկատելով անփոխարինելի, հիմնարար ու հրամայական:

Նոյնիսկ խորհրդային տարիներուն, այդ յարաբերութիւնները եղած են հարուստ, հանրօգուտ եւ արդիւնաւետ, որովհետեւ հայ ժողովուրդը, իր



ղեկավարութեամբ, հասարակութեամբ եւ եկեղեցականութեամբ, այդ ուղին նախընտրած է՝ որպէս գերագոյն հօգորութեան ու գերակայութեան կռուան:

Մփիւռքահայութիւնը, արժանաւորապէս եւ արժանիօրէն, ապրած էր իր հայրենիքով, անոր յառաջդիմութիւններով ու նուաճումներով, ուրախացած ու հպարտացած էր իւրաքանչիւր վերելքով ու շէնչողութեամբ, որովհետեւ հոն գտած էր ու կը գտնէր իր յաւերժութիւնը, էութիւնը ու ջերմութիւնը:

Մփիւռքահայութեան հետ Մշակութային Կոմիտէն (1964) եկաւ նոր, փառաւոր, լուսաւոր էջ մը բանալու այդ յարաբերութիւններուն մէջ, կրթական, գիտական, ուսումնական, մշակութային եւ արուեստի մարզերուն զարկ տալով, երկկողմանի յաճախակի այցելութիւններով ու գործակցութիւններով, մերձեցումներով ու կապերով, դասախօսութիւններով ու միջոցառումներով:

Ինչո՞ւ այս արագ յիշեցումներն ու գրառումները, որոնք որքան ալ թռուցիկ, այդուհանդերձ, կը հաստատեն շքեղ իրականութեան մը պայծառ պատկերը, որ առընչուած էր Հայաստան-Մփիւռք կամուրջներու զօդման, բազմաթիւ բնագաւառներէ ներս, որոնց մէջ ամենէն էականն ու կենսականը ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ էր, թէկուզեւ հեռակապ հաղորդակցութեամբ, բայց, անպայման իր անմիջականութեամբ ու հարազատութեամբ:

Այսօր, յետագայ հայեացքով, երբ կ'իմաստաւորենք ու կ'ոգեկոչենք այդ օրերն ու պահերը, իրենց քաղցրութեամբ եւ օրինակելիութեամբ, միայն բարի նախանձի բոյրով կը վերյիշենք՝ զանոնք, որովհետեւ անոնք գործեցին, իրօք, բարեբեր ու բարեպաշտ ազդեցութիւններ մեր՝ Մփիւռքի վրայ:

Մփիւռքահայութիւնը ամենէն շատ լիացաւ ու ներշնչուեցաւ հայրենական շունչով եւ ոգիով, հոն գտնելով իր ազգային լինելութեան պաշտամունքը, իր արմատներուն հարազատ մնալու վճռակամութեամբ, իսկ այդ յարաբերութիւններուն գործնականութիւնը, ուղղակի թէ անուղղակի շփումներով, շատ աւելի զօրեղ եւ ազդեցիկ էր, այնքան ատեն որ անոնցմէ հայրենասիրութիւնը կը ստանար նոր սլացք, հայրենասիրական դաստիարակութեամբ ու հայրենական կառչածութեամբ:

Հայաստանի անկախութենէն ետք (1991), պէտք է ընդունիլ ու համոզուիլ, թէ Հայաստան-Մփիւռք յարաբերութիւնները, առանց յոռետեսութեան, այն չէր ինչ որ կ'ակնկալուէր որ ըլլային, պարզ տրամաբանութեամբ, անոնք պէտք էր աւելի փայլուն, յուսատու ու խոստմնալի դառնային:

Ասիկա չի նշանակեր, թէ ամէն ինչ «սեւ» էր, ընդհակառակը, Մփիւռքը միշտ ալ պատրաստակամ եղաւ Հայաստանին եւ Արցախին օգնելու, ամէն անգամ որ կարիքը կար անոր (եւ ո՞ւր չկար), միշտ լիաձեռնութեամբ եւ առատաբաշխութեամբ:

Այս ալ պէտք է արձանագրել, առանց բարդոյթի, որ չպակսեցան նաեւ այդ նպաստները շահագործողներ, չարաշահողներ, նոյնիսկ իւրացնողներ, ինչ որ դէպի Հայաստան-Արցախ օժանդակութեանց ներհոսքները, մեղմ ըսած, դանդաղեցան (դանդաղեցուցի՞ն):

Վստահաբար Մփիւռքի նախարարութեան հիմնումը, իր շուրջ տասը տարուան գոյութեամբ, դարձաւ այն ԿԱՄԱՐԸ, որ աւելի տաքուկ եւ զգալի ազդեցութիւն ունեցաւ, իր ժրջանութեամբ, մտերմութեամբ ու բարեկամութեամբ, մասնաւորաբար տարաբնոյթ կազմակերպութիւններու եւ ընդհանրապէս զաղութներու հետ:

Նորակազմ նախարարութիւնը, անշուշտ, տակաւին երիտասարդ, բայց, առոյգ ու գործունէայ էր ու կրցաւ իր ինքնութեան ու դերակատարութեան մէջ յաջողութեան նշաններ ցոյց տալ, այնքան՝ որքան իր պայմաններն ու կարելիութիւնները կը ներէին, որովհետեւ զայն կը գլխաւորէր, կը վարէր տինամիկ եւ եռանդուն ղեկավար մը, յանձինն Հրանտշ Յակոբեանի, որ իր հմուտ վարչակազմակերպչականութեամբ, ի վիճակի եղաւ հետզհետէ ոչ միայն ինքզինք արդարացնել, այլեւ՝ նախարարութեան գնացքը տեղաշարժել:



Ուշագրաւը այն էր, որ նախարարութիւնը դրական ու կառուցողական քննադատութեան հանդէպ, միշտ հասկացողական ու հանդուրժողական էր, չվարանելով յայտնելու, թէ ինք պատրաստ է զանոնք լսելու եւ ընդունելու, բարեկարգելու ու վերանորոգելու առաջադրանքներով, որովհետեւ Հայաստան-Սփիւռք բարօք եւ առողջ յարաբերութիւններու մշակումն ու կերտումը գերիվեր են որեւէ այլ նկատառումէ:

Այս բոլորը, կը նշանակէի՞ն, որ Սփիւռքի նախարարութիւնը «ձախողած» էր իր առաքելութեան մէջ, քաւ լիցի, կը բաւէ մօտէն հետեւիլ անոր բեղուն գործունէութեան հոլովոյթին, յատկապէս մամլոյ եւ յարակից այլ տիպի համահայկական հաւաքներուն, որոնցմով փորձ կը կատարուէր համապատասխան լիցք եւ երանգ տալ փոխադարձ յարաբերութիւններուն:

Ժամանակները փոխուեցան, եկաւ «թաւշեայ յեղափոխութեան» շրջանը, իսկ երբ անիկա շուտով վերածուեցաւ «պողպատեայ յեղափոխութեան», այս անգամ տարբեր, սակայն նոյն ոճով շահագործելով հիներուն չարագործութիւններուն ու բռնապետութիւններուն անմարդկային ու հակահայրենական ոճրարարքները:

Այս խայտառակութիւնները պատահակա՞ն էին, արկածախնդրակա՞ն, անձնաճառայակա՞ն, թէ՞ անփորձառական կամ տհասական. հարցադրելի ու խորհրդածելի են ասոնք, բայց, մէկ յստակ ճշմարտութեամբ, որ գործող իշխանութիւնները, իրենց խորհրդաւորութեամբ ու զաղտնապահութեամբ, ապիկարութեամբ եւ անպատասխանատուութեամբ, տակաւին «ուրիշ»ներուն ծառայելու հաւանականութեամբ, պատուհասեցին հայրենիքին եւ անոր զաւակներուն, իսկ այսօր կը շարունակեն իրենց մոլորեալ երթը, մինչ ընդդիմութիւնը կը փայլի իր տափակութեամբ եւ քանդողականութեամբ:

Դժբախտաբար, ազգային կամ կուսակցական կազմակերպութիւններ, մասնաւորաբար ասոնք, որոնք կը յաւակնին ունենալ սփիւռքեան կառոյցներ, չկրցան կամ չուզեցին զգաստութեան ու դատապարտութեան ռազմավարութեամբ վերաբերուիլ այս եւ նմանօրինակ ազգավնաս վարքագիծերու հետ, մեկնելով իրենց շիլ հաշիւներէն, արտառոց մօտեցումներէն կամ անճիշդ գնահատումներէն, ամէն ինչ ձգելով կամ նետելով անորոշութեան գիրկը, մինչեւ որ կացութիւնը հասաւ անտանելիութեան սահմաններէն անդին:

Աննախընթաց այս անկումայնութիւնը հասաւ այնպիսի հանգրուանի մը, որ Սփիւռքը ու սփիւռքահայութիւնը, ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ու ԾՐԱԳՐԱԲԱՐ, լուսանցքի տակ առնելու փորձերը, աւելի քան բացայայտ դարձան, կարծես զայն մեկուսացնելու կամ հայրենի ազգային-հայրենական հիմնահարցերէն հեռու պահելու դիտաւորութեամբ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ իր վարչակազմը, այնպիսի դարձողարձիկ գործելաձեւային ուղի մը որդեգրած են՝ Սփիւռքը հեռու պահելու կամ անտեսելու անոր դերը, մանաւանդ ազգային կառոյցները, իրենց զանազան շերտաւորումներով, կարծես թէ՛ ըսելով. «Դուք ձեր գործին նայեցէք, մի խառնուիք մեր ներքին կամ արտաքին քաղաքականութեան», մոռնալով որ հայրենիքը ո՛չ ապրանք է, ոչ ալ կրպակ, այլ՝ հոգեկան արտայայտութեան հնոց, սեփականատիրութեան ամրոց, որուն դէմ ո՛չ մէկ ուժ կրնայ հակադրուիլ կամ մերժել անոր սրբակերտութիւնը:

Վերջին միջպետական ու միջքաղաքական իրադարձութիւնները, որոնք կը թաւալին տարածքային ոլորտներուն մէջ, մասնաւորաբար հայկական-թրքական բեւեռներու վրայ, խիստ մտահոգիչ զարգացումներով, արդէն ցոյց կու տան, որ Սփիւռքը «անկիւնաւորելու» ու զայն «մեկուսացնելու» յստակ ու մեկին արեւելում մը կայ, զոր Թուրքիա կը հետապնդէ, այս կամ այն մանուածապատութեամբ, իսկ Հայաստան ալ՝ կը համակերպի անոր, առնուազն... չհակադարձելով:



Սփիւռքին նկատմամբ այս եւ որեւէ «մէկ կողմ մնայ»ի քաղաքականութիւնը միթէ պարզորոշ չէ՞ ուր տեսանելի չէ՞, երբ Փաշինեան ԶՆՁԵՅ Սփիւռքի նախարարութիւնը, տեղը ձեւաորելով «գրասենեակային ու գրասեղանային» խրտուիլակ անկիւն մը, որ, ոչ աւելի, ոչ պակաս, մե՛ նձ ամօթանք մըն է Սփիւռքի հասցէին:

Օրին, անձամբ հրապարակագրեցի այս անձոննիութեան դէմ, սպասելով որ սփիւռքեան աղբիւրներէ ձայներ ու բողոքներ կը լսուին, սակայն, ի գո՛ւր (բացի կարգ մը ողջախոհ շրջանակներէ) եւ, այսօր, այդ գրասենեակը ո՛ւր կը գործէ եւ ինչի՞ կը ծառայէ, վարկաբեկելով անցեալի Սփիւռքի կոմիտէին ու Սփիւռքի նախարարութեան հեղինակութիւնները, վաստա՛կը, որոնցմէ շատեր օգտուեցան, իսկ այսօր, այդպիսիներ ինքզինքնին հակոյր կը ձեւացնեն:

Սակայն, ամենէն վտանգաւորը ու ցաւալին այն է, որ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն շարունակականութեան վրայ ԱՐԱՏ նետելու կամ ՃԵՂՔ մը առաջացնելու տխրահռչակութիւն մըն ալ կը նշմարուի, որուն համոզուելու համար բանգէտ կամ գուշակ ըլլալու կարիք չկայ, այնքան ատեն որ, թափանցիկ է «գնդակ նետողը ու գնդակ ստացողը», իր ամբողջական մերկութեամբ ու բարբարոսութեամբ, անպարկեշտութեամբ եւ անիրաւութեամբ:

Այս բոլորի լոյսին տակ, մօտաւոր թէ հեռաւոր ինկատառումներով, դատումներով, վերլուծումներով կամ դիտարկումներով.

- Ինչպէ՞ս պէտք է վերաբերուիլ նման երեւոյթի հետ
- Ո՞ւր պէտք է փնտռել զայն բառնալու միջոցները
- Ի՞նչ են զայն շրջանցելու հնարքները

Եթէ այս կետադրումներուն պատասխանները կարելի չէ ունենալ, այն ատեն խիստ ահագանգային վիճակ մը կը պարզուի (կամ կրնայ գոյանայ) Հայաստան-Սփիւռք ամպիովանիին տակ, որուն հետեւանքները չեն կրնար համակերպելի ու բաղձալի ըլլալ. բնա՛ւ:

Բացայայտ է, որ գործող իշխանութիւնները անտաշ եւ անմշակ քաղաքականութեամբ կը գործեն ու Սփիւռքը կը նկատեն իրենց համար գլխացաւային զանգուած մը, որ կը խոչընդոտէ (՞) իրենց արտաքին յարաբերութիւններու գործընթացները (իմա՛ թուրքիոյ հետ):

Եթէ ա՛յս է տխուր եւ ողբալի իրավիճակը, որմէ տուժողը կամ շահողը ո՞վ կրնայ ըլլալ, հետեւաբար, ալ ինչի՞ մասին կը խօսուի ու բարբառուի, բարձրաձայնելով ու գոռալով.

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ-ՍՓԻՒՌՔ

Ասիկա՛ հայ ժողովուրդին գիտցած հայրենասիրութիւնն ու հայրենակառչածութիւնը չեն ու չեն կրնար ըլլալ, աւելին՝ այս ձեւով եւ ընթացքով կարելի չէ հայրենիք կերտել, պահպանել ու գոյատեւել:

Ուրեմն, պահանջուա՞ծը. հետեւեալն է, պէ՛տք է ըլլայ.

ՍՓԻՒՌՔԸ՝ ԻՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ, ԱՌԱՆՑ ՀԱԿԱԴՐՈՒԵԼՈՒ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱԻԲՐԺԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ՀԻՄՆՈՎԻՆ ՄԵՐԺԵԼՈՒ Է ԶԻՆՔ «ՔՕՂԱՐԿԵԼՈՒ» (ԿԱՄ «ՇԱՀԱԴԻՏԵԼՈՒ») ՎԱՐԿԱԾՆԵՐԸ ԵՒ ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ՝ ԱՄՐԱՊԻՆԴ, ԱՐՄԱՏԱԿԱՆ ՈՒ ՇՕՇԱՓԵԼԻ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԻԱՍԱՐՈՒԹԵԱՄԲ, ԻՐԱԻԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՈՒ ՀԱԻԱՏԱՐՄԱՊԱՇՏՈՒԹԵԱՄԲ:

(Պէյրուք)

Պայքար

6 ՄԱՐՏ 2022

ՍՈՒՏՈՒ, ՊԱՅԵՐԱԶՄ, ԽՈՑԵԼԻ

Ռուբէն Յովակիմեան, Մեն Ռաֆայել, Մարտ 2022

«Սոսի հացը հաճոյքով է ուտուում, միայն թէ բերանդ աւազով է լցուում»: Աւետարան



Մուտք եւ կեղծիքը շատ աւելի տարածուած եւ գործօն են, քան իրականութիւնն ու ճշմարտութիւնը, մանաւանդ միջազգային յարաբերութիւններում, քաղաքական դաշտում եւ մասնաւորապէս մամուլում, որ համատարած արատ է եւ որեւէ երկիր արտօնեալ չէ: Շատ հեռուն չփնտրելու համար, այս առաւօտ (20-3) «ՊԱՅՔԱՐ» ի առաջին էջի վրայ ազդարարում են թէ Արցախի վնասուած գազի վերակառուցումը սկսուած է,

մինչդէռ օրեր առաջ աշխատանքները աւարտուած լինելու պաշտօնական հաստատում եղաւ եւ դէռ ի՞նչ կարծիքներ կ'ունենանք:

Արդար լինելու համար՝ չեմ կարծում, թէ լուրը յայտնող լրագրողը ստելու հաճոյքը վայելելու փորձ է արած, բայց աներկբայ է, որ անփոյթ պատասխանատուութեան ծնունդ է երեւոյթը, որ տիրում է ամէնուր եւ երբեմն կարելոր բնագաւառներում, որ ցաւալի է, բայց իրական: Ստում են ոչ բոլորը, բայց շատերը՝ պետական եւ քաղաքական գործիչները, նրանց յարակից պատգամաւորներն ու փաստաբանները, դատաւորներն ու ընդդիմադիր խմբաւորումները, մինչեւ իսկ երկրի ղեկավարը եւ այս նուաստ ցանկից պէտք է անջատել միայն երեխաներին, որ դէռ չեն ճաշակել ու վայելել ստախօսութեան պտուղները:

Շաբաթներ է, որ Ուկրաինայում տիրող դժոխքը գրաւել է երկրագնդի ուշադրութիւնը, իստում եւ մեկնաբանում են շատերը՝ պաշտօնական վերադաս մարմիններ եւ բանից անտեղեակներ, միայն թէ տարբեր կողմերից հասնող լուրերը՝ միեւնոյն դիպուածի մասին, մեծ ի մասամբ լինում են իրականութիւնից շատ հեռու կեղծ տեղեկութիւններ եւ որպէս մի նմուշ՝ ուրբակոծուել էր տարիներով լքուած մի ծննդատուն, բայց մի կողմի մամուլը այն ներկայացնում էր որպէս ոճիր նորածինների նկատմամբ, մինչ հակառակ կողմը փաստարկում էր, որ այդ կիսաւեր շէնքում տեղաւորուած էր մարտական ջոկատ, եւ ոչ մէկ երեխայ է գտնուել այնտեղ: Մէկ այլ համագոր դրուագ. գիշերով քար ու քանդ են անում առեւտրի կենտրոն, եւ տուժող կողմը յայտարարում ութ գոհ, միեւնոյն ժամանակ յարձակուողը փորձում է հաւատացնել, որ այն զինամթերքի պահեստ էր: Որին հաւատալ կամ մերժել դժուար է որոշել, բայց մի բան կասկածի ենթակայ չէ, որ ճշմարտութեան մի ոտքը հակառակորդի դաշտումն է:

Աւելորդ չեմ համարում նշել, որ Զելենսկին իր կոչով աշխարհասփիւռ ազգակից հրեաներին հայցում է, որ ծաւալուն պատժամիջոցների հետ մէկտեղ սատարել եւ ապահովել իր յաղթանակը այս անհաւասարակչի պատերազմում, եւ պատահական չէ, որ բարձրաստիճան դիրք ունեցող՝ ծագումով հրեաների բանակը գործի է անցել



հակառուսական ելոյթներով տարբեր երկրներում, եւ օրերս Ֆրանսայի արդարադատութեան նախկին նախարարը կոչ էր անում նիւրնբերգեան դատարանի նմանուող ատեան ստեղծելու անհրաժեշտութիւնը, ուր Պուտինը լինի դատապարտեալը, քանզի նա Հիտլերի արդի կրկնօրինակն է: Այսու չի նշանակում, որ տրամադիր ենք մեղմացնել, քաջալերել եւ արդարացնել Պուտինի արարքները, քաւ լիցի, քանզի որեւէ պատերազմ ստեղծում է անմեղ զոհեր եւ անթիւ հաշմանդամներ՝ զանց չառնելով անհաշիւ ակերումները, բացի այդ նոյն Պուտինը, լինելով մեր «փրկիչ» դաշնակիցը, թոյլ տուեց թուրքազերի հրոսակներին, սիրիացի ջիհադական վարձկանների մասնակցութեամբ, քառասուն չորս օրուայ դժոխային օրերին քար ու քանդ անել ազատագրուած Շուշին եւ մերձակայ տարածքները մարդկային զոհերով մէկտեղ: Պատժամիջոցի քայլ չէ՛ր այդ, մեր մի թիզ չզիջելու յամառութեան դիմաց:

Նման պղտոր մթնոլորտում տրամաբանութիւնից զուրկ եւ անհասկանալի է, որ հայրենաբնակների մի մասը դեռ հաւատում է, որ մեր վերջնական ապագան ռուսների հետ է՝ վասալի կարգավիճակով, այլ տարբերակ չեն տեսնում եւ չկայ, միեւնոյն ժամանակ իրար բզկտելը առկայ է՝ որպէս ապացոյց խորհրդարանում տիրող մթնոլորտը՝ մինչդեռ պարզ է եւ երկար ժամանակ է, որ անընդմեջ կրկնուում է, թէ մեր միակ փրկութիւնը միաւորման մէջ է (Չարենցի ականջը կանչի), առնուազն վերապրելու տեսակով:

Սուտ չէ, որ մենք փոքր ենք, ակելի ճիշտ՝ փոքրացել ենք, բայց կան մեզանից ակելի փոքրեր, որ կարողացել են, տարբեր արհաւիրքների դիմակայելով եւ առանց իրենց ինքնուրոյնութիւնը փոխելու, ստեղծել միջավայր, որ յարիր է իրենց թէ՛ անցեալին եւ թէ՛ ներկային (յիշենք Բելգիան, Սինգապուրը, Լիբսեմբուրգը, Անդորրան եւ այլն) մի առաւել պայմանով, որ նրանք ազերի կամ թուրքի դրացի չեն: Չզիտեմ ինչո՞ւ մենք այդ տեսակէտով յաջող ընտրութիւն չունեցանք եւ արդի Երեւանի փողոցներում քայլելով քիչ են մեր ինքնութիւնը յիշեցնող տարրերը, մանաւանդ տարբեր բնագաւառներում բուսած նորաձեւ կենցաղը՝ տիրակալ հեռախօս, հագուստկապուստ, արուեստ եւ անյայտ ծագում ունեցող կրթական համակարգ՝ մասնաւոր համալսարաններով եւ տարբեր տեսակի դպրոցներով, որ ամէնուր դրսից եկածի հոտ է բուրում, որոնց պտղաբերութիւնը այն է, որ որոշ մակարդակի աշակերտներ, ըստ կրթութեան մարմնի պնդումին, անկարող են նոյնիսկ կարդալ, հուսկ մանկավարժներին վերապատրաստելու քայլեր են արւում, իսկ գաւառական սխալախօսութիւնը գրեթէ համատարած բնոյթի է:

Խոշորների խաժամուժի նմանուող խաղերի ընթացքին փոքրերն են, որ ոտքի տակ են մնում, ինչպէս այն եղաւ մեր երկրում, Վրաստանում եւ դժոխքի վերածուած՝ ոչ այնքան փոքր Ուկրաինայում, եւ տեսնենք, թէ ո՞վ է լինելու յաջորդը եւ մոռացութեան գիրկը՝ չնեստենք Աֆղանստանը, Իրաքն ու Սիրիան, որ դարձել էին նոր զենքերի փորձադաշտ՝ բազում մարդկային կորուստներով եւ ակերուած բնակավայրերով:

Մեր պետական այրերի դերն ու պարտականութիւնն է՝ տիրող սուտ եւ կեղծ մթնոլորտում նաւարկել խելացիօրէն եւ զգուշութեամբ, քանզի խօսքը մեր լինել-չլինելու մասին է, եւ մի քանի անգամ չափելով է, որ որեւէ որոշում պիտի ընդունուի, մանաւանդ երբ գործ ունենք ազերիթուրք ճիւղների հետ, իսկ նրանք պատրաստ են մեզ յօշոտել, քանզի չեն դադարում կրկնել թէ, ոչ միայն Արցախը, այլ նաեւ Սիւնիքը, Սեւանը եւ նոյնիսկ Երեւանը հայկական չեն:



Տխմարութիւնը անսահման է եւ նրա դէմ պայքար չկայ:

Պատերազմ

«Հողը, աշխատող մարդու քրտինքի է ծարաւ եւ ոչ զինուորի արեան»

Ի վերջոյ, ուկրաինական տարածք ներխուժեց ռուսական բանակը եւ դադարեց մկան ու կատուի խաղը: Չեմ կարծում թէ Գողիաթի եւ Դաւթի նմանուող առճակատում է եղածը, բայց ուժերը անհամեմատ են եւ ոչ համադրելի: Ռազմական փորձառու քաղաքագետ կամ քանքարաւոր իմաստուն լինելու կարիք չկայ, հասկանալու, որ պետական բարձր մակարդակի գործիչները գուրկ են զգացումից, որի տեղը գրաւում է երկրի շահի հոգսը, մանաւանդ, երբ ուժերի յարաբերութիւնը հաւասարակշիռ չէ, իսկ մէկը ցանկանում եւ կարողանում է միւսին թելադրել իր կամքը: Ում համար է գաղտնիք, որ մէկ մարդ սպանողին դատում են որպէս մարդասպան, իսկ հազարներով ոչնչացնողներին՝ հերոս գովերգում:

Պատերազմը ժամանակներից ի վեր անցանկալի է եղել եւ մնում է այդպիսին: Նա հիմնում, ստեղծում է նոր գերեզմանատներ եւ երեք տեսակի հասարակութիւն՝ ողբացողներ, հաշմանդամներ, եւ գող-աւազակներ: Առաջին երկուսը իրենց իւրի մէջ տապկուելով մի կերպ գոյատեւում են, յարմարուելով իրենց վիճակի հետ իսկ երրորդ տեսակը, որ մեծ ի մասամբ լինում է բաղկացած արկածախնդիր, անկիրթ, կիսագրագետ անձանցով, որ սողոսկում են, իշխանութեան կառոյցներ եւ կերտում սակաւապետ (օլիգարխ) համակարգ, ինչպէս այն եղաւ մեր աւետեալ երկրում, մեր դրացիների մօտ եւ այլուր, որից գերծ չմնաց նաեւ Կիւեի պետական համակարգը:

Իրաւ է, որ անցեալով պիտի չդատենք ներկան, բայց տխմարութիւնից հեռու չէ, եթէ դաս չքաղենք ոչ միայն մեր այլ նաեւ ուրիշների անցեալի սխալներից, օրինակ՝ եթէ Հիտլերը, Բոնապարտի սխալին ծանօթ լինէր եւ ընդունէր, ապա նոյնը չէր կրկնի՝ աշխարհին դժոխային չարիքի ենթարկելով:

Երբ, մեր հարեւան Վրաստանում Սահակաշուիլին, որի իշխանութեան գալու միջոցները մութ մնացին, բազմեց երկրի ղեկավարի աթոռին, իր նպատակների առաջին հանգրուանը եղաւ թեքուել դէպի արեւմուտք՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու անուրջով եւ ստիպուած էր հակադրուել ու բախուել Ռուսաստանին: Կարծելով, թէ Արեւմուտքը ամեն տեսակով սատար է լինելու իր նախաձեռնութիւններին, փոխանակ օր առաջ ձեռք մեկնելու հաշտութեան միտումով, քանզի պայքարի եւ յաղթելու ոչ մէկ հնարաւորութիւն ունէր, հետեւանքը եղաւ, որ ունեցան թէ մարդկային եւ թէ տարածքային կորուստ, իսկ իր մաշկը փրկելու համար լքեց երկիրը՝ պատասպարուելով ուկրաինացի համախոհների մօտ:

Նոյն պատկերը չէ՞ր 44-օրեայ դժոխքի եւ մեր երկրում եղած կորուստների պարագային, իսկ միթէ նոյնը չէ՞, որ տեղի է ունենում Կիւեում: Փոխանակ, ժամ առաջ ջանք չինայել հրադադարի հասնելու, նախագահ Զելինսկին զէնք է բաժանում բնակիչներին, միւսնոյն



Ժամանակ օգնութեան կոչեր ուղղելով արեւմտեան երկրներին: Կարելոր է նշել նաեւ, որ նա դեռ չի հասկացել, որ նախ իր ունեցած մարտական ուժը բաւարար չէ Ռուսաստանին դիմակայելու եւ յետոյ ոչ մէկ այլ երկիր իր փոխարէն կռուելու պատրաստ չէ, եթէ ինքնապաշտպանումի անընդունակ ես, իսկ այդ ընթացքում կան գոհեր եւ տառապողներ, իսկ պարոն նախագահը հրադադարի բանակցութեան կը գնայ միայն այն դէպքում, եթէ ԵՄ-ը անյապաղ ընդունի Ուկրաինայի անդամակցութիւնը եւ միաժամանակ ռուսական բանակը կը հեռանայ իրենց տարածքից:

Թերեւս սխալ չէ պահանջը, բայց անհնար է չմտահոգուել եւ հարց չտալ, քանի որ ա՛յս չամբոբուող ցարը եւ ամէնուրեք տիրող խուժամուժը, որին գումարելի է մեր ներքին անհանդուրժողականութիւնը եւ անկայուն վիճակը, ի՞նչ ազդեցութիւն կարող են ունենալ մեր երկրի կեցութեան համար: Կարելորը, յանցաւոր եւ անմեղ փնտրելը չէ, այլ այն փաստացի անգործունէութիւնը իմա հակադիր մթնոլորտը, որ տիրում է օրէնսդիր մարմնի շրջանակում: Չեմ կարող հանդուրժել, ներել եւ մոռանալ այն անվայել դէպքը, երբ ԵՄ-ի նիստերից մէկի ընթացքին, մեր երկրի վերաբերեալ հարցը քուէարկութեան է դրում՝ հայ պատգամաւոր Հայկ Մամիջանեանը իր ձայնը տալիս է ազերիների օգտին, արդարանալով, թէ ինքը Փաշինեանի դէմ է գործել.- կարծեմ ասելիք չկայ, քանզի տխմարութեան ու նողկանքի շաղախ է եղածը եւ այդ նուաստը հայ է:-

Նոյն հոգեբանութեամբ անձանց մի բանակ եռանդով պայքարում է Հայ-թուրքական բանակցութեան դէմ, որ միայն սաղմնային վիճակի է, մինչդեռ անկախութեան առաջին օրերից ի վեր, 139 կազմակերպութիւն թուրքական մասնակցութեամբ արձանագրուած են մեր երկրի տարբեր ոլորտներում գործելու եւ քիչ չեն Երեւանում բնակարան առնող թուրքերը: Այսու կարելի է եզրակացնել, որ սահմանների լիակատար բացման դէպքում եւ արտագաղթի փաստով, թուրքերի օրինական ներխուժումը հնարաւոր տարբերակ կարելի է համարել է եւ մեր պատկան մարմինները այդ վտանգը կանխելու բոլոր միջոցները պիտի նախատեսեն, մանաւանդ որեւէ պայմանագիր ստորագրելու ընթացքին:

Պարզ չի, թէ ինչ հետեւանքներ կ'ունենայ ներկայ բախումը մեր երկրի տնտեսութեան եւ գոյութեան համար միայն մի բան պարզ է, որ ըստ ստորագրած դաշնագրի Պուտին-Ալիեւ համագործակցութիւնը ջերմանում է աւելի, չնայած վերջինս խոստացաւ աւելացնել զազի մատակարարումը դէպի Ուկրաինա, իսկ թոյլատրելի չէ՞ ենթադրել, թէ ռուս ղեկավարի փայփայած երազանքն է վերականգնել խորհրդային շրջանի հզօր եւ մեծ Ռուսաստանը իր նախկին բաղադրիչներով:

Ո՞վ գիտի: Մեզ մնում է զգաստ մնալ եւ զգուշանալ թէ դրսից եւ թէ ներսից:

28-2-2022

Խոցելի

«Խոցը աւելի վտանգաւոր է, երբ արիւնահոսութիւնը ներքին է» Լիլի, անզլ. միջնադար:



Խոցելիութիւնը մի երեւոյթ է, որին ենթակայ են բոլորը՝ մարդիկ, երկրները, պետութիւնները, կենդանական թէ բուսական աշխարհը եւ չնշուած միւս կառոյցները: Բացառութիւն չկայ եւ ամէնը ենթակայ են այդ չարիքի գործօնին: Նրանք խոցելի են եւ խոցուում են, եթէ զգօնութեան պակաս ունեն կամ անտարբեր են իրենց իսկ նկատմամբ:

Այս օրերին ողջ աշխարհի ուշադրութիւնը սեւեռուած է Ուկրաինայում տիրող վիճակին, ինչ որ մենք ապրեցինք աւելիով՝ քառասունչորսօրեայ դժոխքի օրերին, միայն թէ մեր պարագային լռութիւն տիրեց եւ որեւէ մատ շարժող չեղաւ, ինչպէս Կիպրոսի դէպքում, ուր աւելի քան 25 տարի է, ինչ թուրքերը իրենց ախորժակի, ճաշակի եւ ասանդութեան համաձայն գործում են առանց որեւէ արգելքի: Արդարադատ զգայուն հզօրները միշտ չէ, որ անհանգստացած են միւսների բարեկեցութեամբ, մանաւանդ երբ իրենց շահերը ներգրաւուած չեն:

Նոյն Ուկրաինան ռազմական սպիտակ ֆոսֆոր էր մատակարարում ազերի բանակին՝ գիտենալով, որ այն կիրառուելու է Արցախի տարածքում, քանզի չկար այլ նպատակ, բայց հոգը չէր, քանի որ շահաւէտ էր, նոյնիսկ հաշուի չառնելով որ մօտ 350 հազարանոց հայ զաւոյթ կայ այդ երկրում, որոնք չեն մնում փախստականների կարգավիճակով, այլ այդ երկրի տնտեսութեան համար բարգաւաճող գործակիցներ են, իսկ այսօր աշխարհով մէկ օգնութեան կանչեր է արձակում՝ չկասկածելով, որ այդ օրը սպասելի էր: Մտադիր չեմ այս գորշ դէպքերը թուարկել, միայն չարն ու բարին իրարից զատելով, բայց նշենք, որ փոխարէնը մերոնք Արցախից դէպի Կիւն օդանաւ ուղարկեցին՝ մարդասիրական օգնութեան 14 տոննա բեռով, չնայած նրանք Ալիւիին շնորհաւորել էին մեր դէմ յաղթանակի առիթով: :

Մի բան հաստատ է, որ խոցելիութեան աստիճանը կախում ունի գերհզօրների կամքից, ախորժակից եւ շահից, ինչպէս այն եղաւ Սիրիայի, Իրաքի եւ այլոց պարագային, իսկ այժմ արեւմուտքը ոտքի է ելել տարբեր պատժամիջոցներով ճնշելու ռուսներին, որ եւս իրենց բնոյթին համապատասխան է եւ վստահօրէն, կարելի է հաստատել, որ տխմարութիւնը հայկական որակ չէ, այլ հաւասար սփռուած, եթէ յիշենք վաթսունականներին Կուբայում տեղաւորած ռուսական հրթիռների առիթով եղած վիճաբանութիւնը, երբ Խրուշչովը կօշիկով խփեց սեղանին ՄԱԿի նիստի ընթացքին:

ԱՄՆ-ի տարատեսակ յայտարարութիւնների կողքին, որ յաճախ իրար հակասող են, արժանի է նշել Բելգիայում մի ռուսազգի ռուսանողին կրթաթոշակից զրկելու փաստը՝ որպէս պատժամիջոց, իսկ Իտալիայում նոյն նպատակով համալսարաններից մէկում արգելել են Դոստոեւսկի դասաւանդելը: Չեմ համարձակուում անուն տալ, միայն թէ նոյն տրամաբանութեամբ շարունակելու պարագային պէտք էր, որ երկու համաշխարհային պատերազմների տարիներին արգելէին Բեթհովենին ու Վագներին, իսկ այսօր մոռացել են արգելքի տակ դնել Մենդելեյեւի քիմիական տարրերի աղիւսակը, որ միակ է: Ողբալի է:



Խոցելիութիւնը միայն դրսից եկած արհաւիրք չէ եւ այն կարող է լինել ներքին պայմանների, *աղաթների* եւ համատարած տխմարութեան ինքնաձին հետեւանք, որ յատուկ չէ միայն մեր երկրին:

Այդ չարիքներից մէկը կարելի է համարել ծխախոտի, թմրանիւթի, սուրճի եւ ոգելից խմիչքի՝ հիմնականում օղի (թթի արաղ) ոչ-հսկելի գործածութիւնը, երբեմն բոլորը միաժամանակ:

Ամէն տարի հազարաւոր մահերի առիթով բուժական անձնակազմի հնչեցրած տագնապը, որ հետեւանք է այդ բաղադրիչների հիւանդաձին լինելու եւ նրանց անգիտակից օգտագործմանը, մնում է «ձայն բարբառոյ», իսկ փակ տարածքներում ծխելը արգելելու քայլը համազգային բողոքի առիթ եղաւ: Ոմանք փորձում են համոզել, թէ ճանաչում են մէկին, որի հարեւանի քեռին ծխում եւ խմում էր անչափ, բայց հարիւր տարի ապրեց: Տխմարութիւնը սահման ու չափ չունի եւ որպէս նորոյթ՝ Երեւանում գործում են մի քանի նարգիլէի սրահներ եւ երբեք դատարկ չեն լինում:

Մի այլ արհաւիրք է համարում կերակրի աղի անչափ գործածումը: Ըստ մասնագէտների՝ այն առաջացնում է սրտանօթային տարբեր հիւանդութիւններ, որից ամէն տարի հազարաւոր անժամանակ մահացութեան դէպք է լինում: Իրաւ է, որ ոմանք սեղան նստելուն պէս առաջին քայլը լինում է, կերակուրը ճաշակելուց առաջ, նախ աղել, մինչ հնարաւոր է, որ այն արդէն անալի չէր, բայց ինչ հոգ, մարդը իր սովորութեան գերին է եւ պիտի իր քայլը անի: Առողջապահութեան պատասխանատուները այն եզրակացութեան են եկել, որ նուազեցնելու համար աղի սպառումը, պէտք է ճաշարաններում եւ բոլոր սննդի կէտերում արգելել սեղանին աղի ամանի ներկայութիւնը, հակառակ դէպքում՝ ինչ որ չափի տուգանքի խնդիր է ծագում: Որոշումի տրամաբանական լինելը թողնենք ընթերցողի հայեցողութեան, միան այն կոշտ է ու բոխ:

Մի այլ ներքին խոցելիութեան կարեւոր նմուշ են երկրում տիրող մեքենաների անթիւ եւ անմիտ բախումները, որ հազարաւոր կորուստների պատճառ են եւ նրանց դէմ պայքարի որեւէ միջոց չկայ, բացի վարորդական արտօնութեան կաշառքով ձեռք բերելու ճանապարհի փակումը: Այս ոլորտում անհասկանալի եւ զարմանքը այն է, որ մեր երկրում արկածները յաճախ լինում են դէմ առ դէմ՝ ճակատային, ինչը նշանակում է որ երկուսից մէկը խախտում է կատարել, քանզի ծանօթ չէ եւ չգիտի երթելակութեան տարրական կանոնները. չմոռանանք ճանապարհային ազդանշանների իսպառ բացակայութիւնը: Նիւթական վնասների կողքին, որ արհամարհելի չեն, լինում են յաճախ երիտասարդ գործունեայ անձանց կորուստ, որ անփոխարինելի են, եւ մենք չենք կարող եւ իրաւունք չունենք նման կորուստներ ունենալ, հաշուի առնելով մեր երկրում ծնելութեան՝ իմա մարդկային աճի ցածր մակարդակը:

Ամենամեայ այցելութիւնների օրերին տեսնում եմ, թէ ի՛նչ անկարգութիւն է տիրում Երեւանի փողոցներում: Ոչ ոք դիմացիին հանդուրժելու տրամադիր չէ, իսկ անսպառ խճողումների պարագային շշակներն են, որ գործում են առանց դադարի՝ ստեղծելով ժխոր: Տգիտութեան այս անշեղ մթնոլորտում, չարիք դարձած անփոխարինելի հեռախօսը նաեւ առկայ է, որ երբեմն վթարների պատճառ է լինում:

Դեռ ասելիք շատ կայ, բայց այս է մեր ունեցածը եւ այն պիտի սիրենք եւ գուրգուրենք:

11-3-2022

ԷՐՏՈՂԱՆ ԿԸ ՇԱՀԱԳՈՐԾԷ ՌԻՔՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՅԱՌԱՋ ՄՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՐՔԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՌՍԻՅԱՆ ԹԵՄԱՆ

Յարութ Սասունեան

«Քալիֆորնիա Բուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

www.TheCaliforniaCourier.com

Ռուս-ուքրանական պատերազմի ընթացքին քանի մը ղեկավարներ խնդրայարոյց յայտարարութիւններ ըրին՝ քառասային իրավիճակէն օգտուելու եւ իրենց սեփական օրակարգերը յառաջ մղելու համար...

Այն պահուն, երբ նախագահ Ռեյչիվ Թայիվ Էրտողան տեղեկացաւ, որ Ուքրանիոյ կառավարութիւնը խնդրած է «անյապաղ միացում» Եւրոմիութեան (ԵՄ), նոյն այդ խնդրանքով ան դիմեց Թուրքիոյ համար:



Էրտողան կեղծաւորութեամբ ըսաւ. «Մենք բարձր կը գնահատենք Ուքրանիոյ՝ ԵՄ-ի անդամակցութեան հասնելու ջանքերը: Բայց ես կը հարցնեմ ԵՄ-ի անդամներուն՝ ինչո՞ւ ձեզ կ'անհանգստացնէ Թուրքիոյ անդամակցութիւնը՝ ԵՄ-ին»: Ան կոչ ուղղեց ԵՄ-ի թրքական խնդրանքին Ուքրանիոյ պէս «նոյն նրբազգացութիւնը» ցուցաբերել, սպա լկտիաբար քննադատեց ԵՄ-ի անդամ երկիրները՝ «անկեղծ չըլլալուն համար»:

Էրտողան թերեւամտօրէն հարցուց. «Կ'ընդգրկէ՞ք Թուրքիան ձեր օրակարգին մէջ, եթէ մէկը յարձակի նաեւ մեր վրայ»: Ապա դժգոհեցաւ. «Ինչո՞ւ չէք տար

անհրաժեշտ ռազմական սարքաւորումները Թուրքիոյ»: Որպէսզի յարձակի եւ սպաննէ աւելի մեծ թիւով մա՞րդ եւ գրաւէ աւելի շատ երկիրն է՞ր:

Թուրքիա ԵՄ-ի անդամակցութեան դիմում ներկայացուցած է 1987-ին եւ 1999-ին պաշտօնապէս ճանչցուած է իբրեւ անդամակցութեան թեկնածու, սակայն անդամակցութեան գծով անոր բանակցութիւնները, որոնք սկսած են 2005-ին, կասեցուած են Կիպրոսի կառավարութեան առարկութիւններուն պատճառով՝ 1974-ին, Թուրքիոյ կողմէ Հիւսիսային Կիպրոսի բռնագրաւման ի հետեւանք: Գերմանիա եւ Ֆրանսա նոյնպէս դէմ արտայայտուած են Թուրքիոյ ԵՄ-ի անդամակցութեան:

Նոյնիսկ Ուքրանիոյ պարագային, հակառակ այդ երկրին հանդէպ գոյութիւն ունեցող համակրանքին, երկար ժամանակ կը պահանջուի՝ ԵՄ-ի հետ անոր բանակցութիւններուն



աւարտման եւ տնտեսական ու քաղաքական անհրաժեշտ բարեփոխումներու կատարման, մինչեւ որ երկիրը ԵՄ-ին անդամակցելու չափանիշներուն համապատասխանէ:

Միւս կողմէ, Թուրքիոյ ԵՄ-ի անդամակցութիւնը շատ աւելի հեռու է, եթէ, անշուշտ անկկա երբեւէ տեղի ունենայ: Թուրքիա չի համապատասխաներ ԵՄ-ի անդամակցութեան չափանիշներուն: Օրինակ, Թուրքիա ունեցած է ռազմական քանի մը յեղաշրջում եւ յեղաշրջման փորձեր՝ իբրեւ ամբողջացում իր հակաժողովրդավարական վարչակարգին, որ, իրականութեան մէջ, բռնապետութիւն է: Թուրքիա խախտած է մարդկային իրաւունքներու գրեթէ բոլոր օրէնքները, անոնց շարքին՝ լրագրողներու զանգուածային բանտարկութիւն, ազատ մամուլի փակում, աջակցութիւն իսլամական ահաբեկիչներու, քիւրտերու ջարդ, քրիստոնէական եկեղեցիներու պղծում, Հիւսիսային Կիպրոսի բռնագրաւում, ռազմական միջամտութիւն Սուրիոյ, Հիւսիսային Իրաքի եւ Լիպիոյ մէջ, օգնութիւն Ատրպէյճանին՝ Արցախը բռնագրաւելու համար եւ Մարդկային իրաւանց եւրոպական դատարանի վճիռները գործադրելու մերժում:

ԵՄ-ի կարենալ անդամակցելու համար, Թուրքիա նախ պետք է վերանայի իր ամբողջ սահմանադրութիւնն ու օրէնքները, որպէսզի դառնայ ժողովրդավարական երկիր, ազատ արձակէ բանտարկուած տասնեակ հազարաւոր անմեղ քաղաքացիներ, դադրի ահաբեկիչներուն աջակցելէ, ընդունի եւ իրագործէ մարդկային իրաւանց եւրոպական չափանիշները, վերականգնէ փոքրամասնութիւններու իրաւունքները, դուրս գայ Հիւսիսային Կիպրոսէն, ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը եւ հատուցէ հայկական կորուստները:

Էրտողան երկչոտաբար հարցուց, թէ արդեօք Թուրքիա եւս կը քննարկուի՞ ԵՄ-ի անդամակցութեան համար, «երբ ոեւէ մէկը յարձակի նաեւ մեր վրայ», իրականութեան մէջ, ոչ ոք չէ յարձակած Թուրքիոյ վրայ, այլ՝ ընդհակառակն, Թուրքիա յարձակած է բազմաթիւ այլ երկիրներու վրայ:

Ցաւօք, ուրբանացի ժողովուրդին ողբերգական տառապանքը, ռուսական պատերազմի ժամանակ, եզակի երեւոյթ չէ: Պատմութեան ընթացքին տեղի ունեցած են նման դաժան բազմաթիւ պատերազմներ եւ զանգուածային սպաննութիւններ: Կարելի չէ մոռնալ 1915-էն 1923, Օսմանեան կայսրութեան կողմէ իրականացուած Հայոց Ցեղասպանութիւնը, որուն հետեւանքով զոհուեցաւ 1.5 միլիոն հայ. 1974-ին, Թուրքիոյ՝ Հյուսիսային Կիպրոս ներխուժումն ու բռնագրաւումը, որ դեռ կը շարունակուի. Թուրքիոյ արշաւանքը Հիւսիսային Սուրիա եւ, 2020-ին, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ շղթայազերծած Արցախի դէմ պատերազմը՝ բարբարոսական պատերազմական յանցագործութիւններ կատարելով, մինչ աշխարհը լուռ կը դիտէր, երբ կը ուրակոծուէին հիւանդանոցներ, դպրոցներ, բնակարաններ, կը մորթուէին կիներ ու մանուկներ: Չկային պատժամիջոցներ Թուրքիոյ կամ Ատրպէյճանի դէմ, չկար վայրագութիւններու մասին լրատուական միջոցներու 24-ժամեայ լուսաբանութիւն եւ չկար ռազմական կամ տնտեսական որեւէ օգնութիւն Հայաստանին ու Արցախին:

Այժմ անցնինք թուրք քաղաքական ղեկավարներու երկու անսպասելի յայտարարութիւններուն: Թրքական ազգայնական «Մեծ միասնութիւն» կուսակցութեան գլուխը եւ Էրտողանի կառավարութեան դաշնակից Մուսթաֆա Տեւրիչի զգուշացուցած է, որ Ուրբանիայէն ետք Ռուսիա թիրախ պիտի դարձնէ Կարսն ու Արտահանը՝ Արեւմտեան Հայաստանի երկու քաղաքները, որոնք բռնագրաւուած են



Թուրքիոյ կողմէ: «Եթէ դուք հետագային Ռուսիան տեսնէք մեր սահմաններուն մէջ, չզարմանաք», ըսած է թրքական կուսակցութեան առաջնորդը:

Նմանապէս, ընդդիմադիր թրքական «Լաւ» (IYI) կուսակցութեան նախագահ Մերալ Աքշէներ յայտարարած է. «Ո՞վ կրնայ պնդել, որ Թուրքիա ապահով է: Ո՞վ կրնայ ըսել, որ Փութինի մտքին մէջ չկան Կարսը, Արտահանը եւ Էրզրումը (Կարինը)»:

Ակնյայտօրէն, ասոնք ամպագոռգոռ յայտարարութիւններ են: Ռուսիա նման մտադրութիւններ չունի: Ընդհակառակն, Ռուսիա կը փորձէ Թուրքիան դուրս հանել ՆԱԹՕ-էն: Այսուամենայնիւ, այս երկու յայտարարութիւնները կարելոր մէկ օգուտ ունին հայկական կողմին համար. անոնք կը յիշեցնեն թուրք բնակչութեան, որ Կարսը, Արտահանը եւ Էրզրումը (Կարինը) վիճելի քաղաքներ են, որոնք չեն պատկանիր Թուրքիոյ: Անոնք Արեւմտեան Հայաստանի մէկ մասն են:

Վերջապէս, ահա՛ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրովի՝ այս ամսուն սկիզբը կատարած ուշագրաւ յայտարարութիւնը, գոր ան հնչեցուցած է ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց խորհուրդին մէջ. «Տարածքային ամբողջականութեան յարգման սկզբունքը կը վերաբերի միայն այն պետութիւններուն, որոնց կառավարութիւնները կը ներկայացնեն իրենց տարածքին մէջ ապրող ամբողջ ժողովուրդը»:

Թէեւ Լաւրով նկատի ունէր ՄԱԿ-ի 1970-ի հռչակագիրը՝ Ռուսիոյ կողմէ Ուքրանիա ներխուժումը արդարացնելու համար, ըստ երեւոյթին, սակայն, մոռցած է, որ իր մէջբերած սկզբունքը կը վերաբերի նաեւ արցախահայութեան: Լաւրով կը պնդէր, որ Ուքրանիոյ կառավարութիւնը չի ներկայացներ ուքրանական պետութեան տարածքին մէջ ապրող բոլոր ժողովուրդները: Եթէ Լաւրով այսպէս կը մտածէ, ապա Ռուսիա պէտք է ընդունի, որ Ատրպէյճանի կառավարութիւնը եւս չի ներկայացներ Արցախի տարածքին մէջ ապրող հայերը: Հետեւաբար, Ռուսիա պէտք է յայտարարէ, որ կ'աջակցի Արցախի Հանրապետութեան ինքնորոշման...

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան

Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

ՈՒՔՐԱՆԻԱՆ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶՈՀԱՍԵՂԱՆԻՆ

Յարութ Տէր Դաւիթեան, Լոս Անճելըս, 9 Մարտ 2022



Մեր յօդուածը փորձ մըն է քակելու այն տեղեկատուական խառնաշփոթի կծիկը, որ հրապարակ նետուեցաւ Ռուսական զօրքերուն Ուքրանիա ներխուժմամբ: Այդ ընելու համար, որպէս ենթահող, յարմար նկատեցինք երեք մէջբերումներ կատարել մօտ երկու տարի առաջ մեր գրած յօդուածներէն:



Ա. «Մասիս»-ի 4 Յունուար 2020 թիւին մէջ լոյս տեսած մեր «Ազգայնականութիւն եւ համաշխարհայնացում» յօդուածին մէջ կը գրէինք, որ «Համաշխարհային նոր համակարգի մը կազմաւորման փուլին մէջն ենք եւ եթէ ազգովին ճիշդ չկողմնորոշուինք, ապա հետեւանքները կրնան աղիտալի ըլլալ: ...Պերլինի պատի քանդումը (1989), երկու Գերմանիաներու վերամիաւորումը (1990), ինչպէս նաեւ Սովետական Միութեան փլուզումը (1991) մեկնակէտը կարելի է համարել համաշխարհային նոր համակարգի մը ստեղծման գործընթացին, որու արդիւնքներէն մին հանդիսացաւ նաեւ Հայաստանի նորանկախ Հանրապետութիւնը»: Ապա ամփոփ վերլուծումը տալով անցնող 2000 տարիներու համաշխարհային պատմութեան կարեւորագոյն եղելութիւններուն եւ անոնց ազդեցութեան մեր ազգի վրայ, կը գրէինք, որ մեծ պետութիւնները կը հետապնդեն ծաւալողական նպատակներ՝ «Զինուորական, հաղորդակցական, տնտեսական եւ այլ միջոցներով տիրապետելու միւս ազգութիւններուն վրայ: Իրենց նպատակներուն իրագործման համար, անոնք «վերահսկելի» բռնկումներ կը ստեղծեն աշխարհի տարածքին: Բայց եթէ յանկարծ «վերահսկելի»ն խախտի ու հսկողութեան սահմաններէն դուրս գայ, ապա հաւանականութիւնը մեծ է, որ պատճառ դառնայ Երրորդ համաշխարհային պատերազմի բռնկման: Բոլորս ալ գիտակից ենք, որ ի նչ ահաւոր վնասներ կրեցինք Համաշխարհային առաջին եւ երկրորդ պատերազմներու ընթացքին: Հետեւաբար, պէտք է լրջօրէն մտահոգուինք երրորդի հաւանական հետեւանքներով եւ ըստ այնմ պատրաստուինք»:

Բ. Ամիսներ ետք, երբ Արցախեան պատերազմը ընթացքի մէջ էր, «Մասիս»-ի 24 Հոկտեմբեր 2020 թիւին մէջ լոյս տեսած մեր «ԱՄՆ-ի նախագահական ընտրութիւնը եւ Արցախեան ազատամարտը» յօդուածին մէջ կը գրէինք. «Տեսանելի երեւոյթ է նաեւ, որ համաշխարհային այս նոր համակարգի կազմաւորումը չընթանար ԱՄՆ-ի նպաստաւոր ուղութեամբ ու հետեւաբար կը սպառնայ անոր վայելած տիրապետութեան սահմանափակման: Սպառնացողը եւ գոյութիւն ունեցող համաշխարհային կարգավիճակը (status quo) խախտողը Ռուսիան չէ, այլ՝ Չինաստանը, որ վերջին տասնամեակներուն հսկայաքայլ յառաջդիմութիւն կ'արձանագրէ, իրեն իւրայատուկ դրամատիրական ու համայնավարական տեսութիւններու խառնուրդ մենատիրական վարչակարգով մը: Մեր համեստ կարծիքով, Թրամփի անհաւանական թուացող 2016-ի ընտրութիւնը փորձ մըն էր անկայունացնելու համաշխարհային իրավիճակը եւ ստեղծուած խառնաշփոթութեան ընդմէջէն նոր ուղիներ որոնելու, որոնք կրնային պահպանել ԱՄՆ-ի գերակայութիւնը»:

Գ. «Մասիս»-ի 31 Հոկտեմբեր 2020 թիւին մէջ լոյս տեսած մեր «Հայ-Ռուսական յարաբերութիւնները եւ Արցախեան ազատամարտը» յօդուածին մէջ կը գրէինք. «Մենք կը խորհինք, որ Թուրքիան ԱՄՆ-ի «օրհնութեամբ» շղթայազերծեց այս պատերազմը, նպատակադրելով անկայունութիւն ստեղծել Ռուսիոյ եւ Իրանի համար, որ օգտակար պիտի ըլլայ իրենց, ինչպէս նաեւ Իսրայէլի համար: ...Արդե՞ք Ռուսիան կորսնցուցած է իր նախկին մենաշնորհը, իր կամքը պարտադրելու շրջանի տարածքին վրայ: Արդե՞ք անոր ներքին եւ արտաքին խնդիրները արգելք կը հանդիսանան տարածաշրջանին մէջ անոր ազատ գործունէութեան: Ուր է այն սահմանը, որ պիտի ստիպէ Ռուսիոյ աւելի կտրուկ միջոցներու դիմելու, պաշտպանելու համար իր կենսական շահերը»:

Ըստ երեւոյթին, Ուքրանիան հանդիսացաւ այդ սահմանը: Բայց որպէսզի չտարուինք մակերեսային ապատեղեկատուութիւններէ, փորձենք հասկնալ, որ ինչպէ՞ս հասունացաւ այս ճգնաժամը:



Ուրեմն, վերադառնանք մեր այս յօդուածի սկիզբին նշած Պերլինի պատին, Գերմանիաներու վերամիաւորման եւ Սովետական Միութեան փլուզման, որ մեկնակէտը համարեցինք համաշխարհային նոր համակարգի մը ստեղծման գործընթացին: Յիշենք, որ 1985-էն սկսեալ ՍՍՀՄ Կոմկուսի ընդհանուր քարտուղար Միխայիլ Կորպաչով սկսած էր իր Վերակառուցման գործընթացին (Perestroika/Glasnost): Ան համաձայնեցաւ ԱՄՆ-ի պետական քարտուղար Ճեյմս Պէյքըրի եւ Արեւմտեան Գերմանիոյ Արտգործ նախարար Հանս Տիթրիխ Կէնշըրի (հաւանութեամբը նաեւ Անգլիոյ եւ Ֆրանսայի) որ հաւանութիւն պիտի տայ Գերմանիաներու վերամիաւորման, պայմանաւ որ ՆԱԹՕ-ն իր ազդեցութեան գօտին պիտի չտարածէ արեւելեան Եւրոպայի վրայ: Սակայն հազիւ տասնամեակ մը ետք, 1999-ին ու ապա 2004-ին , ԱՄՆ-ը ոչ միայն դրժեց այդ համաձայնութիւնը, այլ աւելին, ՆԱԹՕ-ի անդամ դարձուց արեւելեան Եւրոպայի նորանկախ 14 երկիրներ: Չքաւականանալով այդքանով, ԱՄՆ-ը դրդեց Վրաստանին առճակատման երթալու Ռուսիոյ հետ 2008-ին, որուն հետեւանքով Ռուսաստան իր հսկողութեան տակ առաւ Աբխազիան եւ Օսեթիան: Դարձեալ չքաւականանալով այդքանով, ԱՄՆ-ը նաեւ դրժեց նախագահ Քլինթընի օրով տրուած այն խոստումը, որ ՆԱԹՕ-ն մարտական զօրքեր պիտի չտեղակայէ այդ երկիրներուն մէջ, այդ ընելով Պալթեան երկիրներուն (2014) եւ Լեհաստանի մէջ (2017): Իսկ 2014 թուին ԱՄՆ-ի դրդմամբ «գունաւոր» յեղափոխութեամբ Ուքրանիոյ ռուսամէտ նախագահ Եանուքովիչը ապաստանեցաւ Ռուսիա, վերջինս պատասխանեց Խրիմի թերակղզիի կցմամբ:

Ինչպէս կը տեսնէք, ԱՄՆ-ն է, որ միշտ կը փորձէ տարածել իր ազդեցութիւնը, նոյնիսկ դրժելով իր կնքած համաձայնութիւնները: 1823-էն ի վեր ԱՄՆ-ը հռչակած է իր Սոնրօ վարդապետութիւնը, հիւսիսային, կեդրոնական եւ նոյնիսկ հարաւային Ամերիկան նկատելով իր ազդեցութեան գօտին: Այդ պատճառաւ է, որ 1962-ին չհանդուրժեց Սովետական հռթիւներու տեղակայումը Քուպայի մէջ, ու աշխարհ սարսափով ապրեցաւ համաշխարհային պատերազմի մը պայթումին հաւանականութիւնը: Այդ պատճառաւ էր դարձեալ, որ 1973-ին չհանդուրժեց Չիլիի մէջ նոյնիսկ ժողովրդավար քուէարկութեամբ ընտրուած նախագահ Սալվատոր Ալենտէն, կազմակերպելով անոր սպանութիւնը եւ անոր տեղ բերելով իր կամակատարը՝ Օկուսթօ Փինոչէն: Ուրեմն, սպասելի չէ՞, որ երբ ԱՄՆ-ը իր կամակատարը կը հաստատէ Ռուսիոյ սահմանին կպած եւ մասամբ ռուսերէ բաղկացած Ուքրանիոյ մէջ, Ռուսաստանն ալ մեկնած իր ապահովութեան շահերէն հակազդէ այդ քայլին:

Դժբախտաբար մեծերու այս խաղին զոհ կ'երթան փոքրերը, կրելով ահաւոր վնասներ: Դժբախտութիւնը հոն է նաեւ, որ մեծերը, իրագործելու համար իրենց ծրագիրները, միշտ ալ կը յաջողին իրենց վարձկաններն ու կամակատարները սնուցել տուեալ երկրին մէջ եւ զանոնք հասցնել իշխանութեան, միշտ ալ բարեկարգումներու շղարշին տակ: Ու երբ այլեւս այդ կամակատարներուն պէտքը չի զգացուիր, կ'ազատին անոնցմէ, ինչպէս եղաւ պարագան Մոհամէտ Ռեզա Փահլաւիին, Սատտամ Հիւսէյնին, Մուամմար Քադաֆիին, եւ ուրիշներ: Երկար է շարքը այն փոքր պետութիւններուն, որոնք միայն վերջին քանի մը տասնամեակներուն զոհաբերուեցան ու աւերուեցան, սկսած Միջին Արեւելքի երկիրներէն (Իրաք, Սուրիա, Լիպիա, Եմէն), անցնելով Աֆրիկէէն (Սոմալիա, Լիպիա), Միջին Ասիայէն (Աֆղանիստան), նոյնիսկ Արեւելեան Եւրոպայէն (Սերպիա, Պոսնիա, Քոսովո), հասնելու համար Հայաստանին եւ Ուքրանիոյ:



Այս բոլորի լոյսին տակ, բնականաբար ի մտի կու գայ նախագահ Այզընհաուրըի սարսափելի նախագգուշացումը, կատարուած իր հրաժեշտի ուղերձին մէջ 17 Յունուար 1961-ին: Ան ժողովրդավար իշխանութեան սպառնալիք կը նկատէր պաշտպանական կապալառուներու եւ զինեալ ուժերու ահեղ միութիւնը: Որպէս համաշխարհային պատերազմի բովէն անցած եւ արհաւիրքներու ականատես զօրավար, ան կը նախագգուշացնէր մեզ այն աւերներէն, որ պիտի գային ռազմական հաստատութեան (բանակի) եւ զինամթերքի արտադրութեան ուժերու միջեւ գոյացող միութեամբ: Ահաւասիկ այս ուժն է, այսպէս կոչուած «շան գլուխ»ը, որ տագնապներ կը ստեղծէ աշխարհի տարածքին, միշտ եւ միայն հետամուտ իր շահերուն: Երբ ի մտի կ'ունենանք, որ համաշխարհային երկրորդ պատերազմէն ի վեր մօտ 300 հակամարտութիւններ պատահած են աշխարհի տարածքին, եւ ԱՄՆ-ը մեծ բաժին ունեցած է ասոնց մէջ, ապա աւելի կը հիմնաւորուի Այզընհաուրի նախագգուշացումը:

Վերադառնալով մեր այն հաստատումին, որ համաշխարհային ներկայ համակարգին սպառնալիքը չգար Ռուսիայէն, այլ՝ Չինաստանէն, հարց կը ծագի, որ ուրեմն ի՞նչ կը հետապնդուի Ուքրանիա-Ռուսիա այս հակամարտութեան ստեղծմամբ: Շատ հաւանական է, որ այս հակամարտութիւնը նախատիպն է ապագային գալիք Թայուան-Չինաստան հակամարտութեան, եւ ուրեմն բաւական դասեր կարելի է քաղել ասկէ, ըստ այնմ ծրագրելու ապագայի այդ հակամարտութիւնը: Հաւանական է նաեւ , որ ԱՄՆ կը փորձէ այսպիսով «գունաւոր» յեղափոխութիւն մը հասունցնել նոյնինքն Ռուսիոյ մէջ եւ Փութինին տապալումով եւ «Ելցին» մը բերելով իր ազդեցութեան տակ առնել Ռուսիան, զօրացնելով իր դիրքը Չինաստանի դէմ գալիք հակամարտութեան պարագային: ԱՄՆ-ի փորձագէտները տեղեակ չէ՞ն, որ Նափոլէոններու եւ Հիթլըրներու ջլաջողուեցաւ այդ մէկը եւ պիտի ջլաջողուի այս պարագային ալ, որովհետեւ Ռուս ժողովուրդը բնագոյային զգացողութեամբ պիտի համախմբուի իր առաջնորդին շուրջ, նոյնիսկ եթէ ան արիւնարբու Սթալին մը ըլլայ:

Աւարտենք մեր խորհրդածութիւնները հարցումով մը. այս բոլորի լոյսին տակ, ի՞նչ պէտք է ըլլայ մեր ընելիքը: Պատասխանը տուած էինք վերեւ նշած մեր «Ազգայնականութիւն եւ համաշխարհայնացում» յօդուածի աւարտին: Կը մէջբերենք. «Մէկը բողբոսն, բոլորը մէկին» ազգային հաւաքական գիտակցութեան ընկալումը պէտք է դարձնենք մեր առաջնահերթութիւնը, զայն ընդլուզելով մեր ապրելակերպին եւ գործելակերպին մէջ: ...Մեր պատմութիւնը մեզի ցոյց տուած է, որ մեր ազգային առողջ բնագոյով մենք յաջողած ենք հայացնել օտարածին Պարթեւները, Մամիկոնեաններն ու Բագրատունիները, որոնք մեծ ներդրում ունեցած են մեր յաւերժի երթին մէջ: Ի՞նչը կ'արգիլէ Հայաստանի բնակիչ հային եւ սփիւռքահային, արեւելահային եւ արեւմտահային, անշահախնդիր ներդրումով եւ միասնական ուժերով նպաստելու մեր յաւերժի երթին»:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԳԱՐՆԱՆ ԱՂՕԹՔ

Գարո՛ւն,
Յորդ կանաչէդ երանգ մը տուր,
Գարունանա՛ մ...
Վառ ծաղկունքէդ բուրմունք մը տուր,
Թող գինովնա՛ մ...
Ոսկելոյսէդ շոյանք մը տուր,
Լուսաբբենա՛ մ...
Մեղմ հովիկէդ համբոյր մը տուր,
Թող շորորա՛ մ...
Ես ալ քեզ պէս բոյր թոյրերով
Միրունանա՛ մ,
Յորդիմ յուրթի եւ աւշայորդ
Կեանքով վարա՛ ր,
Գրկեմ դաշտեր, անդ ու արտեր
Միրո՛վ անյագ,
Բաշխեմ լիառատ սեր-ծաղիկներ,
Երջանկանա՛ մ...
Ու բաշխումէս ծնի՛ն, ծաղկի՛ն
Նոր ծաղիկներ,
Աշխարհն դարձնեն մի բուրաստան
Միրանուէ՛ ր...



12/3/2022

.....

ԼՈՒՍՈՐԴԻՆԵՐ ՅԵՂԻՆ ՀԱՅԿԵԱՆ

Ամբողջ սերունդ մը նոր քաջաց,
Լուսորդիներ ցեղին Հայկեան՝
Աչքերն կեանքին դեռ նոր բացած,
Արնախումբին բաժին դարձան...

Ամէն մէկը մէկ դիւցազուն,
Առիւծասիրտ մի Հայկազուն,
Հին կաղնիին՝ ոստ բողբոջուն,
Հայ օճախին, հայրենեաց՝ սին:

Աճիւնն իրենց խառնուեցաւ
Հայոց հողին բազմադարեան,
Որ ուռճացաւ բազմապատիկ
Զերթ աւշայորդ հողը բերրի:

Հոգին անոնց բարձրացաւ վեր
Որպէս անմար աստղ լուսեղէն,
Գիշերուան մէջ՝ կանթեղ լոյսի,
Վառ հաւատքի, բորբ ոգիի:

Վերէն անոնք պիտի հսկեն
Մեր երկիրը դեռ տանջակէզ,
Սրբազան պարտք պիտ' ներշնչեն
Զմոլորիլ մեր ուղիէն:

Թէ սայթաքինք ու խարխափենք,
Ցաւը անոնց պիտ' մոնչէ,
Պիտ' որոտայ հրեղէն կայծեր,
Շանթի շեղբեր փայլատակէ:

Եւ այս անգամ, գէթ այս անգամ,
Մենք պիտ' ճգնինք արժանանալ
Անոնց թափած անբիծ արեան
Ու մատաղած կեանքին պարման:

Յայնժամ իրենց երազանքը
Պիտ' հուրհրատէ ու բոցկլտայ,
Ու վաղուան նոր արեգակը
Արշալոյսներ պիտ' խոստանայ:
17/2/2021

.....

ՇՆՈՐՀԷ, Ո՛Վ ՏԷՐ



Կեանքիս համար իմ բովանդակ,
Չեմ ուզեր ես գանձեր ու գահ,
Տուր ինձ, ո՛վ Տէր, գրիչ դալար,
Երկնեմ տողեր ես մեծապանջ...

Շնորհէ, ո՛վ Տէր, տանջանքն այն սուրբ
Որով պեղեմ հոգիս անտակ,
Գտնեմ գանձեր այնտեղ թաքնուած,
Հանեմ զանոնք աշխարհին լոյս...

Մենութեանս մէջ մտերիմ,
Անոնք խռովեն սիրտս, հոգիս,
Լոյսն արեւին անոնք տենչան,
Ընթերցողին սէր-գորովանքն...

Գթա՛ ինձ, Տէ՛ր, մի՛ թողուր որ
Ծուէ՛ն-ծուէ՛ն ամպերն հոգւոյս
Խտանան ու կապար դառնան,
Սիրտս սեղմեն լուռ, ցաւատանջ...

Թող անձրեւեն ամպերըն այդ,
Օրհնութի՛ւն, յո՛յս ու լո՛յս դառնան,
Գուցէ անձրեւն այդ բիրեղեայ
Նշոյլ ցօղով օծէ աշխարհին:
16/3/2022

.....
ՊԱՏԳԱՄԻ ՊԷՍ
Սիրասուն իմ գոյգ թռոնիկներ,

Հայոց լեզուն ձեզ կը յանձնեմ,
Խօսեցէ՛ք զայն պերճ ու վսեմ,
Պահպանեցէ՛ք, փայփայեցէ՛ք,
Ան մեր համակ էութիւնն է...

Ան ձեզ կու գայ բիր դարերէն,
Հայկ դիւցազնէն, Մեծ Մաշտոցէն,
Վարդանանքէն, Անդրանիկէն,
Մեր պատմութեան լոյս էջերէն...

Անոր մէջ են հիւլէները
Մեր բորբ արեան ու ոգիին,
Անոր մէջ են ճաճանչները
Հայ հանճարին Վահագնածին...

Մարգարտափայլ այնտեղ շողայ
Հայու հոգին միշտ վեհապանծ,
Որ ցելսին մէջ ու մրուրին



Մնաց մաքուր, բիրեղ ու ջինջ...

Մէն մի տառը ձեր շուրթերէն
Թոյ՛չք կ'առնէ դէպ' դարերը,
Ձեզ կամարէ ծիածանի պէս
Դէպի անցեալն ու գալիքը...

Ու Հայկազնեան մեր ցեղը վեհ
Կը վերյառնէ հըրաշափառ,
Գարնան ծաղկանց հետ գունազեղ
Կը շողշողայ ճաճանչավառ:

Ձեր շեշտերով նոր կեանք տուէք
Հնչիւններուն հազարամեայ,
Պանծացուցէք երթը լուսէ
Դէպ' դարերը, մեր ապագան:
28/2/2022

.....
ԵՐԿՈՒ ՏԱՐԵԹԻՒ

Երկու տարեթիւ՝ ճննդեան, մահուան,
Իսկ անոնց միջեւ ընթացող մի կեանք,
Տագնապներով լի, ցաւով անհամար,
Տենդ ու տենչերով միշտ ալ անկատար,
Շի՛թ շի՛թ ցնծութեամբ վերքերէն քաղուած,
Միրոյ երգերով կարօտով դիւթուած...

Բայց ամէնէն շատ,
Գունեղ ու բիրեղ երազանքներով,
Զորս կ'ուզենք քաղել ծաղի՛կ առ ծաղի՛կ,
Բայց ամէն անգամ ծաղիկն հոգեթով
Յանկարծ կ'անհետի մշուշին մէջ ծով,
Ու մենք նո՛ր յոյսով, նո՛ր սպասումով
Կ'որոնենք դարձեալ ծաղի՛կը հըրաշք...

Եւ կեանք մը համակ,
Չկայ վախճանը մեր փնտռտութին,
Չկայ աւարտը մեր երազանքին,
Մինչ վերջին բոպէն անցաւ կեանքին,
Երազանքն է որ կը մնայ անմահ,
Յո՛յս ու լո՛յս կու տայ զերթ անմար ճըրագ,
Մեր թեւերն անոր կը մնանք պարգած...
16/3/2022

.....
ՀԱՐԻԻՐ ԵՕԹ ՏԱՐԻ...
(Հայկական Յեղասպանութեան 107-րդ տարելիցին առթիւ)



Հարիւր եօթ տարի...նոր զգաստացայ,
Նոր զլիսի եկայ ու իմաստնացայ,
Ես չեմ ուզեր ա՛լ գուր շահախնդիր,
Ձեր փշրանքները պահեցէք ձեզի,
Կերակրեցէք լոկ ձեր խիղճը սուադ,
Եթէ դեռ ողջ է ձեր քար կրծքին տակ...

Իմ վերքերս ե՛ս սոսկ կրնամ բուժել,
Բռնախլուած հողս ե՛ս պիտի խլեմ,
Պիտ՝ ազատագրեմ զայն շան բերանէն,
Սուրբ նշխար հողս արինով ներկուած,
Ուր դար ու դարեր ոգիս եմ դրեր,
Շաղախեր անոր քրտինք ու աճին...

Հարիւր եօթ տարի...գիտեմ ես հիմա
Որ առանձին եմ, այլեւ վճռակամ,
Բռունցքուած մենակ ես պիտի դառնամ,
Ահեղ է ուժը պրկուած բռունցքին,
Իսկ իրաւունքը ուժով կը խլուի,
Սա է դասը իմ հարուստ պատմութեան...

Իմ սուրբ արինը, հողը իմ նախնեաց,
Սուրբ արդարութիւնն իմ կոխկոտուած՝
Մի՛ սակարկէք ձեր պիղծ շուկաներուն,
Փոխան արծաթի տենդին անյագուրդ,
Նաւթին, ոսկիին, իշխելու տենչին,
Արեանս վերջին շիթին ծարաւի...

Հարիւր եօթ տարի...կանգնած եմ հիմա
Իմ ճակատագրիս դէմ մեն ու մենակ,
Որուն լիիրաւ տէրն եմ այսուհետ,
Զայն իմ բուռիս մէջ ես պիտի պահեմ.-
«Գգուեց ինձ մի օր մի ձեռք հայրենի
Եւ ես մի գիշեր իմաստուն դարձայ»:
10/4/2022

.....

ԴԷՊ՝ ԼԵԱՌՆ ԱՐԱՐԱՍ

Քու ուղիդ եղաւ դժուար ու դաժան,
Լեռն ի վեր ձգուող քարքարոտ ճամբայ,
Լոյսին հասնելու կիրքով մոլեգին,
Անով օծելու քու ճակատդ ցինջ...

Եւ քանի անգամ ինկար վիրաւոր,
Ոտքերդ դարձան արեամբ թաթաւուն,
Բայց յամառեցիր ելլել շո՛ղ առ շո՛ղ,
Ճաշակել համը լոյսին երկնաւոր:



Ցաւատանջ խռովքդ ներսդ լոկ այրեց,
Երկնեցիք երգեր արիւնոտ վերքէդ,
Միրտդ լայն բացիր աշխարհի ցաւին,
Ուզեցիր մեղմել գուրծով կարեկիր:

Եւ հոգի՛ դ, հոգի՛ դ միշտ ալ հաւատաց,
Միրեց ու ներեց, բարի նայեցաւ,
Նոյնիսկ ոսոխին դէմ չչարացաւ,
Հայեացքով պայծառ ու անոխակալ:

Աշխարհին մէջ բիրտ դուն սիրո՛յ բաժակ,
Նարեկայ մաքուր, խոր խոստովանա՛նք
Որով պիտ' ելլես դէպ' լեառն Արարատ,
Անդունդէն մեղաց՝ երկինք լուսավա՛ռ:
8/2/2022

Երան Գույումճեան


ՊՐԻՍՄԱԿԷՍ

ԱՐՈՒԵՍ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ

Մարտօ Երամեան

Միշտ ալ արուեստը, իր բոլոր դրսետրումներով, եղեր է ամբողջ մարդկութիւնը միացնող ազդակ, նոյնիսկ կեանքի ամենէն դժուար պայմաններուն՝ պատերազմներուն ընթացքին: Համաշխարհային երկրորդ պատերազմին, զինուորները քաջալերելու համար երգիչ-երգչուհիներ կը շրջէին բանակատեղիները եւ իրենց ելոյթներով կը քաջալերէին պատերազմող զինուորները:

Նկարիչներ շատ յաճախ նկարելով պատերազմի դժխեմութիւնները, կրցած են թերեւս մէկ առ հարիւր համեմատութեամբ ոչ թէ ամոքել ցաւերը, այլ խելքի բերել պատերազմողները:



Այսօր նման բան անկարելի կը թուի:

Այսօր արուեստը ի՛նք զոհ դարձած է պատերազմին: Ուքրանիա-Ռուսիա պատերազմին որպէս Ռուսիոյ վրայ ճնշումի միջոց, Եւրոպան սկսած է հեռացնել այն մեծ երաժիշտները՝ ղեկավարներ թէ երգիչներ, որոնք մինչ այդ Եւրոպայի տարբեր քաղաքներու սիմֆոնիք նուագախումբերուն կամ օփերայի տուններուն հպարտութիւնն էին:

Տակաւին՝ համալսարանական ծրագիրներէն սկսած են հանուիլ բոլոր այն հեղինակները, որոնք ռուս եղած են, առանց նկատի առնելու անոնց

մեծութիւնը, ինչպէս օրինակ Տոսթոյեվսկի եւ ուրիշներ:

Ասով Եւրոպան ամբողջ աշխարհին կ'երեւի որպէս ամենայետամնաց հաւաքականութիւն մը, որ կը շարունակէ ապրիլ, կամ վերադարձած է ապրելու իր մութ դարերուն մէջ, դժբախտաբար:

Նման կեցուածք բնաւ սպասելի չէր Եւրոպայէն, որուն ամբողջ աշխարհը կը նայէր որպէս արուեստներու եւ գրականութեան ռահվիրայ կամ սատարող:



Հարցերուն տեղեակ խօսնակներ եւ քաղաքական մասնագետներ շատ լաւ գիտեն այս բոլորին տուն տուող պատճառները, ազատօրէն եւ առանց վախի կը յայտարարեն զանոնք, սակայն Եւրոպան, ինչպէս որ գրեթէ միշտ խուլ եւ համր կը դառնայ, երբ հարցերը իր սրտով չըլլան, ինչպէս Արցախեան 44-օրեայ պատերազմին, կամ անկէ առաջ՝ Պաղեստինի պայքարին ընթացքին, այս անգամ եւս, տարբեր պատճառներով, ոչ միայն լուռ կը մնայ, այլ եւ կ'ընդունի տգէտի հագուստ հագնիլ, հասնելու համար իր նպատակներուն, որոնք միայն ու միայն շահ կը հետապնդեն:

Տակաւին երկու տասնամեակ միայն անցած է այն օրէն, երբ Թալիպանի զինուորները 2001 թուականին կրօնի անունով ականահարեցին Աֆղանիստանի Պամիյան շրջանի շատ հին՝ 6-րդ դարու, եւ շատ մեծ երկու Պուտտաներուն կոթողները (մէկը 54,8 մէթր, իսկ երկրորդը 37,8 մէթր), զրկելով աշխարհն ու գալիք սերունդները հին պատմութեան կարեւոր իրազործումներէն մէկէն: Թէեւ այսօր, վերատիրապետելէ ետք Աֆղանիստանի, Թալիպան իր իսկ կործանած Պուտտաներու վայրը բացած է զբօսաշրջիկներուն համար, որոնք պիտի տեսնեն հսկայ խոռոչները ականուած Պուտտաներուն: Անհեթեթութիւն պարզապէս:

Իսկ դեռ վերջերս ճիհատիստներն ու ազերիները ի՛նչ հրճուանքով աւերեցին Ղազանչեցոց Տաճարը. ո՞ր քաղաքակիրթ մարդուն ձեռքը պիտի չդողար նման կոթող աւերելու համար ... Այսպէս չէ՞ որ կը կորսնցնենք մեր մարդկայնութիւնը, երբ կը դադրինք Արուեստը տեսնելէ եւ գնահատելէ:

Ի՞նչ տարբերութիւն ուրեմն այսօրուան Եւրոպային եւ Թալիպանի վայրագ զինուորներուն կեցուածքներուն միջեւ: Եթէ Թալիպանը քարեղէն կոթողներ քանդեց, Եւրոպան այսօր ոգեղէնն է, որ կը քանդէ:

Դժբախտաբար նման կեցուածքներ մեզ, հայերս բնաւ չեն զարմացներ, մենք որ անընդհատ կը կերտենք եւ անընդհատ ականատես կ'ըլլանք մեր աշխատանքին քանդումին: Մեր վանքերն ու եկեղեցիները, Անին իր բազմաթիւ կոթողներով, Ջուղայի խաչքարերը եւ շատ ու շատ կոթողներ կը շարունակեն թիրախ մնալ վայրագութեան:

Միւս կողմէ սակայն ինչպէ՞ս չգնահատել Իրանի Իսլամական պետութիւնը, որ կը գուրգուրայ, կը խնամէ եւ կը նորոգէ իր հողերուն վրայ գտնուող հայկական վանքերն ու կոթողները: Մարդիկ գիտակից են, որ նման կոթողներ միայն շահ կ'ապահովեն իրենց, զբօսաշրջիկներու աւելի եւ աւելի մեծ թիւ մը գրաւելով:

Իրանը սակայն իր այս կեցուածքով թէեւ պէտք էր օրինակ հանդիսանար գոնէ իսլամական աշխարհին, կը մնայ զարտուղի երեւոյթ մը նորօրեայ պատմութեան մէջ:

Յետոյ սրտի ահաւոր փոթորիկով կը դիտենք մսխուող կեանքերը ու կը մտածենք՝ գոնէ թող մնան երիտասարդները, որոնցմէ եկող սերունդներուն մէջ անպայման պիտի ըլլան երաժիշտներ, գրագէտներ, արուեստագէտներ եւ ստեղծեն արուեստի նոր կոթողներ: Բայց պէ՛տք է ըլլան, մնան երիտասարդները, որոնք ահա արդէն քանի տարի է, քանի տասնամեակ եւ քանի դար, ի գուր կը զոհուին:

Գանձասար

ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ

ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐԸ

Ինչպէ՞ս չի՞շել, չվերապրիլ ԱՊՐԻԼԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵրու քաղցրութիւնը, հայկականութիւնը, հայ մշակոյթի ու պատմութեան կենսայորդ աւիշով լիցքաւորող այն անմոռանալի օրերը, որոնք կը կազմակերպուէին Մելգոնեան Կրթական Հաստատութեան եւ ՀԲԸՄիութեան Մշակութային Յանձնախումբերու միասնական գործակցութեամբ: Ամբողջ շաբաթ մը տեւող ձեռնարկներով, միջոցառումներով եւ ընկերային ծրագիրներով,



Մելգոնեանի աշակերտութիւնը, Կիպրահայ գաղութը ընդհանրապէս եւ հիւրերը կը հաղորդուէին հայ մշակոյթի կենարար շունչին, հայոց պատմութեան ոգիին, հայ հոգեմտաւոր արժէքներուն՝ անօրինակ խանդավառութեան եւ ոգեւորութեան մթնոլորտի մը մէջ...



Այդ Շաբաթները տեղի կ'ունենային Ապրիլ ամսուան մէջ, ընդհանուր կարգախօս ունենալով՝ ԱՊՐԻԼԸ ԱՊՐԵԼՈՒ ԱՄԻՍ Է նշանաբանը, Եղեռնայուշ Ապրիլին հակադրելով հայ մշակոյթի ապրեցնող շունչով վերապրելու վճռակամութիւնը...

Հայկական Շաբաթներուն անպայմանօրէն կը հրաւիրուէին հիւր-դասախօսներ, արուեստագէտներ՝ Մայր հայրենիքէն կամ Սփիւռքահայ գաղութներէն: Անոնք ելոյթ կ'ունենային Մելգոնեան Կրթական Հաստատութեան պատմական բեմէն, ներշնչելով նորահաս սերունդը եւ կիպրահայութիւնը հայօրէն վերապրելու նորոգ տեսիլքով եւ հաւատքով:

1983-ին սկիզբ առած այս գեղեցիկ ամանդութիւնը տեւեց շուրջ մէկ տասնամեակ, երբ արդէն շշուկներ սկսան տարածուիլ որ ՀԲԸՄիութեան Կեդրոնը որոշած է փակել Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, իրեն յատուկ պատրուակներով:

Առաջին Հայկական Շաբաթը նշանակալից կերպով նուիրուած էր հայոց լեզուին եւ կը կրէր «Հայ լեզուն որպէս հայապահպանման վահան» խորագիրը, քանզի լեզուն «դարեր շարունակ եղած է մեր միակ անկողոպտելի գանձը, մեր ապրելու անընկճելի ոգին, տեւելու եւ տոկալու կորովը:...Լեզուն լոկ բառերու կուտակում կամ նախադասութիւններու հիւսուածք մը չէ: Անիկա ժողովուրդի մը ինքնուրոյն մտածողութեան եւ աշխարհընկալման արտացոլումն է, անոր ներքին ապրումներուն, խոհերուն եւ յոյզերուն, երազներուն եւ ձգտումներուն արտաքին համապատկերն է...Լեզուն ինքն է ոգին, եւ լեզուով միայն կ'իմաստաւորուի եւ կ'արժեւորուի «ազգային ինքնութիւն» հասկացութիւնը...», ինչպէս կարեւորութեամբ կը նշէր ՀԲԸՄ Մշակութային Մարմնի ատենապետուհի Երան Գույումճեան իր բացման խօսքին մէջ: Շաբթուան գլխաւոր դասախօսն էր՝ Ֆրանսայէն յատկապէս հրաւիրուած, հայագիտութեան մեծագոյն նուիրեալներէն, Սորպոնի համալսարանի հայոց լեզուի ամպիոնի վարիչ Դոկտ. Փրոֆ. ԺԱՆ ՓԻԷՌ ՄԱՆԷՆ, իր տիկնոջ հետ միասին: Կը յիշեմ ինչ պատկառանքով, խորին ակնածանքով ան խօսեցաւ Հայերէն լեզուին մասին, անոր ճկունութեան, անոր հարստութեան, նոր բառեր կազմելու անոր անսահման հնարաւորութեանց մասին...Ան ընդգծեց յատկապէս որ «Հայերէնն իր ճոխութեամբ, ճկունութեամբ, իմաստաբանական հազարերանգ առումներով փայլատակել է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոէմում, պոէմ, որ նման է փիլիսոփայական խորհրդածութիւններէ մի փառահեղ տաճարի»: Եւ իր ամբողջ խօսքը ան ներկայացուց մաքուր արեւելահայերէնով, զարմանք ու հիացում պատճառելով բոլորին: Ելոյթ ունեցաւ հայագէտ եւ Մելգոնեանի դասախօս, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի արագ գիտաշխատող Դոկտ. Երուանդ Մելքոնեան, շեշտելով յատկապէս Մայր Հայաստանի մէջ տարուող



հայագիտութեան գործը, քանզի վերջիվերջոյ այնտեղ, ինչպէս կարելորութեամբ շեշտեց ան, հայերէնը պետական լեզու ըլլալով կ'ապրի պատմական զարգացում եւ բազմակողմանի ծաղկում, շնորհիւ հայրենի պետութեան ստեղծած լաւագոյն պայմաններուն: Կիպրահայ յայտնի բանաստեղծներ՝ Սմբատ Տեվլեթեան եւ Վարուժան Պետիկեան կարդացին իրենց գրական ստեղծագործութիւններէն քերթուածներ, մինչ երաժիշտ եւ խմբավար Սեպուհ Աբգարեան ընթերցեց վերջերս մահացած Ներսէս Թամամեանի բանաստեղծութիւններէն փունջ մը, արժեւորելով մասնաւորապէս Հայերէնը որպէս կենսունակ ստեղծագործական լեզու:

Կարելորութեամբ պիտի ընդգծել որ այս Շաբաթներուն մէջ, առանձնակի տեղ ունէր միշտ Մելգոնեան Կրթական Հաստատութեան քառաձայն Երգչախումբը, խմբավարութեամբ յայտնի երաժիշտ ու խմբավար Մայեստրօ Սեպուհ Աբգարեանի, որուն կախարդական ճիպոտին տակ ներկաներուն կը մատուցուէր մեր ամենէն շատ սիրուած հայկական երգերու գեղեցիկ փունջ մը, Կոմիտասեան շունչով համակելով զանոնք:

Հայկական Շաբաթները հայութեան աւազանին մէջ վերամկրտութեան օրեր էին, ազգային ինքնաճանաչման ու ինքնագիտակցութեան օրեր, հայկականութեան ջահը մշտավար պահելու ուխտ ու երդում, յանձնառութեան ոգի եւ գիտակցութիւն...

Կը յիշեմ թէ ի՛նչ մեծ խանդավառութեամբ կը պատրաստէինք Շաբթուան ընդհանուր ծրագիրը իր բոլոր մանրամասնութիւններով, հրաւերներ կը դրկէինք գաղութիս անդամներուն, պատկան մարմիններուն եւ անձնաւորութեանց մէկ առ մէկ...եւ ամէն ինչ կը կազմակերպուէր ամենայն բժախնդրութեամբ եւ պատասխանատուութեամբ:

Տարիներ շարունակ, Հայկական Շաբաթներուն հրաւիրուեցան հայ եւ օտար հայագետներ կամ քաղաքական դէմքեր, պատմաբաններ եւ հայ գիր ու դպրութեան մշակներ...Կը յիշեմ յատկապէս անունները՝ Ֆրետերիք Ֆէյտիի, Քրիսթօֆըր Ուոքըրի, Պարոնես Քարոլայն Քոքսի, Փրոֆ. Լիւսի Տէր Մանուէլեանի, Հայր Անդրանիկ Կոստեանի, Լեւոն Վարդանի, Ժիրայր Դանիէլեանի, Կարպիս Սուրէնեանի..., իրենց յատկանշական կերպարներով, խօսք ու զրոյցով, բառ ու բանով, իրենց յղած ուղղակի թէ անուղղակի պատգամներով...: Բարեբախտաբար, միշտ ալ առիթներ կը ստեղծուէին որ հիւր-բանախօսները շփում ունենային աշակերտութեան հետ, մեզի հետ, կը կազմակերպուէին հաւաքոյթներ, պտոյտներ դէպի Կիպրոսի տեսարժան վայրերը, հանդիպումներ...: Այս բոլորը Ապրիլ ամիսը կը վերածէին ազգային ոգիի զարթօնքի, յար եւ նման բնութեան զարթօնքին...

Յիշողութեանս մէջ անջնջելի կը մնան՝ Ժան Փիեռ Մահէի ուսուցիչ՝ Ֆրետերիք Ֆէյտիի հայերէնասիրութիւնը, իր խորին գնահատանքը հայոց լեզուին, Քրիսթօֆըր Ուոքըրի բառացի մատնանշումը այն մասին, թէ «Երբ հայերը ստեղծեցին Անիի բարձր քաղաքակրթութիւնը, երբ Նարեկացին կ'երկներ իր աշխարհահռչակ Մատեանը, մենք՝ Անգլիացիներս տակաւին ծառերու վրայ էինք...», Հայր Անդրանիկ Կոստեանի ըմբոստ եւ արհաշունչ ոգին՝ միասնաբար հետապնդելու հայ արդարացի Դատն ու Պահանջատիրութիւնը, իր զուարթամտութիւնն ու համեստութիւնը, Լեւոն Վարդանի հմուտ, հետազօտական պրպտումները մեր պատմութեան գեղեցիկ խորխորատներուն,



Պարոնես Քարոլայն Քոքսի ջերմ նուիրումովինը Արցախին եւ Արցախեան դատին, Ժիրայր Դանիէլեանի կուռ, տրամաբանուած հէնքի վրայ պատրաստուած զոյգ դասախօսութիւնները, նախկին Մելգոնեանցի Կարպիս Սուրենեանի հաղորդական պատմելաձեւը հայ հոգեմտաւոր գանձերուն մասին...եւ այսպէս շարունակ:

Միլվա Կապուտիկեան բանաստեղծուիին այնքան դիպուկ կերպով կը գրէ.

«Օ՛ գարնան ամիս, ապրիլ՝ Ապրիլ,

Դու որ բերում ես ծաղիկներ ու կեանք,

Ինչո՞ւ դու դարձար մահուան տարելից,

Մահով մնացիր մեր պատմութիւնում»:

Ապրիլը ԱՊՐԵԼՈՒ ամիս դարձնելու ճիգ ու յանձնառութիւն էր ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԸ», որ միշտ ալ տեղի կ'ունենար Ապրիլ ամսուան երկրորդ շաբթուան մէջ, որուն աւարտին կը տօնախմբէինք Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան հերթական տարեդարձը, քանզի Բարեգործականի գոյատուրը հայօրէն ապրելու եւ յարատեւելու անընկճելի ՈԳԻԻ արտայայտութիւն էր գերազանցօրէն սփիւռքի լարծուն հողին վրայ, «փոշի ազգ» դարձած տարագիր հայը հայ պահելու յանձնառութիւն:

Աւա՛ղ, պատմութեան անցան լուսոյ տաճար Մելգոնեան Կրթական Հաստատութեան հետ միասին Հայկական Շաբաթները, որոնց տեղը մնաց թափուր եւ անփոխարինելի...

Եւ տակաւին քանի-քանի սերունդներ պիտի գային իրենց մտքի եւ սրտի ջահը վառելու Մելգոնեանի Մեսրոպեան ջահէն, քանզի Մելգոնեանը իսկապէս ալ փոքրիկ Հայաստան մըն էր՝ Միջերկրական այս գեղածիծաղ ամիւրուն վրայ՝ իր հայաբոյր մթնոլորտով, հայաշունչ եւ հայրենաշունչ ոգիով, իր հանդիսութիւններով եւ ձեռնարկներով, որոնց մէջ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԸ ունէր իր ուրոյն տեղն ու դերը:


ԱԻԱՂ, ՓԱՌԱՅՍ ԱՆՅԱԻՈՐԻ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱԳԻՆԻ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՌԱՖԱՅԷԼ ԻՇԽԱՆԵԱՆԻ

ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Վաթսունական-եօթանասունական թուականները իմ սերունդիս ոսկեդարը կը նկատեմ, մանաւանդ անոնց համար, ովքեր այդ տարիներուն բախտաւորութիւնը ունեցած են ուսանիլ Խորհրդային Հայաստանի բարձրագոյն հաստատութիւններէ ներս: Թէեւ կենցաղային փայլուն պայմաններ չունէինք, ինչպէս ամբողջ ազգը, բայց ունէինք բարգաւաճող հայրենիք մը, օրը օրին շքեղացող Երեւան մը, զարգացող գիւղեր, աշխարհի հետ մրցող բարձարամակարդակ արուեստ եւ...դասախօսական աստղայոյլ մը:



Լոյս իջնէ ինծի դասաւանդած դասախօսներուն շիրիմներուն վրայ՝ Մկրտիչ Մկրեան, Էդուարդ Աղայեան, Էդուարդ Ջրբաշեան, Գէորգ Ջահուկեան, Լեւոն Ներսիսեան, Պարոյր Մուրադեան, Մօրուս Հասրաթեան, Վարազդատ Յարութիւնեան, Հրանդ Թամրազեան, Մանուէլ Ասատրեան, Մինաս Հիւսեան եւ ուրիշներ, որոնցմէ ամէն մէկը իր ուրոյն դրոշմը դրաւ իմ եւ դասընկերներու մասնագիտական թէ հայեցի կրթութեան ու զարգացման վրայ: Յաճախ

հպարտութեամբ յիշած եմ որ դասախօսներէս ոմանք աշակերտած են պատմաբան Յակոբ Մանանդեանին, լեզուաբան Հրաչեա Աճառեանին ու Մանուկ Աբեղեանին, պատմաբան քաղցրաբարբառ Լեւոյին...Եւ այսպէս օր մըն ալ վազքի դրօշակը անցաւ մեզի եւ մենք ալ մեր կարգին ըրինք ինչ որ կ'ակնկալէին մեզմէ մեր երանաշնորհ ուսուցիչներն ու դասախօսները:

Այս տարի հարիւրամեակն է այդ յոյլէն Փրոֆ. Ռաֆայէլ Իշխանեանին՝ իրօք առասպելական, ինքնատիպ, երբեմն անըմբռնելի, մի գուցէ հակասական, թերեւս ծայրայեղ, մոլեռանդ պաշտպան հայոց լեզուի եւ յառաջամարտիկ հայոց լեզուի անաղարտութեան:

Ա.- Հայոց լեզուի անաղարտութիւն.- Փրոֆ. Ռ. Իշխանեան Հայոց լեզուին կը մօտենար այնպէս ինչպէս Վահէ-Վահեան մեհեանի քրմապետը պիտի մօտենար Արամազդի կամ Անահիտի բազիւնին: Մահացու մեղք էր օտար անհարկի փոխաբերութիւն գործածել մեր մայրենիին մէջ: Աննախանձելի վիճակի մէջ կը յայտնուէր այդ դժբախտը, մանաւանդ եթէ Բանասիրական բաժնի ուսանող մըն էր: Այդ պահուն ենթական պատրաստ պէտք է ըլլար լսելու ծանրագոյն խօսքեր: Տողերուս հեղինակը անգամ մը գտնուեցաւ այդ աննախանձելի վիճակին՝ «Ֆակուլտետ» բառը գործածելուն պատճառաւ...

Այսօր, երբ չկան այլեւս «եղբայրական հանրապետութիւնների եւ ժողովուրդների» սին լոգունգները, չկայ Միութեան պաշտօնական լեզուին՝ ռուսերէնին բոնապետութիւնը, զարմանքով ու զայրոյթով ականջալուր կ'ըլլանք մեր արեւելահայ հարազատներու կոտորաւոր սանձարձակութիւններուն եւ անպատասխանատու բռնապաշարին՝ ըլլայ բեմերէն, հեռատեսիլէն, Ազգային ժողովի ամբիոնէն թէ խօսնակներէն...: Այդ պահերուն ես ինծի կ'ըսեմ՝ «ի՛նչ լաւ է որ չկաք, յարգելի՛ Իշխանեան եւ Հիւսեան, այլապէս վաղուց սրտաճաք կ'ըլլայիք ու կ'իյնայիք համալսարանի յատակին յանկարծամահ...»:

Հայոց լեզուի եւ գրականութեան մեր դասախօսները կը հաւատային թէ պաշտօնական վայրերուն մէջ, պետական գրագրութեան եւ մանաւանդ զանգուածային լրատուութեան մէջ պէտք է պահպանել մեր լեզուի բարձր մակարդակը եւ ոչ թէ հասկնալի ըլլալու սիրոյն իջեցնել լեզուի որակը՝ ընդհուպ մօտենալով գոեհկութեան աստիճանի: Իսկ այժմ՝ յո՞ երթաս հայերէն...արդէն հասած է այն հանգրուանին, որմէ ետք՝ «Լեզուն է որ կը մեռնի»:



Բ.- Պաշտամունք հայ քնարերգութեան հանդէպ.- Վահան Տերեանն ու Ակսել Բակունցը Փրոֆ Ռաֆայէլ Իշխանեանի եւ այլոց համար գեղեցկագոյն արեւելահայերէնի տիպարագոյն մակարդակն էր: Եւ իրաւօրէն էին անոնք, այնպէս ինչպէս Դանիէլ Վարուժանի, Զօհրապի, Վահան Թէքէեանի հայերէնը՝ արեւմտահայերոս համար:

Հնուց ի վեր լեզուի դասաւանդման մէջ ընդունուած էր գեղեցկագոյն տողեր կամ բանաստեղծութիւններ գոց սորվելու (անգիր անելու) միջոցը, որովհետեւ տիպարագոյն տողեր, դարձուածքներ, լեզուամտածողութեան «կաղապարներ» կ'օժանդակէին լեզուի տիրապետման: Ռաֆայէլ Իշխանեան ջատագովն էր այս ասանդութեան՝ ճիշդ հակառակը վերջին տասնամեակներուն յայտնուած կարգ մը տնօրէններու եւ մանկավարժութենէ բան չհասկցող «վա՛յ» հոգաբարձուներու, այլեւ քաղքենի ծնողներու, որոնք կը պնդէին. «Պզտիկը գոց սորվելով մի՛ ծանրաբեռնէք, կը խրտչին», եւ այլն, եւ այլն: Կը խնրտչի՞ն, ուրեմն դիտեցէք ձեր շուրջը եւ դուք կը լսէք անհամ, չոր, անաղուպղպեղ անգլերէն (ամերիկերէն) եւ հայերէն:

Եւ այսպէս Փրոֆ. Ռ. Իշխանեանի մօտ քննութեան ներկայանալու համար չգրուած նախապայման մը կար՝ քսան-երեսուն բանաստեղծութիւն գոց սորված ըլլալ Տերեանէն (յատկապէս), Զարենցէն...: Տողերուս հեղինակը երբ քննութեան ներկայացաւ եւ հարցուեցաւ. «Ի՞նչ անգիր գիտէք Տերեանից», պատասխանեցի. «Ո՛չ միայն Տերեանից այլեւ Վ. Թէքէեանից...»: Ռ. Իշխանեանի աչքերը ճակատին թռան, շրթունքները կը ծոտեց եւ՝ «Դէ՛հ, ասէք տեսնե՞ք...», եւ ես իրար ետեւէ Թէքէեանէն, Սիամանթոյէն, Բակունցէն, Վարուժանէն ու Շահնուրէն հատուածներ արտասանելով «ոմբակոծեցի» զինք...: Այնուհետեւ մենք աւելի մտերմացանք, այն աստիճան որ համարձակութիւնը ունեցայ Շահնուրի «Նահանջի...» իսկական օրինակը տալ իրեն եւ ետքն ալ Օտեանի «Ընկեր Փանջունին»...:

Գ.- Հինգ հոլով ընդ եօթ հոլով: Հայոց լեզուի հանդէպ ակադեմական հետաքրքրութիւնն ու անոր գործածութեան ոլորտները աւելի ընդարձակելու խնդիրը հասցուցած էին զանազան վիճաբանութիւններու եւ քննարկումներու: Այսպէս էր օրինակ Հայոց այբուբենի հիմնադրութեան թուականի հարցը, գիտութեան զարգացման հետ ստեղծուող նոր բառերու, եզրերու եւ եզրոյթներու հայերէն համարժեքները ստեղծելը եւ մեր լեզուի մէջ հինգ կամ եօթ հոլովներու (բիւզանդական) վէճերը: 1970-ականներու սկիզբը կրկին սուր բնոյթ ստացած էր այս խնդիրը: Լեզուի կաճառն ու բանասիրական աշխարհի «մեծերը» տեղ մը հասած էին որ կոկորդ կոկորդի ինկած էին: Ուսանողներուս համար քիչ մը չափազանցուած կը թուէր այս պայքարը:

Այսպիսի տրամադրութեան մէջ առիթով մը, երբ կը զրուցէինք մեր դասախօսներուն հետ, համարձակութիւնը ունեցանք ըսելու թէ արեւմտահայերէնը այս հարցը լուծեր է վաղուց, ինչո՞ւ նոյնը չեն ըներ հոս: Կրկին Փրոֆ. Իշխանեան շրթունքները կ'ծեց եւ ըսաւ. «Գիտե՞ք, ճիշդ բան էք ասում, յաջորդ քննարկման կը բերեմ արեւմտահայերէնի պարագան»: Մեր լսարանի քանի մը սփիւռքահայ ուսանողներս օգտուելով այս դրական վերաբերմունքէն, անմիջապէս մեր խնդրանքը ներկայացուցինք եւ ըսինք. «Ընկե՛ր Իշխանեան, մենք աւարտելուց յետոյ գնալու ենք դասաւանդելու սփիւռքահայ դպրոցներում, որտեղ դասական ուղղագրութեամբ ենք սովորել եւ սովորեցնելու ենք: Մեր առօրեայ լեզուն



ու մամուլը եւ բոլոր գրքերը այդ ուղղագրութեամբ են լոյս տեսնում, հետեւաբար խնդրում ենք այս հարցը ներկայացնել ամբիոնի յետագայ նիստում, այսինքն՝ թող թոյլ տրուի մեզ դասական ուղղագրութեամբ ներկայացնել մեր գրաւոր աշխատանքները եւ քաջալերել մեզ նաեւ արտայայտուել արեւմտահայերէնով...»: Չեմ չափազանցեր, Իշխանեանի այքերը փայլեցան եւ անցաւ գործի:

Յաջորդ օրերուն ան դիմեց իր գործակիցներուն, մենք ալ մեր սիրած դասախօսներուն: Խնդիրը ստացաւ լուրջ բնոյթ: Դիմում գրեցինք, բացատրեցինք, խնդրեցինք եւ յանձնեցինք մեր սիրելի դեկանին (Բանասիրական բաժնի տնօրէն)՝ Փրոֆ. Մկրտիչ Մկրեանին, որ ծագումով վանեցի էր եւ մի երկու տարի յաճախած էր տեղւոյն վարժարանը:

Յաջորդ օրերուն մեզի կը մօտենային հինգ եւ եօթը հոլովականները եւ ամենայն վստահութեամբ կը հաւաստիացնէին թէ իրենք ամբողջ հոգիով պիտի պաշտպանեն մեր արդարացի խնդրանքը...: Սկսաւ ամբիոնի ժողովը «փակ դռների յետեւում...»: Ջարմանալիօրէն բարձրաձայն վեճի ձայներ չկային: Քսան ըռպէ ետք առաջինը դուրս եկաւ քարտուղարուհին փայլուն ժպիտով՝ բթամատը վեր պահելով, որմէ ետք դուրս թռաւ Իշխանեանը եւ՝ «Եղաւ, տղէ՛րք, միաձայնութեամբ վաւերացուեց...»:

Ահա այսպիսին էին օրերը մեր ուսանած տարիներուն: Այժմ 50 տարի ետք կարօտով կը յիշենք այդ օրերը, երբ դրական ու արդիւնաւէտ հսկողութիւն մը սկսեր էր ամրապնդուիլ մեր հայրենիքին մէջ ի շահ մայրենի լեզուին: Այսօր նաեւ թախիժով կը յիշենք այդ օրերը, որովհետեւ ամէն ըռպէ, ամէն վայրկեան ականատես կ'ըլլանք մէկ կողմէն արեւմտահայերէնի թաւալլոր անհետացման, միւս կողմէն Տերեանական, Չարենցեան, Բակունցեան եւ Թոթովենցեան արեւելահայերէնի աղաւաղման, բռնաբարման, խորթացման եւ «ացիա»ներով ու «ակցիաներով» բառերու լեռնակուտակման:

Լոյս իջնէ քու շիրիմիդ՝ հարիւրամեայ Ռաֆայէլ Իշխանեան եւ Աստուած փրկէ արեւելահայերէնը:

Դոկտ. Մինաս Գոճայեան

Լոս Անճելըս, 13 Մարտ 2022

« ԾԷՆ ՄՆԱՔ, ՊԱՅԾԱՌ ՄՆԱՔ...»



Այն օրերուն, քոյրս, եղբայրս եւ ես, ամէն Կիրակի առաւօտ քալելով մեր տունէն Գահիրէի Պէյն Էլ Սուրէյն թաղի Սուրբ Աստուածածին եկեղեցին կ'երթայինք: Հեռու չէր եկեղեցին : Բայց ճամբան շարա'ա էլ Կէշի մուտքէն քիչ մը անդին, կը շեղէինք մեր ուղղութիւնէն, կը մտնէինք դասընկերոջս՝ Աստիկ Սիրունեանի բնակած տան ետեւի փողոցը, եւ հոն, կապոյտ փեղկերով շաքարավաճառի խանութէ մը արիսուս կը գնէինք :



Ներսը ընդարձակ չէր, բայց ապրանքներ շատ կային, եւ փայտէ դարակներու վրայ, ամեն տեսակ գունաւոր շաքարներով լեցուն , ապակիէ գիրուկ շիշեր քով քովի շարուած կ'ըլլային...

Խանութպանը մեզ լաւ կ'ընդունէր :

Փողոցին նայող երկու խոշոր պատուհաններու ետեւ, մարմարէ սեղանի մը վրայ ան կը բանար արիսուսով լեցուն շիշերէն մէկուն բերանը, ու զանազան ձեւերով փոքրիկ կիներու, կենդանիներու եւ մարդերու սեւ արձանիկներ, թուղթէ պզտիկ տոպրակի մը մէջ կը պարպէր:

Մենք Սուրբ Աստուածածին եկեղեցիին դպրաց դասին մաս կը կազմէինք, եւ լսած էինք որ արիսուսը ձայն կը գտէր եւ կ'աղուորցնէր անոր հնչիւնը :

Տարիներով մասնակցած էինք եկեղեցոյ երգեցողութիւններուն, ու ես բոլոր շարականները եւ արարողութիւնները այլեւս գոց սորված էի :

Մեր դպրապետը Պոլսեցի Լեւոն Սիրունեանն էր, Եգիպտոսի առաջնորդ Մամբրէ արք. Սիրունեանին եղբայրը :

Երգած ժամանակ ես կը տեսնէի եկեղեցիին նաւը, անոր երկու կողմի պատերու իւրքանչիւրին վրայ բացուած հինգ կամ վեց վանդակապատ խոշոր պատուհանները ու զաւիթէն դաս յառաջացող գետնի բաւական մաշած եւ գոյնը նետած կարմիր գորգը :

Նոր չէր եկեղեցին : Ան շինուած էր 1800ական թուականներու կեսերուն, այն ատենուայ կարելոր թաղերէն Պէյն էլ Սուրէյնի մէջ : Բայց տարիներու հոլովոյթին հետ փոխուած էին լաւ ժամանակները եւ թաղին փայլն ու շքեղութիւնը մնացած էին փոշիներու մէջ : Անցած էին նաեւ Սուրբ Աստուածածնի փառքի օրերը, եւ ան նոր սերունդին համար այլեւս դարձած էր հին եւ անկարելոր :

Անոր փայտէ բարձր ձեղունին տակ կնունքներու եւ հարսնիքներու ուրախ արարողութիւններ չէին կատարուէր այլեւս :

Շատեր կը նախընտրէին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ նոր եւ գեղեցիկ մայր եկեղեցին :

Բայց Սուրբ Աստուածածնի մէջ ըսուած աղօթքներն ալ, ուրիշ տեղերու չափ սուրբ էին, եւ անոր հին ու սրբատաշ քարերն ու պատերը, տարիներով ծծած էին երկինք բարձրացող շատ հոգեշունչ խնդրանքներ, եւ վառած մոմերու լոյսեր ...

Եկեղեցին լուսաւոր էր :

Պատարագի կեսերուն, երբ արելը երկինքին վրայ բարձրացած կ'ըլլար եւ սարկաւազը բուրվատով խորանը եւ դասը կը խնկարկէր, պատուհանէն ներս թափանցող արեւի սինակ մը եկեղեցին երկնքին կը կապէր եւ ներսի աղօթքները Աստուծոյ կը հասցնէր...

Ես կը սիրէի խորանի կողմէն եկած խունկի քուլաները շնչել, բուրվատին եւ քշոցներուն ձայնը լսել, եւ հոն երգուած Հաւատամքին մտքով ընկերանալ :

Կը սիրէի նաեւ դասին մէջ մեր երգած Սուրբ Սուրբը, եւ եղանակի արեւելեան դարձուածքներով ինձի շատ հաճելի Տէր Ողորմեան :

Դասէն անդին, ամէն Կիրակի նաւուն մէջ կը տեսնէի թաղէն եղող ութը կամ տասը պառաւ մամիկներ, որոնք նստարաններուն առջեւ կանուխէն տեղ գրաւած կ'ըլլային : Աւելի ուշ եօթ կամ ութ ուրիշ հաւատացեալներ ալ կու գային :

Պատուհանի լոյսին տակ ես դեռ կը տեսնէի կլոր եւ փայլուն ակնոցներով պրն Արամ Մովսէսեանը : Ան միշտ կը հագուէր սրճագոյն եւ գծաւոր զգեստ մը, ու բարեպաշտի կեղծ երեւոյթով, ոտքի կը հետեւէր արարողութեան :

Ես առաջին մէկ օրէն չէի համակրած իրեն : Անձնապէս խնդիր չէի ունեցած հետը բայց գիտէի եւ լսած ալ էի մանաւանդ, որ փառատենչ էր եւ նենգամիտ :

Իրմէ քիչ անդին, զաւիթի եւ նաւի սահմաններուն վրայ, ամէն կիրակի բաց ափերը երկինք դարձուցած, կ'աղօթէր Ս. Աստուածածին եկեղեցոյ յաղթանդամ հոգաբարձու պրն Պետրոսը : Ան սովորաբար բանկալին մէջ կը մնար, եւ մոմերու վաճառքին կը հսկէր, բայց



երբեմն, պարապ ժամերուն եկեղեցի կը մտնէր, ու նաւի մուտքին՝ հեռուէն կ'ընկերանար մեր երգերուն :

Իր զօրաւոր ու բամբ ձայնը կը խառնուէր մերիններուն, եւ երգեցողութիւնը տարբեր ձեւով, ճոխ ու հմայիչ կը դառնար ներկաներուն :

Բայց պրն Պետրոսին գործունէութեան գլխաւոր դաշտը, եկեղեցիէն դուրս գտնուող բանկալին մէջ էր : Հոն , պատարագէն վերջ տուն դարձողներուն մաս կը բաժնէր, եւ կլոր ափսէի մը առջեւ կեցած՝ թաւ ձայնով շարունակ

- Շէ՛ն մնաք, պայծա՛ռ մնաք աղքատներուն պնակը անտես մի՛ առնէք, կը պոռար:
- Այդ ձայնը, աղքատներուն պնակը անտես առնողներու ետեւէն գրեթէ մինչեւ փողոց կը հասնէր, ու դժուար էր չլսել ձեւացնել....

Իսկ հոգաբարձու Պետրոսը ափսէին առջեւ կեցած սրտաբուխ նուէրի կը սպասէր...
Բանկալը մեծ էր եւ ներսի մթնոլորտը միշտ տաքուկ կ'ըլլար : Մենք դպիրներս, կը սիրէինք եկեղեցիէն վերջ հոն հաւաքուիլ, եւ սեղանին շուրջ խօսելով հաճելի ժամանակ անցնել :

Յունուար ամսուան պաղ կիրակի մը, խօսակցութիւնները բանկալին մէջ վերջացած էին : Պրն Պետրոսը սովորականին պէս կիրակի օրուայ մասը գատելէ վերջ, թուղթ պզտիկ տոպրակի մը մէջ ինծի նշխար մըն ալ նուէր տուաւ :

Նշխարները միշտ չէին գտնուէր :
Երբ տուն հասայ, մասը եւ նշխարը մօրս տուի : Մասը ընտանիքով բաժնուեցանք :
Նշխարը, մայրս համբուրեց եւ տարաւ անկողինիս բարձին տակ պահեց : Եղբօրս եւ քրոջս բարձերուն տակ ես արդէն տեսած էի նման նշխարներ :

Անոնք կարելոր էին :
Մայրս նշմարելով որ քովը կեցած՝ ըրածը կը դիտեմ,
- Պահեմ, որպէսզի գիշերները բարի հրեշտակներ գան եւ քեզի անուշ քուն բերեն , - ըսաւ :
Բայց գիշերը անուշ քուն բերող հրեշտակները չէկան : Գոնէ ես չտեսայ անոնց գալը...
Գլուխս բարձիս վրայ դրած, անոնց փոխարէն տեսայ միայն մայրս, որ հրեշտակի չափ բարի, իր կեանքի ամբողջ քունը սիրով նուիրեց որպէսզի մե՛ ըր ըլլար անուշ, հանդարտ ու անխռով ...:

Կարօ Պօհճալեան
Քամփինաս, Պրագիլ
20 Յունիս 2011

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Պատի՛ւ ու փա՛ռք բոլոր անոնց, որոնք գիտեն դուրս ելլել իրենց նեղ-հատուածական, կուսակցական, յարանուանական պատկանելիութիւններէն, կամ իրենց սին հաշիւներէն ու շահերէն, իրենց նեղ խոզակէն եւ տեսնել, գրել ու բարձրաձայնել ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ինչպէս որ կայ ան, ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ անաչառ ու անկաշառ կերպով եւ գործել միայն ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ մտածողութեամբ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ տեսլականով եւ յանուն



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ գերագոյն շահերուն եւ արժէքներուն ի խնդիր...Նմաններն են մեր յոյսը հայութեան եւ հայրենիքի լուսաշող ապագային:

.....
Ամէնէն արժէքաւոր բաները՝ յոյսը, երկինքն ու աստղերը, գեղեցկութիւնն ու հրապոյրը բնութեան, նոյնիսկ իմաստութեան եւ բարութեան հնարաւորութիւնը անվճար տրուած են բոլորին, առաւել կամ նուազ չափով, բայց մարդը կը փնտռէ ոսկիի փայլը, ոսկեայ հորթը...Եւ գուցէ իր վերջին շունչին միայն անդրադառնայ վերջիններուն գնայուն ու փուճ արժէքին եւ առաջիններուն մնայուն, յաւիտենական արժէքին...

.....
Այնքա՛ն խոր կարօտը ունիմ ՀԱՅԲԵՆԵԱՅ ՀՈՂԻՆ, որուն հարագատ ծոցին մէջ միայն կարելի է ըմպել հայ տոհմիկ մշակոյթի ակունքներէն բխող՝ հայ երգն ու տաղը, հայ Բառն ու Բանը...., գտնել սեփական հարագատ հոգին, թօթափել օտար ու խորթ տարրերը, որոնք շարունակ կը դիզուին ՀԱՅ ՀՈԳԻՐԸ վրայ՝ այս օտար ափերուն վրայ, աղարտելով անոր բիւրեղեայ, զուլլալ մաքրութիւնը....Հայ հոգին իր հողին վրայ միայն կրնայ ուռճանալ, ընձիւղիլ, ծաղկիլ....յայտնաբերել ինքզինք լիարժէք կերպով, սեփական բոյրով ու թոյրով...

.....
Անկաշառ ու անկաշկանդ մտածել...Սա չէ՞ ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ...որ կրնայ պայմանաւորել մտքի թռիչքը դէպի մարդկային հոգւոյն եւ տիեզերքի անպարագիծ ԱՆՀՈՒՆՈՒԹԻՒՆԸ...

.....
Ամէն օր՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար, կը փորձենք նորովի իմաստաւորել կեանքը, կեանքի խորհուրդը, կը փնտռենք անոր բուն արժէքը, խորքային նպատակը, եւ երբեք վերջնական, բացարձակ պատասխան մը չենք գտներ...Եւ այսպէ՛ս, ամբողջ կեանք մը կ'անցընենք այդ «բրաբիոն» ծաղիկի որոնման ընթացքին մէջ...Գուցէ այդ որոնումն է որ կ'արժեւորէ մեր գոյութիւնը այս աշխարհիս երեսին...Որոնում՝ որ նաեւ կեանքի, աշխարհի եւ մեր ես-ի ճանաչման գործընթաց է՝ մեր ծնած օրէն մինչ գերեզման...Գուցէ՝ ոչ այս կեանքին մէջ, այլ յետ-մահո՞ւ պիտի կարենանք յայտնաբերել մեր գոյիմաստը...Ո՞վ գիտէ...Թերեւս ալ պարզապէս ԱՊՐԻԼԸ է կեանքի բուն իմաստը...ԱՊՐԻԸ՝ բոլոր զգայարանքներով, ամբողջ սրտով, միտքով, հոգիով, էութեամբ...ԿԵԱՆՔԻ ԲՈՒՆ ԻՄԱՍՏԸ ՆՈՅՆԻՆՔՆ ԿԵԱՆՔՆ Է...

.....
Դժուար է ԱԶԱՏ ըլլալ...Մամոնայի եւ նիւթի բռնակալութենէն, ...Դիւրին, հեշտ կենցաղի, զուարճանքներու գայթակղութենէն...Փառքի ու դիրքի հրապուրանքէն...Կերակրատաշտի ձրի եւ առատ վայելումէն...Սովորութեան բռնատիրութենէն...Անմիտ, ծոյլ ու յոյլ ապրելութեան թմբիւրէն: Չորն ասեմ ու զորն խոստովանիմ...զի անթիւ են մարդը ստրկացնող, անազատ դարձնող ԹԱԿԱՐԴՆԵՐԸ...

.....
Երջանկութեան ոսկեայ բանալին մի փնտռե՛ք երբե՛ք այլոց մօտ, որպէզի չհիասթափուիս, չյուսալքուիս...Զայն փնտռէ սեփական անձիդ մէջ, հոգիիդ մէջ, սրտիդ մէջ, արարքներուդ մէջ, որոնց Տէրն ես, զանոնք տնօրինողը...Եթէ երջանկութիւնդ կերտես ապաւինելով այլոց



վրայ, յայնժամ ուշ թէ կանուխ դառնօրէն պիտի զոջաս, անդրադառնալով մասնաւորաբար որ ապաւինողականութիւնը ստրկամտութիւն է նաեւ...Ազատ անձնաւորութիւնը իր երջանկութիւնը կը կերտէ համահունչ իր իտէալներուն, իր հոգեմտաւոր պահանջներուն, իր խառնուածքին եւ զայն կը ստանայ համաչափ այն ճիգին, զոր կը ներդնէ այդ ուղղութեամբ...Ուրիշէն ստացուած երջանկութիւնը շատ անգամ կ'ըլլայ խաբէպատիր եւ յօդս կը ցնդի ան՝ ուշ թէ կանուխ...

.....
Իշխանատենչութիւն, փառամոլութիւն, եսամոլութիւն...ահա քանի մը ախտեր որոնք քանդած են եւ կը շարունակեն քանդել մեր տունը...Աթոռի կամ աթոռակի վրայ նստողը ամէն ինչ կ'ընէ անկէ չհեռանալու համար, միւսը՝ անոր տիրանալու համար, երրորդը՝ անկէ լաւագոյնս օգտուելու համար...Աթոռը կը դառնայ ի վերջոյ գերագոյն նպատակ, փոխանակ ըլլալու միջոց ազգի ու հայրենիքի ծառայութեան...

.....
Ի՛նչ լաւ է որ սորվիլը տարիք-մարիք չունի, այլ կախեալ է մարդ էակի աշխարհընկալումէն, իր բաց միտքէն, վարքագիծէն, հեզութենէն նաեւ, քանզի մարդ կայ որ կը կարծէ թէ ամէն ինչ գիտէ...թէ նոր բան սորվելու կարիք չունի...Իմաստաւորուած օրը, մինչդեռ, ա՛յն օրն է, երբ նոր գիտելիքներով, նոր իմացութեամբ կը հարստանանք, կ'իմաստնանանք, կենսափորձի նոր շողով մը կը լուսաւորուինք...Այլապէս, գուցէ կեանքը կը կորսնցնէր իր հետաքրքրականութիւնը որոշապէս:

.....
Ի՛նչ որ ալ պատահի, չկորսնցնել ՀՈԳԻԻ ԼՈՅՍԸ, ներքին այդ լուսաւոր խորհուրդը, որ ամէնէն դժուար ու դաժան պահուն անգամ՝ յոյս կը ներշնչէ, կայծ կու տայ սրտիդ, չի ձգեր որ յուսալքութեան գիրկն իյնաս...Յուշարարն է ան թերեւս այն բերկրանքին, զոր կեա՛նք կ'անուանենք, առանց խորանալու անոր իմաստի խորախորհուրդ շերտերուն մէջ...Կեանքը գերագոյն պարզէն է Արարիչին մեզի տրուած, եւ մեզմէ կախեալ չէ՞ գերագանցօրէն՝ զայն իմաստաւորելն ու արժեւորելը...: Եթէ զգայարանքներդ չեն բթացած, եթէ անոնք կը զգան բնութեան ձայները, բոյրերն ու թոյրերը, երկնքի անհունութենէն մինչեւ արեւին ոսկէշող փայլն ու աստղերու բոցկլտանքը, խոտի ու ծաղկի բուրմունքն ու զմայլելի գեղեցկութիւնը, մանկան ճիչն ու զուարթուն հայեացքը, կ'ապրիս յայնժամ կեանքի հրաշք-խորհուրդը, կ'ըմպես անոր երանութիւնը, որուն հաւասար ոչինչ կայ այս աշխարհիս վրայ, որքա՛ն ալ քեզ հմայեն իրերու շքեղութիւնն ու պերճանքը...

.....
Ինչո՞ւ մարդը արժեւորել սոսկ իր հաստուածական պատկանելիութեամբ...«Մեզմէ չէ ու վերջ»...Ինչո՞ւ չկարենալ անաչառ ըլլալ, լայնախոհ, անկաղապար...Ինչո՞ւ միայն ձգտիլ լոկ աթոռներու պարզեւած չորքոտանի փառամոլութեան...Ինչո՞ւ չբանալ միտքն ու հոգին ամէն մէկ հայու, սիրել ու գնահատել զայն անպայմանական մօտեցումով...Ինչո՞ւ չկարենալ յաղթահարել մեր մէջ նստած փոքրոգին, նեղմիտը, մարդուկը եւ բարձրանալ ՀԱՅՈՒ ԿՈՉՈՒՄԻՆ...

Հայ կեանքի մէջ եւ ոչ միայն, կարելոր դիրքերու վրայ յաճախ կ'ըլլան այնպիսի մարդիկ, որոնք ամբողջովին զուրկ են տուեալ դիրքին պահանջած պատրաստութենէն, բարոյական նկարագիրէն, ազգային-մարդկային արժեքներէն...բայց ունին միայն այդ դիրքով հպարտանալու, գոռոզանալու սին ինքնախաբէութիւնը...

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Թէ չփշրես շղթաները ստրկութեան,
Որոնք յաճախ քու մէջդ են քեզ շղթայած
Ու փայփայուած ինչպէս տանտէր մը հարազատ,
Ինչպէ՛ս հասնիս ազատութեան երազաբաղձ:

.....

Բանաստեղծը Աստուծոյն մօտիկ
Բառերովն իր լոյսեր վառեց,
Բայց ուրիշներ շահ փնտռեցին
Ու մերժեցին բառը լուսէ...

.....

Հոն ուր սէրը կը թեւածէ,
Բիւր ժպիտներ շողան լուսէ,
Չարն ու նենգը կը նահանջեն,
Բարին միայն յաղթանակէ...

.....

Յաւս հրկիզուէր ու ճըրագ դառնար,
Լուսոյ ճաճանչներ բաշխէր աշխարհին,
Յետոյ աստղ դառնար երկնի ճակատին
Արտասուքի պէս ցոլար մաքրափայլ...

.....



Խառնաշփոթ աշխարհիս մէջ,
Ճիշդն ու սխալն են խառնուեր,
Որ մոլորիս, գլուխ չհանես,
Մխալը ճիշդ դուն ընկալես:

.....
Հոգին օր մը մարմին առաւ
Եւ մարդ դարձաւ, աշխարհ եկաւ,
Ու երբ մարդը հոգին մոռցաւ,
Կոյր բնագոյներու գերի դարձաւ:

.....
Թող լռեն ընդմիջտ հրագէնները,
Միրոյ մեղեդին թող հնչէ յաւէտ,
Միրով թրթռան սիրող սիրտերը,
Աշխարհը դառնայ պարտէզ ծաղկաւէտ:

.....
Թող հողմը փչէ, քամին թող ոռնայ,
Մրտիս խարոյկը թող միջտ վառ մնայ,
Ես ապաւինիմ անոր տաք շունչին
Անոր ծիրանի, ճարճատին կրակին:

.....
Աշխարհն է այդպէս, սի՛րտ իմ մանկունակ,
Մէկուն հազար գովք, ծաղիկ շաղ կու տան,
Միւսին զըլանան բարի խօսք մ'ըսել,
Ժպիտով բարի զայն ուրախացնել:

.....
Թոչունը կ'երգէր գարունն ու սէրը,
Ծաղկած ծառերու հի՛ն, հի՛ն երազը,
Ու թէեւ թելերն վիրաւոր էին,
Ճախրանքը անոնց կը հասներ երկինք...

.....
Գարուն էր, հեքիաթ էր սիրաբոյր,
Որ վառեց հոգոյս մէջ անուրջներ,
Ծաղիկներ գունագեղ, վարդաբոյր,
Արարեց սրտիս մէջ արեւներ...

.....
Եւ կարօտս կ'ահագնանայ,
Տարիներուն հետ բաժանման,
Մէրս շատնայ բազմապատիկ
Կարօտիս հետ անչափելի...

.....
Պատուով անցիր, խիղճով անցիր
Երկու օրուան կեանքի ճամբադ,
Ափսոսալու բան չմնա յ,
Բարի յուշդ թող առկայծի...

.....
Փոքր մարդիկ են հիմա շատ



Հաշիւներով շուկայական,
Ուր տեղ չկայ արդարութեան,
Սկզբունքին, ճշմարտութեան...

Երան Գույումճեան